



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

DIRECTORY
OF INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

2023

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ВЕДОМОСТИ
ИНСТИТУТА ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

2023

Yerevan 2024
Ереван 2024

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

2023

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՏԴ 030

ԳՄԴ 92

Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմողներ՝ Վ. Կատվալյան, Ն. Հովհաննիսյան Գ. Մխիթարյան

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկա-
Հ 247 գիրք2023.– Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2024.-
248 էջ:

Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2022 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների:

Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար:

ՀՏԴ 030

ԳՄԴ 92

ISBN 978-9939-970-03-5

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2024

Երկու խոսք

Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ ԳԱԱ կազմում հայերենագիտության ոլորտի գիտահետազոտական հաստատություն է, որը նաև կազմակերպում է հետբուհական կրթություն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը ընթանում է գիտական չորս ուղղություններով՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր: Ըստ այդմ՝ ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներն են հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտություններ ծավալելը, լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրներ արծարծելը և դրանց լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտական կադրեր պատրաստելը:

Իր գոյության ութ տասնամյակների ընթացքում լեզվի ինստիտուտը գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դերակատարում ունեցել հայերենագիտության և ընդհանրապես լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետների և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն: Ինստիտուտը ձգտում է նպաստել հասարակության լեզվամշակույթի մակարդակը բարձրացնելուն, լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելուն, մայրենին պահպանելուն և տարածելուն, լեզվաքաղաքական խնդիրներ լուծելուն:

Հայոց լեզվի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություն է, իսկ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը երկրում հայերենի հե-

տագոտությամբ զբաղվող հիմնական հաստատությունն է: Այսօր էլ ինստիտուտի գիտական արդյունքները կարևոր ներդրում են հայերենագիտության մեջ, դրանք նաև կարևոր նյութ և աղբյուր են օտար հայագետների, հնդեվրոպաբանների համար:

Լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ տրամադրելու նպատակով շարունակում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակումը: Շարքի չորրորդ հատորը ընդհանուր տեղեկություններ է պարունակում 2023 թվականին ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, ինչպես նաև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ: Տրվում է 2023 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը՝ նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն: Հոդվածների օտարալեզու համառոտ ամփոփագրերը նույնությամբ արտատպվում են համապատասխան գիտական հանդեսներից:

«Տեղեկագրքի» հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կծառայեն ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար:

Կազմողներ

ՄԱՍ I

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2023 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2023թ. ընթացքում լեզվի ինստիտուտում զգալի արդյունքներ են ձեռք բերվել գրաբար-բարբառ առնչությունների քննության ուղղությամբ: «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ.Մխիթարյան) դիտարկվել են գրաբարին բնորոշ բառաքերականական մի շարք իրողությունների համապատասխանություններ, նաև նախագրաբարյան որոշ երևույթների արձագանքներ Ղարաբաղի բարբառում, որը վկայում է հնագույն ժամանակներից Արցախում հայերենի գործածության մասին: Հետազոտությունները որոշակի նյութ են տալիս ոչ միայն բարբառային հայերենի, այլև հայոց լեզվի պատմության որոշ հարցերի պարզաբանման, քերականական տարբեր կարգերի զարգացման յուրահատկությունների լուսաբանման համար: Հետազոտվել են բառապաշարի թեմատիկ մի շարք խմբերի արտահայտություններ հայերենի զարգացման տարբեր փուլերում: Նկարագրվել են բառամիավորների իմաստները, կառուցվածքը և արտահայտման յուրահատկությունները: Բառապաշարի թեմատիկ խմբերի քննությունը կատարվել է լեզվաբանական արդի մոտեցումներով ու եղանակներով: Բառամիավորների՝ որպես օբյեկտիվ իրականության արտահայտման բազմազան ձևերի մեկնաբանությունը ունի նաև ճանաչողական նշանակություն:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Դ. Վ. Կատվալյան) ուշագրավ արդյունքներ են ձեռք բերվել հայերենի բարբառային միավորների ու հատկանիշների համաժամանակյա հետազոտության ուղղությամբ: Հայ բարբառների

ուսումնասիրությունը համալրվել է Սուրմալուի, Սևերեկի, Բասենի, Նախիջևանի խոսվածքների հետազոտությամբ ու նկարագրությամբ, ներկայացվել է Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը: Էական դիտարկումներ են կատարվել բարբառային առանձին միավորների հնչյունական համակարգերի վերաբերյալ: Մեծ ծավալի աշխատանք է կատարվել բառապաշարի իմաստաբանական, բառակազմական իրողությունների վերհանման ու նկարագրության, բառիմաստային թեմատիկ խմբերի ուսումնասիրության ուղղություններով: Հետաքրքրական դիտարկումներ են կատարվել արդի բարբառային լեզվի բայական համակարգի, շարահյուսական իրողությունների վերաբերյալ:

Բ. ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՍՏՅՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (դեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվայան) քննության են առնվել շարահյուսական մի շարք իրողություններ բարբառային հայերենում: Նկատվել է, որ բարբառային խոսքում շարահյուսական իմաստների արտահայտությանը գրական լեզվի համեմատությամբ ավելի գործուն մասնակցություն ունեն այլ միջոցներ ևս (բանաձևային կառույցներ, հնչերանգ, ժխտում և այլն): Կատարվել է «Մասնա Ծոեր» էպոսի՝ Մշո բարբառով գրանցված պատումների բառապաշարի քննություն, արձանագրվել են ժամանակի ընթացքում բարբառի բառապաշարում տեղի ունեցած էական տեղաշարժեր, դիտարկվել են էպոսում ազգային լեզվամտածողության դրսևորման առանձնահատկություններ:

Քննվել են Համշենի բարբառի բառապաշարային որոշ առանձնահատկություններ, անդրադարձ է կատարվել առավել ուշագրավ բաղադրյալ բառերին, իրականության յուրօրինակ ընկալմամբ պայմանավորված բառանուններին: Դիտարկվել են Մշո և Մասնո բարբառների բառանվանողական և բառիմաստային, Շիրակի մարզի խոսվածքների դարձվածքային որոշ իրողություններ:

«Բուսանուններ» իմաստային խմբի ուսումնասիրության շրջանակում կատարվել է Սյունիքի ժողովրդական երգերում, ինչպես նաև տարբեր երկերում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունների քննություն: Կատարվել են տեղանունների և անձնանունների ստուգաբանություններ: Հնչյունական իրողություններ են դիտարկվել գրաբարի, բարբառների, գրական արևելահայերենի համակարգերի համատեքստում: Հետազոտությունների արդյունքները հրապարակվել են մեկ ժողովածուում և շուրջ չորս տասնյակ հոդվածներում ու զեկուցումներում:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ.Մխիթարյան) վեր են հանվել ու մեկնաբանվել լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի մի շարք փոփոխություններ և դրանց կատարման օրինաչափությունները: Կատարվել է XII-XVI դարերի երկերում գործածված օտար ծագման բառերի դասակարգում և ուսումնասիրություն: Դիտարկվել է լատիներենի քերականության ազդեցությունը Ոսկան Երևանցու քերականության մեկնությունների վրա, կատարվել են բնագրային համեմատություններ: Քննվել է միջին հայերենի մասնագիտական բառապաշարը (միջնադարյան բժշկարաններ): Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երեք ժողովածուներում և երկու տասնյակից ավելի հոդվածներում:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Պ. Վ. Համբարձումյան) ուսումնասիրություններ են կատարվել ընդհանուր ու կիրառական և համեմատական ու տիպաբանական լեզվաբանության ոլորտներում: Հետազոտողներն անդրադարձել են լեզվամշակութաբանական հարացույցին և լեզվաբանական նորագույն ուղղություններին: Շարունակվել է հայերենի և տարածաշրջանի լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունը, կատարվել են բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ ստուգաբանական բառարանների մեջ: Հետազոտ-

վել են հայերենի արաբական թուրքերենով միջնորդավորված փոխառությունները: Մատնացույց են արվել հայերենագիտական աշխատություններում արաբական փոխառությունների բնորոշման որոշ անճշտություններ: Կիրառական լեզվաբանության բնագավառում կատարվել է կիրառական և համակարգչային լեզվաբանական խնդիրների քննություն: Շարունակվել են հետազոտությունները հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում: Աշխատանքներ են տարվել երկլեզվության, նյարդալեզվաբանության խնդիրների հետազոտության ուղղությամբ: Հետազոտությունների արդյունքները արտացոլվել են երկու մենագրության մեջ և մեկ տասնյակից ավելի հոդվածներում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ. Ասոյան) ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են արդի հայերենի ձևաբանության ու շարահյուսության մի շարք հարցեր՝ արդի հայերենի լեզվական կանոնի (նորմի) շրջանակում դրանց կազմության և կիրառության առանձնահատկությունների հաշվառմամբ: Քննվել է Մխիթարյանների հայերենագիտական գործունեությունը: Հետազոտվել են հատկական փոխառությունները, հայերենի բժշկագիտական տերմինները, բառապաշարի շերտերի ոճական կիրառությունները: Կատարվում է չբառարանագրված բառերի հավաքման աշխատանք, պատրաստվել են «Նոր բառեր»-ի արևելահայերեն և արևմտահայերեն պրակները: Ուսումնասիրվել են իմաստային նորաբանությունները գրական արևմտահայերենում: Շարունակվում են մշակվել արևմտահայերենի կանոնարկման և հատուկ անունների տառադարձման սկզբունքները: Աշխատանքներ են տարվել ՀՀ ուսումնական հաստատություններում (տարրական դասարաններում) ներգաղթյալների ուսուցման խնդիրները ուսումնասիրելու ուղղությամբ: Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մենագրության մեջ և մոտ մեկ տասնյակ գիտական հոդվածներում:

Գ. ԹԵՄԱՏԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Շիրակի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (ղեկ.՝ Բ.Գ.Պ. Վ.Կատվայան) իրականացվել են դաշտային աշխատանքներ Շիրակի մարզի 60 բնակավայրերում, հավաքվել է ուսումնասիրության համար անհրաժեշտ բավականաչափ նյութ: Շիրակի մարզի բնակավայրերի խոսվածքներում դիտարկվել են հնչյունաբանական, բայական հիմքակազմության, բայասեռերի դրսևորման մի շարք հետաքրքրական իրողություններ: Կատարված աշխատանքների արդյունքները ներկայացվել են թեմատիկ ծրագրի շրջանակում կազմակերպված «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովում:

«Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Ս. Սարգսյան) ուսումնասիրվել են բազմալեզու միջավայրում լեզուների ուսուցմանը վերաբերող հարցերը, քննվել են հայերենը՝ որպես երկրորդ կամ օտար լեզու ուսուցանելու խնդիրները Լեհաստանում և Փարիզում, մշակվել են հայերենի իմացության մակարդակների վերջնարդյունքներ՝ ըստ միջազգային ընդունված ստանդարտի (A, B, C):

«Հայերենի բառապաշարի ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» թեմատիկ ծրագրով (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Ս. Սարգսյան) խմբագրվել և սրբագրվել է նախորդ փուլերում մշակված տվյալների շտեմարանը և համապատասխան ծրագրաշարը, վերջնական տեսքի է բերվել <https://formlang.am/hy> համացանցային կայքը: Մշակվել է կայքի վերլուծական համակարգ, ներդրվել է Google որոնողական համակարգի վերլուծական ծառայություն, որը հավաքում է կայքի այցելուների մասին վիճակագրությունը: Նախագծի շրջանակում տպագրվել է «Հայերենի անանցների բառարանը»:

Գ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ակադեմիայի և Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիմնադրման 80-ամյակի առիթով «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ.Մխիթարյան) կազմվել է «Հայոց պատմության դրվագներ (V-VII դարեր)» ժողովածուն: Այն ներկայացնում է հայ պատմիչների երկերում արձանագրված իրադարձությունները, որոնք վճռորոշ են եղել մեր ժողովրդի պատմության համար: Գրաբար-աշխարհաբար զուգահեռ տարբերակներով գիրքը ունի ինչպես ճանաչողական, այնպես էլ կրթադաստիարակչական կարևոր նշանակություն:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Գ. Վ. Կատվայան) թվայնացվել են Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի շուրջ 500 բարբառային տարբերակներ, որոնք ներառված են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով անցյալ դարի վերջին քառորդում և 21-րդ դարի սկզբներին կատարված գրանցումներում: Հրապարակման պատրաստվող գիրքը ունի գիտական, կրթական, ճանաչողական մեծ կարևորություն:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Թ. Ասոյան) հրապարակման են պատրաստվել «Նոր բառեր»-ի մեկական պրակներ՝ արդի գրական արևելահայերենի և արևմտահայերենի գործառական տարբերակներից քաղված նյութի ընդգրկումով:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2022» գիրքը, որը ներկայացնում է 2022թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների հրապարակած գիտական աշխատանքների մատենագիտական ցանկերը և հրապարակումների ընդհանուր բովանդակությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն):

Ե. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Թելյան Լ. Գ., Հայերենագիտական ուսումնասիրություններ: Հոդվածների ժողովածու, ԼԻ հրատ., 2023, 186 էջ:
2. «Լեզու և լեզվաբանություն», 1(28), Ե., ԼԻ հրատ., 2023, 122 էջ:
3. Համբարձումյան Վ.Գ., Հայ միջնադարյան երկլեզվյան բառացանկերի նմուշների լեզվի քննություն, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2023, 198 էջ:
4. Նոր բառեր, պրակ Ը (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Բաղդասարյան Վ.Ս., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի.Ա., Մկրտումյան Ա.Ա., Սարգսյան Ն.Ս.), Ե., ԼԻ հրատ., 2023, 140 էջ:
5. «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, 113 էջ:
6. «Ջահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, 113 էջ:
7. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց» (աշխարհաբար թարգմանություն), Երուսաղեմ, Սրբոց Յակոբեանց տպարան, 2023, 1010 էջ:
8. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2022, Ե., ԼԻ հրատ., 2023, 255 էջ:
9. Kumunts M.S., The Historical and Cultural Heritage of the Nagorno-Karabakh Conflict Zone, Yerevan, "VoskanYerevantsi" pub., 2023, 263 p.
10. Սարգսյան Մ.Ա., Համբարձումյան Վ.Գ., Միքայելյան Ս.Ա., Բաղդասարյան Ս.Ե., Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում, Ե., «Արմավ» հրատ., 160 էջ:
11. Սարգսյան Մ.Ա., Ասիլբեկյան Շ.Հ., Բաղդասարյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Հայերենի ածանցների բառարան, Ե., «Արմավ» հրատ., 102 էջ:

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ**

Արդի հայերենի հետազոտություններ (գիտական հոդվածների ժողովածու) Պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 91 էջ

<https://language.sci.am/hy/electronic-publications/ardi-hayereni-hetazotowtyownner-gitakan-hodvatsneri-zhoghovatsow-prak-b.html>

Բառագիտության արդի խնդիրներ, Ե., ԼԻ հրատ., 2023, 110 էջ

<https://language.sci.am/hy/electronic-publications/barhagitowtyan-ardi-khndirner.html>

Բարբառագիտական հետազոտություններ, Պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 293 էջ

https://language.sci.am/sites/default/files/barbarhagitakan_hetazotowtyownner_prak_b.pdf

Գիտական հոդվածների ժողովածու (2013-2023), Ե., ԼԻ հրատ., 2023, 125 էջ

<https://language.sci.am/hy/electronic-publications/gitakan-hodvatsneri-zhoghovatsow-2013-2023.html>

Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Բնագրային համաբարբառ, Կազմ. Օ. Խաչատրյան, Ե., ԼԻ հրատ., 2023, 458 էջ

<https://language.sci.am/hy/concordance/grigor-narekatsi-tagher-ew-gandzer.html>

Խաչատրյան Օ.Մ., Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր»-ի հաճախականության բառարան, Ե., ԼԻ հրատ., 2023, 71 էջ:

https://language.sci.am/sites/default/files/grigor_narekatsow_tagher_ew_gandzer_1.pdf

Կիրառական լեզվաբանության հարցեր, պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 160 էջ

https://language.sci.am/sites/default/files/kirarhakan_lezvabanowtyan_hartser_prak_b.pdf

Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր, պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 173 էջ <https://language.sci.am/hy/news/hayots-lezvi-patmakan-owsowmnasirowtyan-hartser-prak-b.html>

«Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2023, 183 էջ
https://language.sci.am/sites/default/files/hlp_-_gitazhoghovi_nyowter_07.12.pdf

Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2023, 278 էջ:

https://language.sci.am/sites/default/files/hayots_lezvi_owsowmnasir_owtyan_ardi_khndirner.pdf

Հայոց պատմության դրվագներ (V-VI դարեր), Ե., ԼԻ հրատ., 2023, 134 էջ

https://language.sci.am/sites/default/files/book/hayoc_patmutyan_dr_vagner.pdf

«Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ԼԻ հրատ., 2023, 103 էջ

https://language.sci.am/sites/default/files/shirake_hayots_barh_ow_bani_gandzaran_1.pdf

**ԳՐԱՆՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ
 ԳՐԱՆՈՍՎՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ
 ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ**

1. Առաքելյան Կ.Լ., Արշակ Չոպանյանի դիմանկարի լեզուն, «Էջմիածին», Գ, 2023, էջ 97-104:
2. Առաքելյան Կ.Լ., Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խստտովանիմ» աղոթքի լեզվաոճական առանձնահատկությունները, «Էջմիածին», Ը, 2023, էջ 163-176:

3. Առաքելյան Կ.Լ., Ժողովրդական հեքիաթները Հովհաննես Թումանյանի և Նշան Պեշիկթաշյանի մշակումներում, Հովհ. Թումանյանի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Հայկառլի» հրատ., 2023, էջ 265-280:
4. Ասոյան Թ.Ա., Ժողովրդական էպոսը որպես ազգային լեզվամտածողության արտահայտման հիմնական միջոց, Գավառ, «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 108-124:
5. Ասոյան Թ.Ա., Հայ մեծ հայագետ լեզվաբանը, Ե., «Գիտության աշխարհում», N 2, «Գիտություն» հրատ., 2023, էջ 22-29:
6. Avetyan S.R., Main Factors Conditioning the Absence of the Final *Ը* and the Origin of the Final *Ի* of the Imperative Singular in Armenian Dialects, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N1, ԵՊՀ հրատ., 2023., էջ, 68-78:
7. Avetyan S.R., On One Important Peculiarity of the Imperative Singular in the Dialect of Ararat Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N3, ԵՊՀ հրատ., 2023, էջ 30-38:
8. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում, «Բանբեր հայագիտության», 1(31), «Գիտություն» հրատ., Ե., 2023, էջ 184-193:
9. Բարսեղյան Ա.Գ., Բանաստեղծական խոսքի կապակցման միջոցների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N3 (669), «Գիտություն» հրատ., 2023, էջ 190-198:
10. Գևորգյան Գ.Գ., Հայերենի եղանակային իմաստների դրսևվորումները՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիվ 1-12, Մխիթարեան հրատ., 2023, էջ 57-66:
11. Gevorgyan G. G., Observations on Synchronous and Diachronic Manifestations of Constructions of the Present Tense, Gori, N 6, "Philological Researches", 2023, p. 54-58.

12. Grigoryan S. M., Meaning Movements of Legal Concepts (Narrowing, Expansion or Individual Application) in the Works of Grigor Tatevatsi, Kutaisi, "Language and Culture", N 28, 2023, p. 39-42:
13. Դալայան Ս.Ս., Դավթյան Դ.Հ., Արեւիքի (Մեղրու շրջանի) տեղանունները/ գյուղանունները. աղբյուրագիտական և լեզվական դիտարկումներ, «Արեւիք» Մեղրի պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ՀԱԻ հրատ., էջ 49-51:
14. Դալայան Ս., Ղոեջյան Լ., Ռոզա Գրիգորյան. կյանքը և գիտական գործունեությունը, Ե., ԼՀԳ, 2023, թիվ 3 (667), էջ 146-158:
15. Թորոսյան Հ.Վ., Անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային-քերականական առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում, Ե., Հանրապետական գիտաժողով՝ նվիրված հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցությանը, Հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 93-99:
16. Խաչատրյան Ա.Ս., ՍԹԵՄ կրթությունը դպրոցից բուհ համակարգում. Որակի բարելավման մեխանիզմները, Ե., «Կրթությունը 21-րդ դարում», հ. 2(10), ԵՊՀ հրատ., 2023, էջ 18-25:
17. Խաչատրյան Հ.Ռ., Բարբառային որոշ իրողություններ «Սասնա ծռեր» վիպերգի պատումներում, Գավառ, «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 274-295:
18. Катвалян В.Л., Хачатрян Л.М., Основные направления развития современной армянской лингвистики, Москва, "Филологические науки. Научные доклады высшей школы", вып. 4, 2023, с. 3-9.
19. Հովհաննիսյան Լ.Շ., Մանուկ Աբեղյանը և հայերենի ուղղագրության հարցը, Ե., Հուշարձան Մանուկ Աբեղյանին, ԵՊՀ հրատ., 2023, էջ 182-186:

-
20. Հովհաննիսյան Ն.Գ., Նորակազմ բայեր ԺԲ.-ԺԶ. դարերից ասանդուած ձեռագիր բառարաններում, «Էջմիածին», Է, 2023, էջ 65-78:
21. Հովհաննիսյան Ն.Գ., Հումանշությունն ըստ միջնադարի հայ քերականների, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (41), Ե., ԵՊՀ հրատ., 2023, էջ 75-82:
22. Մեսրոպյան Հ.Հ., Սյունիքի ժողովրդական երգերում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, Ե., «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ», Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, «Արմավ» հրատ., էջ 348-357:
23. Մեսրոպյան Հ.Հ., Արևիքի տարածաշրջանի բույսերի անուններն ըստ Ղևոնդ Ալիշանի «Միսական» տեղագրության և դրանց բարբառային համարժեքները, «Արևիք» Մեղրի պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀԱԻ հրատ., էջ 76-77:
24. Մեսրոպյան Հ. Հ., Նոր Ջուղայի հայկական գրադարանների մասին, Ե., «Բանբեր Հայաստանի գրադարանների», N 1, ՀԱԳ հրատ., 2023, էջ 53-56:
25. Մեսրոպյան Հ.Հ., Բարբառային նիւթերը «Արարատ» հանդեսի էջերում, «Էջմիածին», Դ., 2023, էջ 101-113:
26. Մեսրոպյան Հ. Հ., Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի հայերենագիտական գործունեությունը, Ե., «Կիլիկիո հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս», ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 293-307:
27. Մեսրոպյան Հ. Հ., Ներսես Շնորհալու հանելուկներում գործածված բուսանունների իմաստային-այլաբանական առանձնահատկությունները, «Էջմիածին», Ը, 2023, էջ 84-105:
28. Մեսրոպյան Հ.Հ., Խաչատուր Թամրազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» գրքի ներածություն, «Լուսակն» հրատ., 2023, էջ 1-38:

29. Միքայելյան Ս., Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը ըստ լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 2 (65), Ե., 2023, էջ 155-164:
30. Մկրտչյան Մ.Ս., Թարգմանության հաղորդակցական կերպը (Յուրի Լոտմանի հաղորդակցության տեսության լույսի ներքո), Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», 1 (66), Ե., 2023, էջ 101-115:
31. Մկրտչյան Մ.Ս., Մուլթիկոդիվն ու օբյեկտիվն իբրև հակադրության դրսևորում. նոր հայացք դասական մոտեցումներին, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 3 (42), ԵՊՀ հրատ., 2023, էջ 110-122:
32. Մկրտումյան Ա.Ա., Բառակերտումները Թադևոս Տոնոյանի չափածո գործերում, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 1, ԱրՊՀ հրատ., 2023, էջ 37-45:
33. Մկրտումյան Ա.Ա., *ՄԳԸ(Ո)-, ԷԿ(Ո)-, ԷՆ(Ո)-* օտար բաղադրատարրերով կազմությունները հայերենում, Վանաձոր, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր. հումանիտար և հասարակական գիտություններ», N1, ՎՊՀ հրատ., էջ 38-52:
34. Ներսիսյան Վ.Ա., Հինհայերենյան լեզվական իրողությունների ուսումնասիրման նշանակությունը բուհի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում, Ե., «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 993-1000:
35. Պապիկյան Ս.Վ., Ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունների քննություն, ՎԷմ, 4, Ե., 2023, էջ 325-338:
36. Sargsyan M.A., Digital Linguistics as a new Direction in Language Study: Development Prospects, Yerevan, "Kachar", N 2, «Արթուր Գրիգորյան» ԱԶ հրատ., 2023, p. 36-47:

37. Sargsyan N.M., Noun Forming Affixes in Modern Armenian, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հասարակական գիտություններ», պրակ 1, ԱրՊՀ հրատ., 2023, էջ 109-116:
38. Վարդանեան Ա.Վ., Խաչատրեան Ա.Ս., *Հերիքնագ* անձնանունան ստուգաբանությունը, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», հ. 1-12, Մխիթարեան հրատ., 2023, էջ 67-72:
39. Vardanyan A.V., Review of the Book by V.Katvalyan "Dictionary of Bayazet", Ե., «Պատմաբանասիրական հանդես», հ. 1, «Գիտություն» հրատ., 2023, էջ 271-273:
40. Վարդանյան Ա.Վ., Փահլևանյան Ա., Ժողովրդական «Սարի աղջիկ» երգի ազգային պատկանելության շուրջ, Արվեստագիտական հանդես, 1, 2023, էջ 137-150:
41. Քումունց Մ.Ս., Նախահայերենի «Ժամանակ» հասկացության բառաիմաստաբանական խմբի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախի բարբառների), Ե., «Դպրատուն. հասարակական գիտություններ», N 1 (15), «Դիզակ պլուս» հրատ., 2023, էջ 100-111:
42. Քումունց Մ.Ս., Ներսիսյան Լ.Ռ., Մկրտումյան Ա.Ս., Արաբական ծագմամբ փոխառյալ բառերով բայերի տեսական և կիրառական հարցեր, Ե., ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր», N 2 (45), ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 67-70:
43. Kumunts M.S., Margaryan I.A., Nersisyan L.R., Semantic and Formal Image of Concepts Related to "Sensory Perceptions" Preserved from the Indo-European Language in the Dialect Area, Yerevan, "Wisdom", N 1 (25), ASPU pub., 2023, p. 189-202.
44. Ֆելեքյան Մ.Հ., Տիոյան Ս.Կ., Արևմտահայերենի նորաբանությունների բառարանագրման առանձնահատկությունները, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», N 1 (60), ԵՊՄՀ հրատ., 2023, էջ 14-24:

***Հոդվածները հրատարակվել են «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսում, 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, 83 էջ:**

Սարգսյան Մ.Ա., Էդուարդ Աղայանը արդի հայագիտության նվիրյալ, էջ 3-10:

Մինոնյան Ն.Մ., Բ.Աղայանը բառագետ, ստուգաբան, էջ 11-17:

Սարգսյան Մ.Ա., Համբարձումյան Վ.Գ., Միքայելյան Ս.Ա., Բաղրամյան Ս.Ե., Հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները Լեհաստանի հայ համայնքում, էջ 87-96:

Միքայելյան Ս.Ա., Հայերենում պարսկերենի միջնորդությամբ կատարված փոխառությունների հնչյունական առանձնահատկություններ, էջ 64-76:

Գրիգորյան Գ.Գ., Հայերենի ուժգնության և տևողության փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում, էջ 77-86:

Խաչատրյան Հ.Ռ., Համշենի բարբառին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն (գրախոսություն), էջ 97-101:

***Հոդվածները հրատարակվել են «Ձահուկյանական ընթերցումներ» գիտական հանդեսում, 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, 113 էջ.**

<https://language.sci.am/hy/jahukyan-readings/jahowkyanakan-entertsowmner-2023-19.html>

1. Grigoryan G.G., Changes of the Duration, Intensity and Pitch of the Definite Article [ə] in Spoken Language, p. 5-13.

2. Խաչատրյան Հ. Ռ., Մկրտումյան Ա.Մ., Սահակյան Ն.Գ., Համշենի բարբառի բաղադրյալ կազմությունների իմաստային դրսևորումները, էջ 14-32:

3. Կատվայան Վ. Լ., Սուրմալուի գավառի հայերենի խոսվածքների մասին, էջ 33-44:

4. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, էջ 45-49:

5. Ներսիսյան Վ. Ա., Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի աշխատություններում, էջ 50-69:

6. Վարդանյան Ա. Վ., Նախիջևան քաղաքի խոսվածքը, էջ 70-82:
7. Mkhitarian G. M., The Researchers of the H. Acharyan Institute of Language of NAS RA at the XII International Conference of Armenian Linguistics (Boston, May 31 to June 2), p. 99-101.
8. Katvalyan V. L., About 500 Dialect Versions of H. Tumanyan's Fairy Tale "The Liar" in One Book, p. 102-103.
9. Mkhitarian G. M., A Compendium of Armenian Bibliography (V-VII Centuries), p. 104-106.
10. Tioyan S. K., Kheblikian Z. G., Western Armenian in Armenia, p. 107-108.

***Հոդվածները հրատարակվել են «Չահուկյանական ընթերցումներ» գիտական հանդեսում, 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, 113 էջ.**

<https://language.sci.am/hy/jahukyan-readings/jahowkyanakan-entertsowmner-2023-20.html>

1. Katvalyan V. L., Gharibyan A. K., Some Peculiarities of Manifestation of National Language Thinking in the Epic "Sasna Tsrer", p. 5-12.
2. Mkhitarian G. M., The Influence of Bible Translation in the Preservation and Development of the Armenian Language, p. 13-25.
3. Gevorgyan G. G., General Characteristics of the Language Features of the City of Sebastia, p. 26-34.
4. Khachatryan H. R., Lexical Features of Hamshen Dialect, 35-49.
5. Vardanyan A. V., Armenian-Iranian Language Correlations in the Agulis Dialect and Etymology of the Name of the Armenian Ethnic Group "Zok", p. 50-64.
6. Վարդանյան Ա.Վ., Նախիջևանի բարբառային համապատկերը, էջ 65-76:

***Հոդվածները հրատարակվել են «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2023, 103 էջ.**

https://language.sci.am/sites/default/files/shirake_hayots_barh_ow_bani_gandzaran_1.pdf

1. Բառնասյան Ջ. Ա., Շիրակի բարբառային խոսքի դարձվածքների շուրջ, էջ 11-16:
2. Խաչատրյան Հ. Ռ., Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում Շիրակի մարզում (հնչյունական համակարգ), էջ 26-36:
3. Կատվալյան Վ. Լ., Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը, էջ 67-74:
4. Վարդանյան Ա. Վ., Ժողովրդական «Սարի աղջիկ» երգը որպես Կարնո թուրքալեզու հայ բանահյուսության նմուշ, էջ 94-101:

***Հոդվածները հրատարակվել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2023, 278 էջ.**

https://language.sci.am/sites/default/files/hayots_levi_owsowmnasirowtyan_ardi_khndirner.pdf

1. Սուքիասյան Հ.Վ., Հետաձգված խոսք ուսուցչիս, էջ 3-8:
2. Ասոյան Թ.Ա., Էդուարդ Աղայանը և հայերենի հոլովման համակարգի հարցերը, էջ 47-53:
3. Բառնասյան Ջ. Ա., Էդ. Աղայանի դիտարկումները հայոց հին ամսանունների հարցի շուրջ, էջ 64-69:
4. Գալստյան Ա. Ս., Արդի հայերենի նորակազմ բառերի դասակարգման և իմաստակառուցվածքային քննության հարցեր, էջ էջ 70-73:

5. Թելյան Լ. Գ., Շարահյուսության հիմնական միավորը Է. Աղայանի մեկնաբանությամբ, էջ 106-113:
6. Խաչատրյան Վ. Մ., Գոյականի հոգնակիակազմության շեղումներն արդի հայերենում. կանոնարկման առաջարկներ, էջ 131-144:
7. Կատվայան Վ. Լ., Է. Աղայանը բարբառների մասին, էջ 145-152:
8. Հակոբյան Ֆ. Ա., Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ, էջ 153 -161:
9. Ներսիսյան Վ. Ա., Բատիկյան Թ., Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում, էջ 197-205:
10. Պապիկյան Ս. Վ., Ժամանակակից հայերենի բառապաշարի քննությունն ըստ Էդ. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության, էջ 215-220:
11. Վարդանյան Ա.Վ., *Լաչին* տեղանվան ստուգաբանությունը, էջ 254-259:

***Հոդվածները հրապարակվել են «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., ԼԻ հրատ., 2023, 173 էջ.**

https://language.sci.am/sites/default/files/hlp_-_gitazhoghovi_nyowter_07.12.pdf

1. Կատվայան Վ.Լ., Հայերենի Ը ձայնավորի մասին, էջ 5-10:
2. Մխիթարյան Գ.Մ., Գոյականի սեռի քերականական կարգին առնչվող իրողություններ հայերենում, էջ 11-18:
3. Հովհաննիսյան Լ. Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի շուրջ, էջ 19-20:

4. Գրիգորյան Ս.Մ., Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունները հայերենի բառարաններում, էջ 58-67:
5. Թադևոսյան Հ.Մ., Դիտարկումներ միջնադարյան բժշկարաններում կիրառված որոշ իմաստային դրսևորումների վերաբերյալ, էջ 78-86:
6. Խաչատրյան Վ.Ս., Բարբառային բառեր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում, էջ 87-103:
7. Hakobyan F. A., Corpus Linguistics in the Study of Old Armenian, p. 104-110.
8. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանունները, էջ 121-122:
9. Հովհաննիսյան Ն.Գ., Նորակազմ բառեր XII- XIII դարերից ավանդված ձեռագիր բառարաններում, էջ 123-132:
10. Մարաշլեան Յ.Գ., Խպլիկեան Զ.Գ., Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ, էջ 133-136:
11. Վարդանյան Ա.Վ., Ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանուններ հայերենի բարբառներում, էջ 173-182:

***Հոդվածները հրապարակվել են Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուում, Ե., N 14, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, 511 էջ:**

1. Ասոյան Թ.Ա., Լեզվի հարցերը Մխիթարյանների «Եւրոպա» պարբերականում, էջ 217-233:
2. Ղամոյան Լ.Ա., Բառաբարդումը «Հագուստ» իմաստային դաշտում, էջ 297-309:
3. Ներսիսյան Վ.Ա., Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, էջ 249-268:
4. Պապիկյան Ս.Վ., Թյուրքական ծագման հասկական փոխառությունների քննություն, էջ 310-320:

***Հողվածները հրապարակվել են Գավառի պետական
համալսարանի գիտական հողվածների ժողովածուում, Ե.,
N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, 557 էջ:**

1. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների հայերենագիտական գործունեությունը Էդ. Աղայանի գնահատմամբ, էջ 282-298:
2. Ասոյան Թ.Ա., Միակազմ նախադասությունների ոճական արժեքը Համո Սահյանի «Ինձ բացակա չղնեք» ժողովածուում, էջ 299-309:
3. Կատվայան Վ.Լ., Բարբառային հայերենի շարահյուսական որոշ առանձնահատկությունների շուրջ, էջ 310-320:
4. Ներսիսյան Վ.Ա., Ավետիսյան Ե., Նախադասության ուսումնասիրման դերը կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման գործում, էջ 321-322:
5. Ներսիսյան Վ.Ա., Իգնաթևոսյան Ն., Բառակազմության ուսումնասիրումը որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման միջոց, էջ 333-344:

ՄԱՍ II

**ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
2023 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝
ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

2023 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թեյյան Լ.Գ., Հայերենագիտական ուսումնասիրություններ:
Հոդվածների ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, 186 էջ:

ԲԱՌԱՐԱՆ

Նոր բառեր, պրակ Ը (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Բաղդասարյան Վ.Ս., Հակոբյան Ֆ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի.Ա., Մկրտումյան Ա.Ա., Սարգսյան Ն.Ս.), Ե., ԼԻ հրատ., 2023, 140 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Արդի հայերենի հետազոտություններ (գիտական հոդվածների ժողովածու) Պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 91 էջ:

Բառագիտության արդի խնդիրներ, Ե., ԼԻ հրատ., 2023, 110 էջ:

Գիտական հոդվածների ժողովածու (2013-2023), Ե., ԼԻ հրատ., 2023, 125 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Արշակ Չոպանյանի դիմանկարի լեզուն, «Էջմիածին», Գ, 2023, 97-104:

2. Առաքելյան Կ.Լ., Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի լեզվաոճական առանձնահատկությունները, «Էջմիածին», Ը, 2023, էջ 163-176:

3. Առաքելյան Կ.Լ., Ժողովրդական հեքիաթները Հովհաննես Թումանյանի և Նշան Պեշիկթաշյանի մշակումներում, Հովհ. Թումանյանի հիշատակի 100-րդ տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Հայկառլի» հրատ., 2023, էջ 265-280:

4. Ասոյան Թ.Ա., Ժողովրդական էպոսը որպես ազգային լեզվամտածողության արտահայտման հիմնական միջոց, Գավառ, «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 108-124:

5. Ասոյան Թ.Ա., Հայ մեծ հայագետ լեզվաբանը, Ե., «Գիտության աշխարհում», N 2, «Գիտություն» հրատ., 2023, էջ 22-29:

6. Ասոյան Թ.Ա., Էդուարդ Աղայանը և հայերենի հոլովման համակարգի հարցերը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 47-53:

7. Ասոյան Թ.Ա., Լեզվի հարցերը Մխիթարյանների «Եւրոպա» պարբերականում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 14, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 217-233:

8. Ասոյան Թ.Ա., Մխիթարյանների հայերենագիտական գործունեությունը Էդ. Աղայանի գնահատմամբ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 282-298:

9. Ասոյան Թ.Ա., Միակազմ նախադասությունների ոճական արժեքը Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» ժողովածուում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 299-309:

10. Բարսեղյան Ա.Գ., Շարահյուսական կապակցության եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում, Ե., «Բանբեր հայագիտության», 1(31), «Գիտություն» հրատ., 2023, էջ 184-193:

11. Բարսեղյան Ա.Գ., Բանաստեղծական խոսքի կապակցման միջոցների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N3 (669), «Գիտություն» հրատ., 2023, էջ 190-198:

12. Գալստյան Ա. Ս., Արդի հայերենի նորակազմ բառերի դասակարգման և իմաստակառուցվածքային քննության հարցեր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., էջ 70-73:

13. Թեյլան Լ. Գ., Շարահյուսության հիմնական միավորը Է. Աղայանի մեկնաբանությամբ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., էջ 106-113:

14. Խաչատրյան Ա.Ս., ՍԹԵՄ կրթությունը դպրոցից բուհ համակարգում, որակի բարելավման մեխանիզմները, Ե., «Կրթությունը 21-րդ դարում», հ. 2(10), ԵՊՀ հրատ., 2023, էջ 18-25:

15. Հակոբյան Ֆ. Ա., Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 153 -161:

16. Ղամոյան Լ.Ա., Բառաբարդումը «Հագուստ» իմաստային դաշտում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 14, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 297 -309:

17. Սարաշլեան Յ.Գ., Խալիկեան Զ.Գ., «Արեւմտահայերէն խօսքը Հայաստանի մէջ, «Հայոց լեզվի պատմության հիմնա-

խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 133-136:

18. Սկրտումյան Ա.Ա., Բառակերտումները Թադևոս Տոնոյանի չափածո գործերում, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 1, ԱրՊՀ հրատ., 2023, էջ 37-45:

19. Սկրտումյան Ա.Ա., *ԱԳԸ(Ո)-, ԷԿ(Ո)-, ԷՆ(Ո)-* ժողովրդագրատարբերով կազմությունները հայերենում, Վանաձոր, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր. հումանիտար և հասարակական գիտություններ», N1, ՎՊՀ հրատ., էջ 38-52:

20. Ներսիսյան Վ. Ա., Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի աշխատություններում, «Զահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 50-69:

21. Ներսիսյան Վ.Ա., Հինհայերենյան լեզվական իրողությունների ուսումնասիրման նշանակությունը բուհի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում, Ե., «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 993-1000:

22. Ներսիսյան Վ. Ա., Բատիկյան Թ., Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., էջ 197-205:

23. Ներսիսյան Վ.Ա., Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 14, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 249-268:

24. Ներսիսյան Վ.Ա., Ավետիսյան Ե., Նախադասության ուսումնասիրման դերը կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման գործում, Գավառի պետական համալսարանի գիտական

հողվածների ժողովածու, Ե., N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 321-322:

25. Ներսիսյան Վ.Ա., Իզնաթևոսյան Ն., Բառակազմության ուսումնասիրումը որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման միջոց, Գավառի պետական համալսարանի գիտական հողվածների ժողովածու, Ե., N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 333-344:

26. Պապիկյան Ս.Վ., Ժամանակակից հայերենի բառապաշարի քննությունն ըստ Էդ. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., էջ 215-220:

27. Պապիկյան Ս.Վ., Թյուրքական ծագման հատկական փոխառությունների քննություն, Գավառի պետական համալսարանի գիտական հողվածների ժողովածու, Ե., N 14, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 310-320:

28. Պապիկյան Ս.Վ., Ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունների քննություն, ՎԷԼ, 4, Ե., 2023, էջ 325-338:

29. Սուքիասյան Հ.Վ., Հետաձգված խոսք ուսուցչիս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 3-8:

30. Sargsyan N.M., Noun Forming Affixes in Modern Armenian, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. հասարակական գիտություններ», պրակ 1, ԱրՊՀ հրատ., 2023, էջ 109-116:

31. Tiouyan S. K., Kheblikian Z. G., Western Armenian in Armenia, «Ջահուկյանական ընթերցումներ», 1(19), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 107-108.

32. Ֆելեքյան Մ.Հ., Տիոյան Ս.Կ., Արևմտահայերենի նորաբանությունների բառարանագրման առանձնահատկությունները, Ե.,

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Առաքելյան Կ., Արշակ Չոպանյանի դիմանկարի լեզուն (հոդված)

Հոդվածում ներկայացվում են ժանրի առանձնահատկությունները: Նշվում է, որ գրական դիմանկարը ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության մեջ ունի ուրույն դեր, նշանակություն և հետաքրքիր զարգացում: Արևմտահայ բազմաթիվ գրողներ ու բանաստեղծներ անդրադարձել են այս ժանրին: Արևմտահայ գրականության մեջ այն ունեցել է մեկ այլ ուղղվածություն՝ երգիծական, իսկ երգիծական դիմանկարը կատարելության են հասցրել արևմտահայ ականավոր երգիծաբաններ Հակոբ Պարոնյանը և Երվանդ Օտյանը:

Հոդվածագիրը փաստում է, որ արևմտահայ գրողների, նաև երգիծաբանների ավանդները շարունակել է ֆրանսահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշյանը, որն առավել հայտնի է իբրև երգիծաբան: Ի թիվս բազմաթիվ այլ ստեղծագործությունների՝ Պեշիկթաշյանը նոր շունչ է հաղորդել գրական - երգիծական դիմանկարին, որի ապացույցն են նրա հեղինակած հարյուրից ավելի դիմանկարները, որոնց մեջ իր առանձնահատուկ տեղն ունի անվանի հրապարակախոս, քննադատ Արշակ Չոպանյանի դիմանկարը: Այն ինքնատիպ է տարբեր առումներով: Ճնշող մեծամասնությամբ ծաղրանկարների հերոսները՝ երգիծվող անձինք, արժանանում են հեղինակի քննադատությանը, հաճախ շատ սուր և կծու հեզնանքին, մինչդեռ Չոպանյանի դիմանկարում առկա է հումորային տրամադրություն և խորին հարգանք ու հիացմունք բազմաթյուն գործչի հանդեպ: Չոպանյանի դիմանկարը բավական ծավալուն է և աչքի է ընկնում մի շարք արժանիքներով, որոնցից մեկն էլ ճոխ

լեզուն է և զարմանալի պատկերավոր խոսքը. դրան նպաստել են լեզվական տարբեր միջոցների հմուտ կիրառությունները:

Հոդվածում քննվում են դիմանկարում առկա չափազանցությունները, փոխաբերությունները, կրկնությունները, համեմատությունները, դարձվածքները՝ իրենց տարբերակներով, արժևորվում են դրանց ոճական արժեքը և երգիծաստեղծ դերը: Նշվում է, որ ոճական առումով այս միավորների հնարավորություններն ահռելի են, և հաճախ սրանց առկայությամբ են պայմանավորվում խոսքի արտահայտչականությունը, հագեցվածությունը, ազդեցիկությունը և այլն:

**Առաքելյան Կ., Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով
խոստովանիմ» աղոթքի լեզվաոճական
առանձնահատկությունները (հոդված)**

Հոդվածագրի հավաստմամբ՝ չափազանց մեծ է հայ հոգևոր, գիտական, գրական, երաժշտական մտքի ամենապայծառ ներկայացուցիչներից մեկի՝ Սուրբ Ներսես Շնորհալու գրական վաստակը. նա եղել է բազմաժանր ստեղծագործող, հարազատ ժողովրդի ժառանգություն է թողել բանաստեղծություններ, պոեմներ, տաղեր, գանձեր, շարականներ, հանելուկներ, թղթեր և այլն: Շնորհալու աղոթքների մեջ առավել հայտնի ու առանձնահատուկ սիրված է «Հաւատով խոստովանիմ»-ը, որը մաս է կազմում Հանգրստյան ժամերգության:

Հոդվածում նշվում է, որ աղոթքում բազմաթիվ են ավետարանական դրվագների հիշատակությունները. յուրօրինակ հետաքրքրություն են ներկայացնում Արարչի բնորոշիչները, որոնք արտահայտված են աղոթքի տասնինը վեցից քսանչորսերորդ տներում: Դրանց մեծ մասը սերտորեն առնչվում է Աստվածաշնչին: Թեև աղոթքը բաղկացած է քսանչորս տնից և ծավալային առումով մեծ չէ, սակայն առկա են բառեր, որոնք ունեն ավելի հաճախակի կիրառություն, ու նաև այդպես է շեշտվում դրանց արտահայտած հասկացությունների կարևորությունը: «Հաւատով խոստովանիմ»

աղոթքը հարուստ է լեզվական ու խոսքային հականիշներով, որոնք նպաստում են ասելիքի ամբողջացմանը: Շնորհալի նկիրառում է տարբեր խոսքի մասերի պատկանող հականիշներ, աղոթքի մեկ տան մեջ երբեմն երկու կամ երեք հականշային գույգեր՝ բոլորը ծառայեցնելով հստակ նպատակի՝ խոսքն առավել ազդեցիկ ու պատկերավոր դարձնելուն: Աղոթքի կարևոր բաղկացուցիչ մաս են խնդրանքներն ու աղաչանքները, և այս առանձնահատկությամբ պայմանավորված՝ առավել գործածական է բայի հրամայական եղանակը. բուն և արգելական հրամայականների միջոցով ստեղծվում են ինքնատիպ հակադրություններ:

Հեղինակի կարծիքով՝ խորը, բազմաշերտ, հարուստ բովանդակությունը արտահայտվում է աղոթքի մատչելի, միաժամանակ ճոխ ու գեղեցիկ լեզվով, պատկերավորման տարբեր միջոցների հմուտ ու տեղին կիրառություններով՝ ստեղծելով ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակություն: Պատահական չէ, որ այն թարգմանվել է հիսուն լեզուներով և իր մնայուն, անխախտ տեղն ունի համաշխարհային հոգևոր մշակույթի գանձարանում:

**Առաքելյան Կ., Ժողովրդական հեքիաթները
Հովհաննես Թումանյանի և Նշան Պեշիկթաշյանի
մշակումներում (հոդված)**

Հոդվածում տեղեկություններ են տրվում հեքիաթի և հեքիաթագիրների մասին: Հայ գրականության մեջ հեքիաթներ մշակել է Հովհաննես Թումանյանը, որի արձակում դրանք ունեն իրենց ուրույն տեղն ու դերը: Հեքիաթների մշակմամբ զբաղվել է նաև սփյուռքահայ անվանի գրող Նշան Պեշիկթաշյանը, որն առավել հայտնի է իբրև երգիծաբան: Պեշիկթաշյանը հեքիաթները մշակել է հիմնականում չափածո՝ երգիծաբանի իր տաղանդն ամբողջությամբ ի սպաս դնելով այս ոչ դյուրին գործին և ստեղծելով հեքիաթի երգիծական մշակման անկրկնելի նմուշներ: Ընդ որում Պեշիկ-

թաշյանը մշակել է մի քանի հեքիաթ, որոնք իրենից առաջ մշակել է Թումանյանը:

Հողվածն անդրադառնում է այն հեքիաթներին, որոնք մշակել են երկու հեղինակները՝ նպատակ ունենալով վերհանել դրանց նմանություններն ու տարբերությունները: Նկարագրական-վերլուծական ու համեմատական մոտեցումներով քննվում են «Անհաղթ արլորը», «Ոսկու կարասը», «Ձախորդ Փանոսի հեքիաթը» և «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ» հեքիաթների դիպաշարային առանձնահատկությունները, սրանցում առկա լեզվական տարբեր իրողությունների, բառապաշարային շերտերի, պատկերավորման և արտահայտչական միջոցների կիրառությունները, իմաստային և ոճական զանազանությունները:

Ըստ հողվածագրի՝ Թումանյանը վերցրել է ժողովրդական հեքիաթի նյութը, մշակել այն և ստեղծել գեղարվեստական, փիլիսոփայական, բարոյագիտական բարձր արժեք: Պեշիկթաշյանը, մշակելով նույն հեքիաթները և վատահաբար օգտվելով Թումանյանի մշակումներից, ամենին չի կրկնել նրան, այլ ստեղծել է հեքիաթի իր չափածո տարբերակը, որում իշխողը երգիծական տարրն է. երգիծանքի միջոցով են վերհանվում և անխնա քննադատվում հասարակության արատները:

Հողվածագիրը նշում է, որ Թումանյանի լեզվին հատուկ է սեղմությունը. այն հետազոտողներն ընկալել են որպես խոսքը ժողովրդականացնելու կարևոր գործոն: Պեշիկթաշյանի խոսքն ավելի ծավալուն է, և դրանում առկա լեզվառճական տարբեր իրողությունների, մասնավորապես պատկերավորման տարբեր միջոցների շնորհիվ հեղինակը ստեղծում է երգիծական տրամադրություն՝ հումորայինից մինչև կծու հեզնանք:

Ասոյան Թ., Լեզվի հարցերը Մխիթարյանների «Երոպա» պարբերականում (հողված)

Հողվածագիրը, ներկայացնելով Մխիթարյանների՝ պարբերական ստեղծելու ուղղությամբ գործադրած ջանքերը, նշում է, որ

նրանց հրատարակած «Բազմավեպ», «Հանդես ամսօրեայ» պարբերականները լույս են տեսնում մինչ օրս: «Եւրոպա» պարբերականը Վիեննայի Մխիթարյանները հրատարակել են 1847-1863 թվականներին:

Հոդվածի նպատակը «Եւրոպա» պարբերականում արծարծված այն հարցերի քննությունն է, որոնք առնչվում են լեզվական խնդիրների: Հոդվածագիրը նկատում է, որ «Եւրոպա»-ն այդպիսի հարցերի անդրադարձել է առաջին շրջանում (1847-1857), իսկ երկրորդում (1858-1863) այդպիսի նյութեր չեն հանդիպում:

Ըստ հոդվածագրի՝ ազգային լեզվին վերաբերող դիտարկումները հաճախ ներկայացվում են հայոց պատմականորեն ձևավորված վիճակի, դաստիարակության, ուսուցման, լեզվի նշանակության, պահպանման և զարգացման, գիտության խնդիրներին զուգահեռ: Կարևորվում են ազգային լեզվի մշակման, մաքրության, հարստացման և կանոնարկման խնդիրները: Անդրադարձ կա նաև ազգային լեզվի նկատմամբ հասարակության դրսևորած անտարբերությանը: Այդ իրողությունը բացատրվում է ժողովրդի ցրվածությամբ, այլոց քաղաքական գերիշխանության ներքո գրտնըվելու հանգամանքով: Գնահատվում են քերականական աշխատությունները, նորատիպ մատյանները, հին ձեռագրերը, սեպագիր արձանագրությունները, հայ մատենագրությունը և այլն: Շատ դեպքերում դիտարկումները կատարվում և անհրաժեշտաբար հիմնավորվում են համեմատական վերլուծություններով:

Հոդվածագրի կարծիքով՝ Մխիթարյաններն իրենց հրատարակումներում ցուցաբերում են հավասարակշռված դիրքորոշում՝ հաշվի առնելով քննվող նյութի առանձնահատկությունը, բնույթը, հասարակական հնչեղությունը, արվում են ողջամիտ և իրատեսական առաջարկություններ՝ ազգային լեզուն սովորելու, գիտությունները զարգացնելու, դասագրքեր կազմելու, դպրոցներ հիմնելու և մայրենի լեզվի հարգը բարձրացնելու նպատակով:

**Ասոյան Թ., Մխիթարյանների հայերենագիտական
գործունեությունը Էդ.Աղայանի գնահատմամբ (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են Էդուարդ Աղայանի դիտարկումները Մխիթարյանների հայերենագիտական գործունեության վերաբերյալ հայ լեզվաբանական մտքի պատմության համատեքստում: Նշվում է, որ Էդ. Աղայանը Մխիթարյանների և մասնավորապես նրանց լեզվաբանական գործունեության մասին առանձին ուսումնասիրություն չի հրատարակել, սակայն իր «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է Մխիթարյաններին՝ ներկայացնելով և գնահատելով նրանց հայերենագիտական աշխատանքները հայերենի զարգացման և հայ լեզվաբանության պատմության տեսանկյուններից: Աշխատության 1-ին հատորում ներկայացված հայ հեղինակների մեծ մասը Մխիթարյան միաբանության վենետիկյան և վիեննական դպրոցների ներկայացուցիչներ են:

Հոդվածում ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ Մխիթարյանները հայոց լեզվի ուսումնասիրությունը կատարում էին ոչ միայն հետապնդելով գիտակրթական նպատակ, այլև ունեին պետական-քաղաքական հայտնի ձգտում, այն է՝ պաշտպանել հայության և հայ պետականության գոյությունը այդ բախտորոշ ժամանակաշրջանում:

**Ասոյան Թ., Միակազմ նախադասությունների ոճական արժեքը
Համո Մահյանի «Ինձ բացակա չղներ» ժողովածուում (հոդված)**

Հոդվածի ներածական մասում խոսվում է գրավոր և բանավոր հաղորդակցման առանձնահատկությունների մասին: Նշվում է, որ հաղորդակցումը հիմնականում իրականացվում է այնպիսի նախադասություններով, որոնց ընդունված է անվանել երկկազմ, և որոնցում առկա են նախադասության գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը: Սակայն հաղորդակցումը կարող է իրականանալ նաև այնպիսի կառույցներով, որոնցում ենթակա և

ստորոգյալ չկան, կա ուղղակի գլխավոր անդամ: Դրանք կոչվում են միակազմ, միաբնեռ կամ միակենսորոն: Հոդվածագիրն ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքին, որ թեև միակազմ նախադասությունների կիրառությունը խոսքում անհամեմատ սահմանափակ է, սակայն դրանք հետաքրքրություն են ներկայացնում թե՛ լեզվական, թե՛ ոճական-կիրառական առումներով: Նշվում է, որ, խոսքային իրավիճակով պայմանավորված, միակազմ կառույցները մեծ հնարավորություն ունեն արտահայտելու մարդկային ապրումներն ու զգացմունքները, ստեղծելու կերպարներ, վիճակներ, բնապատկերներ: Այս առումով միակազմ նախադասությունները ուսումնասիրության նյութ են դառնում տարբեր ստեղծագործությունների հենց լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյունից:

Հոդվածի նպատակն է ցուցադրել միակազմ նախադասությունների լեզվաոճական հնարավորությունները և կարևորությունը՝ ըստ Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» բանաստեղծական ժողովածուի:

Ասոյան Թ., Ժողովրդական էպոսը որպես ազգային լեզվամտածողության արտահայտման հիմնական միջոց (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ լեզուն ոչ միայն գիտությունները ներկայացնելու միակ լիարժեք միջոցն է, այլև ժողովրդի հոգեբանության, պատմության, մշակույթի, ազգային նկարագրի և գոյության արտահայտիչը: Ժողովրդին, ազգին առնչվող այդ իրողությունները կարելի է ցուցադրել լեզվի և մտածողության սերտ միասնության՝ լեզվամտածողության միջոցով:

Հոդվածում քննվում են ազգային լեզվամտածողությանն առնչվող որոշ հարցեր ժողովրդական էպոսների համատեքստում: «Մասնա ծռեր» էպոսը ներկայացվում է որպես ազգային լեզվամտածողության լավագույն և լիարժեք արտահայտություն: Նրա առանձնահատկությունները քննվում են աշխարհի տարբեր ժողո-

վուրդների էպոսների համեմատությամբ: Յույց են տրվում ժողովրդական և հեղինակային էպոսների տարբերությունները՝ դրանք պայմանավորելով երևույթների ժողովրդական և անհատական ընկալումների օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթներով:

Ասոյան Թ., Էդ. Աղայանը և հայերենի հոլովման համակարգի հարցերը (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Էդ. Աղայանի տեսակետը ժամանակակից հայերենի հոլովման համակարգի վերաբերյալ: Նշվում է արևելահայերենի հոլովի քերականական կարգի շուրջ բանավեճերի մասին, որոնք շարունակվում են արդեն մեկ դարից ավելի: Հոլովական ձևի և իմաստի, դրանց շարահյուսական հարաբերություններին առնչվող հարցերը միանշանակ լուծումներ չեն ստացել և տարակարծությունների տեղիք են տվել:

Հոդվածագիրն անդրադառնում է հարցի շուրջ ծավալված բանավեճի հակիրճ պատմությանը, որ սկսվել է 1906 թվականից Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի քերականություն» աշխատության հրատարակմամբ: Նշվում է, որ հոլովների շուրջ տարակարծությունները վերաբերում են նաև գրաբարին և միջին հայերենին այն տարբերությամբ միայն, որ քննարկումները նման հրապարակային բնույթ չեն կրել, այլ արտացոլվել են գրաբարի քերականական կառուցվածքին նվիրված աշխատություններում:

Ըստ հոդվածագրի՝ հոլովման համակարգի շուրջ քննարկումներում շոշափվում է միայն 5 թե 7 հոլով հարցադրումը, չի դիտարկվում 6 հոլովի տեսությունը, որի հեղինակը Էդ. Աղայանն է: Մինչդեռ հոդվածագրի կարծիքով՝ Աղայանի տեսակետը փաստարկված է և ընդունելի կարող է լինել երկու կողմերի համար էլ: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Աղայանի դիրքորոշումը՝ ցույց տալով լեզվաբանի տեսակետի ձևավորման ոչ միանշանակ ընթացքը:

Աստյան Թ., Հայ մեծ հայագետ լեզվաբանը (հոդված)

Հոդվածը մեծ հայագետ, լեզվաբան Էդուարդ Աղայանի գիտական գործունեության սեղմ բնութագրումն է: Նշվում է, որ նա հսկայական ավանդ ունի հայ լեզվաբանության զարգացման մեջ: Նրա գիտական գործունեությունը, կատարած ուսումնասիրությունները լեզվաբանության տարբեր բնագավառներում նշանավորել են հայ լեզվաբանության զարգացման նոր աստիճան: Զբաղվելով ընդհանուր լեզվաբանության, հայ լեզվաբանության պատմության, բարբառագիտության, ստուգաբանության, գրաբարի, ժամանակակից հայերենի, համեմատական քերականության, նախամաշտոցյան գրի ու դպրության գոյության, Արևելքի գրականության պատմության և հարակից այլ հարցերով՝ էդ. Աղայանը մշտապես ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել լեզվական-լեզվաբանական երևույթները քննելիս՝ նորովի մեկնաբանելով բազմաթիվ հնչյունական, բառապաշարային, քերականական իրողություններ, այլ տեսանկյունից դիտարկելով լեզվական փաստերը: Հոդվածում նշված ուսումնասիրությունները ներկայացվում են ըստ առանձին ոլորտների:

Բառագիտության արդի խնդիրներ (հոդվածների ժողովածու)

Ժողովածուն ընդգրկում է բառարանագրության բաժնի աշխատակիցների՝ տարբեր գիտական պարբերականներում 2021-2023 թթ. լույս տեսած հոդվածները: Դրանցում արծարծվում են բառագիտության արդի վիճակը քննող մի շարք հարցեր՝ նվիրված մասնավորապես իմաստաբանության, բառակազմության, նորակազմ բառերի բառաքաղման, բառընտրության առանձնահատկություններին և տարբեր դրսևորումներին հայերենի զարգացման արդի փուլում: Անդրադարձ է կատարվում բառակազմության և նոր բառիմաստների առաջացման տեսական և գործնական հար-

ցերին և հայերենի զարգացման արդի փուլում ի հայտ եկող՝ բառի-մաստի փոփոխության առանձնահատուկ դրսևորումներին:

Բարսեղյան Ա., Շարահյուսական կապակցության Եղանակները Հ. Էդոյանի պոեզիայում (հոդված)

Հոդվածում քննվում են շարահյուսական կապակցության եղանակների՝ համաձայնության, խնդրառության, առդրության դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում:

Փաստական հարուստ նյութի քննությամբ պարզվում է, որ Հ. Էդոյանի պոեզիայում համաձայնության դրսևորումները համապատասխանում են գրական հայերենի օրինաչափություններին: Հոդվածագիրը նշում է, որ Հ. Էդոյանի պոեզիայում առդրության դրսևորումները հաճախ հանդես են գալիս շրջուն շարադասությամբ՝ հատկացուցիչը հատկացյալից, որոշիչը որոշյալից հետադաս են: Դա պայմանավորվում է բանաստեղծական խոսքի առանձնահատկությամբ:

Բարսեղյան Ա., Բանաստեղծական խոսքի կապակցման միջոցների դրսևորումները Հ. Էդոյանի պոեզիայում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ խոսքի մեջ նախադասությունների կապակցման միջոցներն ըստ բնույթի բաժանվում են երկու խմբի՝ բառական (շաղկապներ, շաղկապական բառեր) և այլ խոսքի մասերի պատկանող բառեր:

Հոդվածում դիտարկվում են բանաստեղծական խոսքի կապակցման միջոցները Հ. Էդոյանի «Ընտրանի» գրքում զետեղված տասը ժողովածուների, ըստ հոդվածագրի, լավագույն բանաստեղծություններում:

**Փալատյան Ա., Արդի հայերենի նորակազմ բառերի
դասակարգման և իմաստակառուցվածքային քննության հարցեր
(հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ «Նոր բառեր»-ում ընդգրկված բառապաշարը՝ մոտավորապես տասներկու հազար բառ, կարող է դիտարկվել մի շարք դասակարգումներով: Դրանք նա ներկայացնում է ըստ՝ բառաքաղման աղբյուրների, նորաստեղծ բառերի կազմության, դրանց կիրառության ոլորտների, և բառերը խմբավորում մի շարք հիմքերով՝ ըստ՝ ա) նորաստեղծ բառի խոսքիմասային պատկանելության, բ) բառի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, գ) բառաստեղծման, բառակերտման տեխնիկայի, դ) կազմության, ե) առավել հաճախ հանդիպող սերող և բաղադրող հիմքերի, զ) բաղադրատարրերի ծագման (օտարալեզու կամ հայերեն), է) նորակազմ բառի բաղադրիչների շարահյուսական հարաբերության, ը) թեմատիկ խմբերի և ենթախմբերի:

Հոդվածագրի կարծիքով՝ բառերի նշված դասակարգումներն ուսումնասիրություններում հստակ չեն առանձնացվում և հաճախ միատեղ են քննվում: Անդրադարձ է կատարվում այսօր բառակազմությանն առավել հաճախ մասնակցող սերող և բաղադրող հիմքերին: Քննության են առնվում նաև պոտենցիալ բառապաշարի որոշակի միավորների ակտիվանալու առանձնահատկությունները: Արձանագրվում է մի շարք ածանցների և ածանցակերպների ակտիվացում:

Հոդվածում դիտարկվում են բժշկական տերմինաբանության ոլորտում մի շարք կազմությունների գործունացման երևույթը, նաև հայերեն և օտար միավորների մրցակցության կամ հայերեն մի քանի բառերից որևէ մեկի տերմինացման ընթացքը: Ներկայացվում են նորաստեղծ գունանվանումների կազմության առանձնահատկությունները. դրանք խմբավորվում են ըստ կառուցվածքային կաղապարների:

Թելյան Լ., Հայերենագիտական ուսումնասիրություններ
(հոդվածների ժողովածու)

Ժողովածուում ընդգրկված հոդվածները վերաբերում են ժամանակակից հայերենի շարահյուսության, բառագիտության և ոճագիտության արդիական խնդիրներին: Հիմնական մասն առընչվում է հայերենի պարզ և բարդ նախադասության կառուցվածքի տարբեր կողմերի, շարահյուսական կապակցության միջոցների՝ կապերի, շաղկապների կիրառության, շարահյուսական միավորների և դրանց կապակցության եղանակների հարաբերակցության, արդի հայերենի շարահյուսական նորմի սահմանման, դրա շրջանակում գործող զուգաձևերի, ինչպես նաև նորմից շեղվող, սխալակազմ և օտարաբան կառույցների քննությանը: Այս վերջին կարգի ուսումնասիրությունները մեծ մասամբ հիմնված են զանգվածային լրատվության միջոցների լեզվական նյութի վերլուծության վրա:

Ժողովածուի երկու հոդվածներ վերաբերում են հայերենի տերմինաբանության, մասնավորապես բառային պատճենումների և տերմինային բառապաշարի զարգացման ներքին և արտաքին գործոնների քննությանը: Բավական հանգամանակից ուսումնասիրություն վերաբերում է հայերենի գործառական ոճերից մեկին՝ գիտական ոճին:

Ժողովածուում զետեղված հոդվածները (բացի մեկից՝ «Գոյականական լրացումների բնույթի ու կապակցության մասին») հրատարակվել են գիտական տարբեր պարբերականներում: «Գոյականական լրացումների բնույթի ու կապակցության մասին» հոդվածում նշվում է, որ արդի հայերենի նախադասության կազմում առանձնացվող գոյականական անդամի լրացումները՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը, ներկայացվում են հիմնականում կառուցվածքային շարահյուսագիտության մեջ ընդունված մոտեցումով: Որոշիչը և հատկացուցիչը՝ որպես գոյականական բառակապակցության լրացական անդամներ, իրենց շարահյուսական արժեքով նույնական են և տարբերվում են արտա-

հայտության ձևաբանական միջոցներով, որոնք գործառական տեսակետից երկրորդական արժեք ունեն: Այս մեկնակետից էլ հոդվածում գնահատվում է նաև այդ լրացումների և գերադաս գոյականի շարահյուսական կապակցության եղանակը, որը հիմնականում առդրությունն է: Ուշադրության առարկա է դարձել նաև այդ անդամների շարադասությունը՝ որպես լեզվի շարահյուսական տիպը բնորոշող հատկանիշ: Հոդվածագիրը հետևում է բացահայտիչ լրացման այն մեկնաբանությանը, ըստ որի բացահայտիչը դուրս է բերվում գոյական անդամի լրացումների կազմից և ներկայացվում որպես նախադասության տարբեր անդամների հետ գործածվող համանշանակ (նույնադաս) բացահայտական անդամ:

**Թեյյան Լ., Շարահյուսության հիմնական միավորը
Էդ. Ադայանի մեկնաբանությամբ (հոդված)**

Ըստ հոդվածագրի՝ հայերենի նախադասության տեսության հարցերը լուսաբանվել են Էդ. Ադայանի «Լեզվաբանության հիմունքներ» աշխատության մեջ և բանավիճային բնույթի հոդվածներում:

Հոդվածում նշվում է, որ նախադասության տարբերակիչ հատկանիշը Էդ. Ադայանը համարում է ստորոգումը, որը հայերենում պարտադրաբար արտահայտվում է դիմավոր բայով. ստորոգման արտահայտության մյուս միջոցները (հնչերանգ, շարադասություն և այլն) հայերենում (ի տարբերություն, օրինակ, ռուսերենի) նախադասություն ձևավորելու գործառույթ չունեն: Հաղորդակցային այն միավորները, որոնք գուրկ են դիմավոր բայից և ավանդաբար նախադասություն են համարվում, Ադայանն առանձնացնում և բնորոշում է *ասություն* տերմինով: Հոդվածագրի կարծիքով՝ ինքնատիպ են նաև նախադասության գլխավոր անդամների մեկնաբանությունները, ասությունների դասակարգումը և այլն:

**Խաչատրյան Ա., ՍԹԵՄ կրթությունը դպրոցից բուհ
համակարգում. Որակի բարելավման մեխանիզմներ** (հոդված)

Հոդվածագրի ուսումնասիրության նպատակն է հստակորեն սահմանել ՍԹԵՄ կրթության նպատակներն ու թիրախները, իրականացման փուլերն ու կիրառման առանձնահատկությունները հայաստանյան իրականությունում: Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել ՍԹԵՄ կրթության՝ դպրոցից բուհ համակարգում դրսևորվող խնդիրները, սահմանափակումներն ու դրանք լուծելու ուղիները:

Թեմայի շրջանակում առաջադրված խնդրի համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության, համեմատության, վիճակագրության մեթոդներ: Նշվում է, որ ՍԹԵՄ կրթությունը տեխնոլոգիաների դարաշրջանում մրցունակ մասնագետի բացակայության խնդիրը լուծելուն ուղղված նախաձեռնություն է: Հանրակրթության բնագավառում ՍԹԵՄ կրթության հնարավորությունների կիրառումը մեծապես կզարգացնի նաև մասնագիտական կրթության գործընթացը բուհերում:

Իրականացնելով ուսումնասիրությունը՝ հոդվածագիրը հանգել է այն եզրակացության, որ ՍԹԵՄ կրթությունը ժամանակի մարտահրավեր է, որի հաջող իրացումը ոչ միայն որակական նոր նշաձողի կբարձրացնի կրթությունն ու գիտությունը, այլև կձևավորի այնպիսի մասնագետներ ու քաղաքացիներ, որոնց գործունեությունը կնպատակաուղղվի հասարակական կյանքը բարելավելուն, պետությունը զարգացնելուն: Իսկ ՍԹԵՄ սկզբունքների ստեղծած սահմանափակումները հնարավոր է վերացնել ուսուցման թեմային ու խնդրին համապատասխան տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառմամբ, որակյալ կրթությամբ, որին ձեռնամուխ է եղել Երևանի պետական համալսարանն իր ՍԹԵՄ դպրոցով:

Հակոբյան Ֆ., Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ (հոդված)

Հոդվածագրի կարծիքով՝ հայերենը համացանցային լեզու դարձնելու, այն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հաջողությամբ գործածելու համար առաջին հերթին անհրաժեշտ է նկարագրել և ներկայացնել հայերենի բառապաշարը՝ օգտագործելով ժամանակակից վեբ տեխնոլոգիաների շարունակական զարգացումները: Պետք է կարևորել էլեկտրոնային բառարանագրության ոլորտում տարվող աշխատանքների արդիականացումը, էլեկտրոնային բառարանների, բառային հենքերի կամ շտեմարանների կազմության ժամանակ վեբ տեխնոլոգիաների և ԱԲ համակարգերի կիրառությունը:

Հոդվածագիրը նշում է, որ այդպիսով հնարավոր կլինի մի կողմից՝ դյուրացնել բառարանագրական աշխատանքները (բառացանկի մշակում, բառի գործածության օրինակների, նոր բառերի մեքենական եղանակով առանձնացում և այլն), մյուս կողմից՝ առավել ամբողջական նկարագրել ընդհանուր և մասնագիտական բառապաշարը, ներկայացնել բառի՝ լեզվի իմաստային հիմնական միավորի իմաստային-հասկացական կապերը:

Հոդվածում ներկայացվում է նաև հեղինակի ստեղծած նոր բառերի մեքենական որոնման համակարգը, որը կարող է դյուրացնել էլեկտրոնային աղբյուրներից նոր բառերն առանձնացնելը: Հոդվածագիրը նշում է, որ նման համակարգի միայն լեզվական նյութի մշակման համար հարկ է եղել արդի հայերենի բացատրական, հոմանիշների, հականիշների, նոր բառերի կամ նորաբանությունների բառարանների սկանավորված տարբերակները թվայնացնել, բառահոդվածում առանձնացնել գլխաբառերը, ձևաբանական փոփոխությունների ենթարկվող բառերի դեպքում կազմել դրանց հոլովման և խոնարհման հարացույցը, այդ կերպ ստանալ արդի հայերենի բառապաշարի բառաձևերի ամբողջական ցանկը:

**Հակոբյան Ֆ., Կորպուսային լեզվաբանության
հետազոտական մեթոդների կիրառությունը գրաբարի
ուսումնասիրության մեջ (հոդված/անգլերեն)**

Հոդվածում ներկայացվում են կորպուսային լեզվաբանության մեջ կիրառվող լեզվի ուսումնասիրության մեթոդները և եղանակները: Հոդվածագիրը հանգամանալից անդրադառնում է լեզվի ուսումնասիրության մեջ լեզվական կորպուսների ունեցած դերին, լեզվական կորպուս ստեղծելու ուղղությամբ կատարված աշխատանքներին: Ներկայացվում են լեզվական այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են գրաբարի կորպուս ստեղծելու համար: Այնուհետև նշվում է, թե կորպուսային լեզվաբանության մեջ կիրառվող լեզվի ուսումնասիրության մեթոդները ինչպես կարող են նպաստել գրաբարի լեզվական համակարգի առավել ամբողջական և լիակատար քննությանը, հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում գրաբարի բառապաշարի, քերականական իրողությունների փոփոխությունների ուսումնասիրությանը:

**Ղամոյան Լ., Բառաբարդումը «Հագուստ» իմաստային
դաշտում (հոդված)**

Հոդվածում դասակարգվում են «Հագուստ» իմաստային դաշտի բարդ բառերը՝ ըստ բարդությունների տեսակների, ըստ բաղադրական հիմքերի և դրանց միջև առկա ներքերականական հարաբերությունների: Հոդվածագիրը նկատում է, որ ըստ բարդությունների խոսքիմասային արտահայտության՝ բուն կամ իսկական բարդությունների կառուցվածք-բանաձևերում ակտիվություն դրսևորող երեք անուն խոսքի մասերից (գոյական, ածական, բայ) առաջին հերթին առանձնանում է գոյականը: Կան նաև բայարմատ գերադաս անդամով բազմաթիվ բարդ բառեր. դրանց բաղադրիչները իմաստային առումով արտահայտում են խնդրային և պարագայական շարահյուսական հարաբերություններ:

Առանձնացվում են՝ ա) բարդություններ, որոնք ունեն և՛ հոդակապով, և՛ անհոդակապ գուգահեռ ձևեր, բ) բարդություններ, որոնց բաղադրիչներից մեկը բարբառային, արևմտահայերեն կամ փոխառյալ բառ է, գ) բարդություններ, որոնք առկա են և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ տարբերակներով և այլն:

Անիսկական բարդությունների բաղադրիչների բառակազմական, իմաստային, շարահյուսական էական առանձնահատկություններով դասակարգվում են հարադրական և կցական բարդություններ: Հարադրական բարդություններն իրենց հերթին դաս դասվում են ըստ անվանական (կրկնավոր, բաղիյուսական) և բայական հարադրությունների: Պարզվում է, որ «Հագուստ» իմաստային դաշտում առկա կցական բարդությունները, որոնք ծագել են կրկնավորներից և բաղիյուսական հարադրություններից, առավել հաճախակի են բարբառներում:

Հոդվածում քննվում են նաև նորակազմ բարդությունները:

Մկրտումյան Ա., Մահակյան Ռ., Բառակերտումները Թադևոս Տոնոյանի չափածո գործերում (հոդված)

Հոդվածում քննվում են Թադևոս Տոնոյանի բանաստեղծական ժողովածուներում առկա նորակազմությունները: Հոդվածագիրը նշում է, որ գրողը մտածումներն արտահայտելու և ընթերցողին փոխանցելու նպատակով կերտում է նոր բառեր, որոնք ամբողջովին բացահայտում են բանաստեղծ-գիտնականի լեզվամտածողական համակարգը: Նա սիրում է իր խոսքը համեմել խորհրդանիշ-պատկերներով, գրաբարաբանություններով՝ հմտորեն օգտվելով մեր լեզվի բառակազմական հնարավորություններից:

Ըստ հոդվածագրի՝ Թ. Տոնոյանը ընթերցողին ներկայանում է բառաստեղծման իր հնարամտություններով, նորակազմությունների դիպուկ և տեղին կիրառություններով, որոնց մի մասը համագործածական դառնալու հավանականություն ունի:

Մկրտումյան Ա., ԱԳՆ(Ո)-, ԷԿ(Ո)-, ԷՆ(Ո)- օտար բաղադրատարրերով կազմությունները հայերենում (հոդված)

Հոդվածում քննվում են *ագր(n)-*, *էկ(n)-*, *էն(n)-* օտար բաղադրիչներով կազմությունները՝ ըստ հրապարակում եղած մի շարք բացատրական, ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական, թարգմանական, օտար բառերի, նորաբանությունների բառարանների և համացանցային տվյալների: Ներկայացվում են գյուղատնտեսական գիտությունների բառապաշարի՝ նոր բառերով համալրման գործընթացը, տերմինային նորակազմությունների՝ օտար կամ հայերեն համարժեքների գործածությանն առնչվող խնդիրները և դրանց բառակազմական հնարավորությունները:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ *ագր(n)-*, *էկ(n)-*, *էն(n)-* օտար բաղադրատարրերով կազմությունները երբեմն զուգահեռաբար գործածվում են հայերեն և օտար տարբերակներով: *Ագր(n)-* բաղադրիչով բառերը ներկայումս հայերենացվելու փուլում են, *էկ(n)-*ով կազմությունների գործածությունը ակտիվացել է լեզվում, քանի որ հաճախացել են *էկ(n)-* բաղադրիչի հավելումով այս կամ այն առարկան, երևույթը, իրողությունն արտահայտելը, իսկ *էն(n)-*ով կազմություններն ավելի քիչ են՝ պայմանավորված գյուղատնտեսության համեմատաբար երիտասարդ ոլորտ լինելով: Բառակազմական մեկ կամ մի քանի քայլերով կազմվող *ագր(n)-*, *էկ(n)-*, *էն(n)-* սկզբնաբաղադրիչներով բառերում սերող և բաղադրող հիմքերը կարող են փոխել իրենց տեղերը: Տերմինային նորակազմությունների մի մասը բառարաններում չի վկայվում և կարող է նպաստել տերմինային նոր (ինչպես նաև՝ միջգիտակարգային տերմինների) բառարաններ կազմելու աշխատանքներին:

Ներսիսյան Վ., Բաղադրյալ բառերի դասակարգումը Մանուկ Աբեղյանի աշխատություններում (հոդված)

Ըստ հոդվածագրի՝ արդի հայերենի համաժամանակյա բառակազմության ոլորտում առկա մի շարք խնդիրների լուծման

ուղիներ փնտրելու նպատակով պայմանավորված՝ անհրաժեշտություն կա անդրադառնալու տարբեր լեզվաբանների համապատասխան ուսումնասիրություններին, տեսական վերլուծություններին: Ուստի սույն ուսումնասիրությամբ հոդվածագիրը փորձել է բացահայտել Մանուկ Աբեղյանի ընդհանուր մոտեցումներն ու սկզբունքները բառակազմության հարցերում, ներկայացնել բաղադրյալ բառերի, մասնավորապես բարդությունների դասակարգման վերաբերյալ նրա ըմբռնումներն ու սկզբունքները: Անդրադարձ է կատարվել նաև այլ հետազոտողների ուսումնասիրություններին, ըստ անհրաժեշտության՝ ներկայացվել են նրանց հիմնական եզրահանգումներն ու գնահատականները:

Հոդվածագրի դիտարկմամբ՝ Մ.Աբեղյանը բառերն ըստ կազմության բաժանում է երկու տեսակի՝ պարզ և բաղադրյալ, բաղադրյալ բառերը՝ բարդ և ածանցական տեսակների: Բարդ բառերը սահմանում է որպես երկու բառից, ածանցական բառերը՝ մի բառից կամ արմատից և մի ածանցից կազմված բառեր: Աբեղյանը բարդ բառերը բաժանում է հարադրական (հարադրական բայեր, բաղիյուսական հարադրություններ, կրկնավորներ), կցական և իսկական բարդությունների՝ ամեն մեկը ենթարկելով մանրակրկիտ վերլուծության, համապատասխանաբար ներկայացնելով բազմաթիվ օրինակներ: Առանձնացնում է նաև «առաջադիրներով բաղադրություններ» տեսակը՝ նկատի ունենալով մի քանի մակբայով կամ դրանց արմատներով և մի քանի բայարմատով ու մասնիկով բաղադրությունները:

Հոդվածագիրն անդրադառնում է նաև Աբեղյանի՝ հոդակապի ծագմանը և գործածությանը վերաբերող հանգամանալից քննությանը: Մասնավորապես ցույց է տրվում, որ Աբեղյանը հոդակապը ներկայացնում է որպես բառաբնի «ա» ձայնավոր, որը համարանությանմբ անցել է և այնպիսի բառերի բարդության, որոնք «ա» ձայնավորով բուն չունեն:

Ներսիսյան Վ., Հինհայերենյան լեզվական իրողությունների ուսումնասիրման նշանակությունը բուհի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ սույն հետազոտության նպատակն է եղել ներկայացնել հինհայերենյան լեզվական իրողություններն ուսումնասիրելու նշանակությունը ՀՀ բուհերի տարրական մանկավարժության և մեթոդիկայի բաժնում, որը կրտսեր դպրոցում մայրենի լեզու դասավանդող ուսուցիչ պատրաստող ստորաբաժանում է:

Հոդվածագրի դիտարկմամբ՝ հին հայերենի՝ գրաբարի հընչյունական և քերականական իրողությունները ներկայացնող դասընթացը, որը տարիներ շարունակ ընդգրկված է եղել ՀՀ մանկավարժական բուհերի վերոհիշյալ մասնագիտության կրթական ծրագրերում, վերջին մի քանի տարում (շուրջ մեկ տասնամյակ) դուրս է մղվել՝ տեղը զիջելով մասնագիտությանն առնչվող «առավել արդիական և արդյունավետ ծրագրերի»: Որոշ բուհերում հարցը լուծվել է՝ առարկան մագիստրոսական կրթական ծրագրերի ընտրովի դասընթացների ցանկում ներառելով, որը, ըստ հոդվածագրի, ժամանակավրեպ է և ոչ արդյունավետ:

Հոդվածագիրը համապատասխան օրինակներով փաստում է, որ գրաբարի դասավանդումը նպատակ ունի ընդլայնել ուսանողների մասնագիտական հմտությունների և գիտելիքների շրջանակը՝ արդի գրական հայերենի լեզվաքերականական բազմաթիվ երևույթներ ընկալելու և մեկնաբանելու առումով: Ուստի այն իբրև պարտադիր առարկա պետք է դասավանդվի նշված մասնագիտությամբ բակալավրական կրթական ծրագրի առաջին կուրսում՝ որպես ժամանակակից հայերենի բուհական դասընթացի նրբություններն ու օրինաչափությունները համակողմանիորեն բացահայտելու և յուրացնելու հիմք:

Նշվում է, որ գրաբարի ուղղագրական, արտասանական, քերականական առանձնահատկությունների բավարար իմացությունը հիմք է բանահյուսական մի շարք ստեղծագործություններին,

ուսկեդարյան և միջնադարյան գրականության լավագույն նմուշներին բնագրային օրինակներով ծանոթանալու, ինչպես նաև արևմտահայերեն երկերի ընթերցանության համար (դասական հայերենի ուղղագրությունը գործում է ժամանակակից արևմտահայերենում)՝ դրանցով կրթելու և հարուստ արժեհամակարգով հայ ուսուցիչ ձևավորելու նպատակով:

Ներսիսյան Վ., Բառակազմության հարցերի քննությունը Գուրգեն Սևակի աշխատություններում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Գուրգեն Սևակի՝ հայերենի բառակազմության տարբեր հարցերի վերաբերող մոտեցումներն ու տեսական հիմնավորումները: Հոդվածագիրը նշում է, որ Գ. Սևակը բառերն ըստ կազմության բաժանում է չորս տեսակի՝ պարզ, ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր: Առանձնացնում է բառակազմության տեխնիկայի՝ հնչյունափոխության միջոցով արմատների ստեղծման, նույն արմատի կրկնությամբ բարդ բառեր ստեղծելու, իսկական բարդությունների, ածանցումների փոխելը: Թերևս Սևակն առաջիններից է, որ հատուկ ուսումնասիրության նյութ է դարձնում հապավումները՝ *բառակազմության նոր տեխնիկա* համարելով նորագույն հապավումները, բառապատճենումները, ինչպես նաև փոխառությունները: Գ. Սևակը մշակում և զարգացնում է ձևույթի տեսությունը: Հոդվածում նշվում է նաև, որ *հնչույթի* և *ձևույթի* մասին հայ իրականության մեջ առաջին անգամ խոսել է Գր. Ղափանցյանը (նա հայերեն առանձին տերմին դեռ չի ստեղծում և ձևույթի համար գործածում է «մորֆեմա» միջազգային տերմինը), սակայն հետագայում դրանք խորությամբ քննել է հատկապես Սևակը:

Հոդվածագիրը կարևորում է, որ, բացի թեքման վերջավորություններից, Սևակը բառահարաբերական է համարում նաև *և*, *ու*, *իսկ*, *բայց* և այլ շաղկապներ: Ածանցումը համարում է բառակազմության տեխնիկայի զարգացման համեմատաբար բարդ աստի-

ճան, որը, որպես կանոն, հաջորդել է անիսկական (կրկնավոր, հարադիր ու կցական) և իսկական բարդություններին:

Ներսիսյան Վ., Բատիկյան Թ., Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում (հոդված)

Հոդվածում ներկայացվում են օտարաբանությունների, փոխառությունների վերաբերյալ հայ լեզվաբանության պատմության ընթացքում ի հայտ եկած տեսակետներն ու ձևակերպումները՝ ըստ Էդ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատության: Հայտնի է, որ Աղայանն իր «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը գրելիս հիմք է ընդունել հայերենի ծագման և ցեղակցության վերաբերյալ տեսությունները: Սակայն խոսելով առանձին լեզվաբանների՝ այդ ոլորտում կատարած աշխատանքների մասին՝ անդրադառնում է հարակից այլ թեմաների ևս: Այդ առումով, ըստ հոդվածագիրների, հետաքրքրական է Աղայանի վերաբերմունքը՝ հայերենի և այլ լեզուների փոխազդեցությանն առնչվող դիտարկումներին՝ արտացոլված տարբեր հայագետների, հայերենագետների աշխատություններում: Դրանցում ներկայացված կարծիքները, որոնք վերաբերում են փոխառությունների և օտարաբանությունների գործածությանն ու գնահատմանը, արդիական են նաև մեր օրերում, ուստի սույն հետազոտության մեջ փորձ է արվել ներկայացնելու հայ լեզվաբանական մտքի պատմության ընթացքում թեմային վերաբերող տեսակետներն Է. Աղայանի գնահատմամբ:

Հոդվածագիրները նկատում են, որ լեզվաբանը, քննելով փոխառությունների, այլ լեզուների՝ հայերենի վրա ունեցած ազդեցությունների պատճառները և դրանց գործածելիության սահմանները, համակարծիք է նրանց հետ, ովքեր դեմ են բոլոր օտար բառերն անխտիր թարգմանելուն: Հոդվածում նշվում է, որ Աղայանի մոտեցումը միանգամայն արդարացված և արդիական է նաև մեր օրերում: Միջազգային գործածություն և համընդհանուր

տարածում ունեցող բառերը պետք չէ ամեն գնով թարգմանել՝ դրանց հայերեն համարժեքներն ստեղծելով, հատկապես գիտաբառերի դեպքում: Այլապես երբեմն ստեղծվում և գործածության մեջ են դրվում բաղադրյալ բառեր, որոնց բուն նշանակությունը բացահայտելը դժվարություններ է հարուցում, երբեմն էլ բազմիմաստ բառերի գործածության շփոթ է առաջանում, մինչդեռ ընդունված օտար տարբերակն ավելի հասկանալի և գործածական է լինում:

**Ներսիսյան Վ., Ավետիսյան Ե., Նախադասության
ուսումնասիրման դերը կրտսեր դպրոցականների խոսքի
զարգացման գործում (հոդված)**

Ըստ հոդվածագիրների՝ տարրական դասարաններում լեզվական գիտելիքները, այդ թվում նախադասությունն ուսումնասիրելը գրական լեզուն ճիշտ հասկանալու, շարահյուսորեն ճիշտ, սահուն խոսք կառուցելու միջոց է: Ուստի նախադասությունն ուսումնասիրելով կրտսեր դպրոցականի խոսքը զարգացնելը ժամանակակից կրթական գործընթացում կարևոր մարտահրավերներից է, որով էլ պայմանավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը:

Հոդվածագիրների նպատակն է եղել ցույց տալ տարրական դասարաններում նախադասությունն ուսումնասիրելու արդյունավետությունը, նրա կարևորությունը կրտսեր դպրոցականի կապակցված խոսքը, լեզվական, տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար, կատարել եզրահանգումներ, անել առաջարկություններ նախադասության ուսուցման և գրավոր ու բանավոր խոսքը զարգացնելու արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ուսումնասիրության թեմայի նորույթը պայմանավորվում է նրանով, որ հիմնախնդրի շուրջ կատարված մի շարք ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացվում են, նորովի է

ներկայացվում տարրական դասարաններում նախադասության ուսուցման անհրաժեշտությունը, որոշարկվում է նրա տեղն ու դերը կրտսեր դպրոցականի խոսքը զարգացնելու գործում:

**Ներսիսյան Վ., Իզնաթնոսյան Ն., Բառակազմության
ուսումնասիրումը որպես կրտսեր դպրոցականների
բառապաշարի հարստացման միջոց (հոդված)**

Ըստ հոդվածագիրների՝ բառակազմության ուսումնասիրումը բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն է, և այն շարունակ պետք է լինի ուսուցչի ուշադրության կենտրոնում: Առանց հարուստ և ակտիվ բառապաշարի չի կառուցվում պատկերավոր, դիպուկ և գեղեցիկ խոսք: Սրանով է պայմանավորվում ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Հոդվածագիրների նպատակն է եղել բացահայտել տարրական դպրոցում բառակազմության ուսումնասիրման առանձնահատկությունները, ցույց տալ բառակազմության դերը աշակերտների բառապաշարը հարստացնելու գործընթացում, հետազոտական աշխատանքների միջոցով նպաստել խոսքը զարգացնելու մեթոդները կատարելագործելուն:

Հոդվածում ներկայացվում է ժամանակակից հայերենի բառակազմության վերաբերյալ տեսական գրականության, ինչպես նաև տարրական դասարաններում բառակազմության ուսումնասիրման գիտամեթոդական համակարգի համառոտ վերլուծությունը: Նշվում է, որ բառակազմական միավորների ուսուցումը, բառակազմական եղանակների գործածությունը և բառակազմական վերլուծությունը մեծ ու կարևոր դեր են կատարում նոր բառեր կազմելու կարողություն ձևավորելու և բառիմաստն ընկալելու գործում՝ երկրորդաբար դառնալով բառապաշարի հարստացման հիմք: Առաջարկվում է բառակազմական առաջադրանքներ կատարել մյուս լեզվական նյութերի հետ համատեղ, որը նաև բառապաշարը հարստացնելու և զարգացնելու հնարավորություն է:

Նոր բառեր, պրակ Ը (բառարան)

«Նոր բառեր. Ը պրակ»-ը պարունակում է մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող շուրջ 1000 բառամիավոր, որոնք վկայված չեն հայոց լեզվի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Առկա են նաև բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության է:

Պապիկյան Ս., Թյուրքական ծագման հատկական փոխառությունների քննություն (հոդված)

Հոդվածում նշվում է, որ փոխառությունների մեջ առանձնանում են հատկական փոխառությունները (էկզոտիզմներ, տարաշխարհիկ բառեր, օտար բառեր), որոնք հատկապես շատ են թարգմանական գրականության մեջ, մամուլում՝ տեղական միջավայրի, կոլորիտի պահպանման, օտար իրույթները (ռեալիաներ) նկարագրելու համար:

Հոդվածագրի նպատակն է եղել քննել թյուրքական լեզուներից փոխառված որոշ հատկական փոխառություններ և դասակարգել դրանք ըստ իմաստային խմբերի: Նյութը հավաքվել է տարբեր աղբյուրներից՝ բառարաններ, մամուլ, գեղարվեստական գրականություն, հեռուստատեղեքեր և այլն:

Ըստ հոդվածագրի՝ հատկական փոխառությունները կարելի է քննել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, բառիմաստի փոփոխության, ժամանակաշրջանի, իմաստային խմբերի և այլն:

Ինչպես հայտնի է, հայերը երկար ժամանակ, սկսած 11-րդ դարից, եղել են թուրք-թաթարական զանազան ցեղերի՝ սելջուկների, թաթարների, թուրքմենների, օսմանյան թուրքերի տիրապետության ներքո: Բնականաբար փոխադարձ շփումների հետևան-

քով կատարվել են կյանքի տարբեր բնագավառներն ընդգրկող բազմաթիվ փոխառություններ: Դրանք հատկապես շատ են բարբառներում, և որոնց մի մասը պահպանվել է մինչև հիմա: Թյուրքական լեզուները իրենց հերթին բազմաթիվ փոխառություններ են կատարել արաբերենից և իրանական լեզուներից, որ հայերենին են անցել թուրքերենի միջնորդությամբ, միջնորդավորված փոխառություններ են: Սակայն որոշ բառերի դեպքում դժվար է որոշել՝ դրանք հայերենին անցել են անմիջականորեն, թե՛ միջնորդավորված:

Թուրքերենից կամ թուրքերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունները հոդվածում դասակարգվում են հետևյալ կերպ. *կրոնական բառեր, տիտղոս- կոչում- դիմելիք, զենք-զինվոր, հագուստ, կացարան-տարածք, ընդհանուր բառեր*: Բառերի՝ միջնորդավորված փոխառություն լինելու դեպքում փակագծերում տրվում է նաև փոխաստու լեզուն:

Շոդվածագիրը եզրակացնում է, որ դիտարկված հատկական փոխառություններից՝ ա/ հագուստի անվանումները հիմնականում թուրք - թաթարական են, բ/ կրոնական բնույթի բառերը միջնորդավորված փոխառություններ են արաբերենից և իրանական լեզուներից, գ/ բառերի մի մասը ունեցել է բառիմաստի ընդլայնում տարբեր հիմունքներով, ձեռք է բերել նոր իմաստներ՝ *աղա, բաշիբոզուկ, ենիչերի, մանկուրտ, փաշա* և այլն (ընդ որում, դրանց փոխաբերական գործածությունն ավելի հաճախադեպ է. հոդվածագիրն առանձնակի ուշադրության է արժանացնում *մանկուրտ* բառը), դ/ թյուրքական ծագման հատկական փոխառությունների մի մասը պահպանված է հայերենի բարբառներում, գեղարվեստական ստեղծագործություններում:

**Պապիկյան Ս., Ժամանակակից հայերենի բառապաշարի
քննությունը՝ ըստ Էդ. Աղայանի «Ընդհանուր և հայկական
բառագիտություն» աշխատության (հոդված)**

Հոդվածագիրն անդրադառնում է Էդ. Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունում բառապաշարի ծագումնաբանական դասակարգմանը: Նշվում է, որ աշխատության մեջ նոր են ժամանակակից հայերենի ուսումնասիրության բնագավառում բառապաշարի դասակարգմանը, տերմինագիտությանը, ինչպես նաև բառապաշարի ներքին զարգացմանը, մշակմանը և կատարելագործմանը վերաբերող գլուխները:

Հոդվածագիրը դիտարկում է աշխատության «Ժամանակակից հայերենի բառապաշարը» գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը», որում հեղինակը, վերանալով բառապաշարի զարգացման պատմական ընթացքից, այն քննում է որպես մի կայուն ամբողջություն՝ ներառելով բոլոր այն բառերը, որոնք գործածվել կամ գործածվում են աշխարհաբար գրված ողջ գրականության և մամուլի մեջ՝ անկախ գործածականության աստիճանից, գործառական ոլորտից, տարբերակային բնույթից և այլն:

Ըստ Աղայանի՝ բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը կատարվում է առաջին անգամ: Նրա կարծիքով՝ դասակարգության մեջ ներկայացված կարգերը վերջնական չի կարելի համարել, կարելի է դրանց բնութագրությունը փոխել, ավելացնել կամ պակասեցնել: Հոդվածագիրը նշում է, որ, ըստ Աղայանի, դասակարգությունը ճշգրտելու համար պետք է ունենալ գրաբարի լիակատար պատմական բառարան, աշխարհաբարի (խոսակցական և գրական), միջին հայերենի, բարբառային լիակատար բառարաններ, և միայն դրանց համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ներկայացնելու աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի սպառիչ ծագումնաբանական դասակարգությունը:

Հողվածագիրը նշում է, որ հետագայում, օգտվելով նաև Էդ. Ադայանի դասակարգումներից, հայ լեզվաբանները կատարել են այլ դասակարգումներ ևս (Հ.Պետրոսյան, Ա.Սուքիասյան, Ալ. Մարգարյան): Հողվածում Էդ. Ադայանի դասակարգումները համեմատվել են մյուս լեզվաբանների դասակարգումների հետ:

**Պասյիկյան Ա., Ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ
հայերենին անցած հատկական փոխառությունների քննություն
(հողված)**

Հողվածում նշվում է, որ մեծ է ռուսերենի ազդեցությունը հայերենի վրա հատկապես 1828 թ. Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորվելուց հետո: Ժողովրդի և նրա պատմության կապն անուրանալի է, և յուրաքանչյուր ժողովրդի պատմություն իր կնիքն է դնում լեզվի վրա: Կարևոր են հարևան ժողովուրդների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային փոխհարաբերությունները, որոնց հետևանքով լեզուները միմյանցից փոխառում են բազմաթիվ բառեր: Փոխառյալ բառերի մեջ որոշակի քանակ կազմող հատկական փոխառությունները ցույց են տալիս այս կամ այն ժողովրդին, երկրին հատուկ առարկաներ, երևույթներ, սովորույթներ և գործածվում են, երբ խոսքը վերաբերում է տվյալ ժողովրդին բնորոշ իրույթներին (ռեալիաներ): Ռուսերենի միջնորդությամբ հայերենը բազմաթիվ բառեր է փոխառել լատիներենից, հունարենից, անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, իտալերենից, ֆիններենից և այլ լեզուներից, որոնք հիմնականում միջազգային բառեր են: Ռուսաստանը, լինելով բազմազգ պետություն, ունի բազմաթիվ հատկական փոխառություններ իր կազմում գտնվող ժողովուրդների լեզուներից, որոնք հայերենը փոխառել է ռուսերենի միջնորդությամբ:

Տարբեր աղբյուրներից (գեղարվեստական գրականություն, բառարաններ, մամուլ, հեռուստատեթեր) հավաքած նյութը հողվածագրին հնարավորություն է տվել ռուսերենից և ռուսերենի միջնորդությամբ հայերենին անցած հատկական փոխառությունները

դասակարգելու հետևյալ իմաստային խմբերում՝ *կացարան-բնակավայր-տարածք, արվեստ-գրականություն, քաղաքական ուղղություններ, հագուստ, ընդհանուր անվանումներ*:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ ռուսերենից և ռուսերենի միջոցով հայերենին անցած հատկական փոխառությունների մի մասը բնիկ ռուսերեն է և անմիջական փոխառություն հայերենում՝ *բոլշևիկ, դեկաբրիստ, մենջևիկ, մուժիկ* և այլն, մի մասն ընդհանրապես դուրս է եկել գործածությունից և համալրել հնաբանությունների շարքը՝ *բատրակ, բուռլակ, խոլոպ* և այլն, ռուսերենից փոխառյալ հատկական փոխառությունների մի մասի ծագումը հայտնի չէ, ռուսերենի միջնորդությամբ եվրոպական լեզուներից հայերենին անցած հատկական փոխառությունները հիմնականում միջազգային բառեր են, ռուսերենից անցած հատկական փոխառություններից շատերը պատմական զարգացման ընթացքում հայերենում ձեռք են բերել նաև այլ իմաստներ:

Սարգսյան Ն., Արդի հայերենի գոյականակերտ ածանցները (հոդված/անգլերեն)

Հոդվածագիրը նպատակ է ունեցել բացահայտելու բառա-ծանցման ժամանակակից միտումները՝ համասեռ, տարասեռ կաղապարները, ածանցման ժամանակ հաճախակի և սահմանափակ գործածվող ածանցները: Հոդվածում գոյականների կազմությունը դիտարկվել է՝ վերջին քայլում ավելացող բաղադրիչը հիմքում ունենալով: Փաստացի նյութ են ծառայել «Նոր բառեր»-ի 6-րդ և 7-րդ պրակներում ընդգրկված համապատասխան բառերը: Առանձնացվել են առավել հաճախ հանդիպող ածանցները՝ *գեր-, հակա-, համա-, նախա-, վերա-* նախածանցները, *-անոց, -ություն, -ուհի, -ում* վերջածանցները: Նախածանցման քայլն իրականացվում է անփոփոխ սերող հիմքերով՝ *գերերազանք, հակաթուրմ* և այլն, վերջածանցման քայլը՝ շեշտով պայմանավորված հնչյունափոխված հիմքերով՝ *առևտրայնացում, հասակակցուհի* և այլն:

Հողվածագիրը նշում է, որ տարասեռ կադապարներում գերակշռում են ածական սերող հիմքով կազմությունները:

Սուքիասյան Հ., Էդ. Աղայան. Հետաձգված խոսք ուսուցչիս

Անվանի գիտնականին ուղղված հարգանքի և երախտագիտության խոսքը սկսվում է հարցադրումով. ի վերջո, ով էր այդ զարմանահրաշ մարդը՝ լոկ ակննավոր լեզվաբան, ընդհանուր լեզվաբանության խոշոր տեսաբան, անգուգական բառարանագիր, մեղվաջան բարբառագետ, հայոց լեզվի պատմահամեմատական քննության ոլորտում նոր լայնահուն ուղիներ բացած խոշոր գիտնական, Երևանի պետական համալսարանի բանիբուն դասախոս, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բազմագետ գիտաշխատող, մեծահամբավ ակադեմիկոս, թե՛ մի այնպիսի անհատականություն, որին շատերը տակավին չեն հասցրել ամբողջապես ճանաչել: Հողվածագրի կարծիքով՝ անհրաժեշտ է մի կողմ տանել տասնամյակների վարագույրը և մի այլ, փոքր-ինչ անսովոր լույսի ներքո ավելի տեսանելի ու շոշափելի դարձնել Էդուարդ Աղայան մարդու կերպարը:

Իր իսկ հարցադրումներին հեղինակը պատասխանում է՝ ներկայացնելով Էդուարդ Աղայանի կյանքի և գործունեության կարևորագույն իրադարձությունները:

Ֆելեքյան Մ., Տիոյան Ս., Արևմտահայերենի նորաբանությունների բառարանագրման առանձնահատկությունները (հողված)

Հողվածում համառոտ արծարծվում են նորաբանությունների սահմանման և ընտրության սկզբունքները: Արևմտահայերենի նորաբանությունների համար ընտրված բառանյութը պետք է արձանագրված չլինի հայերենի նախորդ, այդ թվում նաև արևելահայերենի բառարաններում: Բառարանում ընդգրկվում են նաև լեզվում վաղուց գոյություն ունեցող այն բառերը, որոնք երբևէ չեն

բառարանագրվել: Բացառություն է արվելու միայն արևելահայերենի նորաբանությունների նորագույն բառարանների համար, քանի որ այժմ երբեմն դժվար է ստույգ որոշել՝ նորաբանությունն առաջինն ստեղծվել է արևելահայերենում, թե՞ արևմտահայերենում: Բառարանում իբրև գլխաբառ ներկայացվելու են ոչ միայն նորակերտ բառերը և նորագույն փոխառությունները, այլև իմաստային նորաբանությունները: Գլխաբառերը տրվելու են բնագրերի ուղղագրությամբ: Բացատրվում են նորաբանությունների՝ միայն բնագրային օրինակում ունեցած նշանակությունները: Բնագրային վկայությամբ չհաստատված հնարավոր նշանակությունները բացատրություններում չեն ընդգրկվում: Այսպիսի բառարաններում լուսաբանող նյութը պետք է ունենա խիստ փաստական սկզբնաղբյուր՝ համապատասխան հղումով իրական բնագրին: Փոխառյալ բառերի բացատրությունը նկարագրական-տրամաբանական է, իսկ բաղադրյալ բառերինը՝ հղումային-բառակազմական: Հումանիշները ծառայում են իբրև բացատրության օժանդակ միջոց:

**Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

2023 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համբարձույան Վ.Գ., Հայ միջնադարյան երկլեզվյան բառացանկերի նմուշների լեզվի քննություն, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2023, 198 էջ:

Սարգսյան Մ.Ա., Համբարձույան Վ.Գ., Միքայելյան Մ.Ա., Բաղրամյան Ս.Ե., Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում, Ե., «Արմավ» հրատ., 160 էջ:

ԲԱՌԱՐԱՆ

Սարգսյան Մ.Ա., Ասիլբեկյան Շ.Հ., Բաղրամյան Ս.Ե., Խաչիբաբյան Ն.Պ., Հայերենի ածանցների բառարան, Ե., «Արմավ» հրատ., 102 էջ:

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

Կիրառական լեզվաբանության հարցեր, պրակ Ա, Ե., ԼԻ հրատ., 2023, 160 էջ:

Խաչատրյան Օ.Մ., Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր»-ի հաճախականության բառարան, Ե., ԼԻ հրատ., 2023, 71 էջ:

Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Բնագրային համաբարբառ, Կազմ.՝ Օ. Խաչատրյան, Ե., ԼԻ հրատ., 2023, 458 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Avetyan S.R., Main Factors Conditioning the Absence of the Final *Ը* and the Origin of the Final *Ի* of the Imperative Singular in Armenian Dialects, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N1, ԵՊՀ հրատ., 2023., էջ, 68-78:

2. Avetyan S.R., On one Important Peculiarity of the Imperative Singular in the Dialect of Ararat Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N3, ԵՊՀ հրատ., 2023, էջ 30-38.

3. Grigoryan G.G., Changes of the Duration, Intensity and Pitch of the Definite Article [ə] in Spoken Language, «Ձահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 5-13.

4. Գրիգորյան Գ.Գ., Հայերենի ուժգնության և տևողության փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում, «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, Ե., էջ 51-57:

5. Դալայան Ս.Ս., Դավթյան Դ.Հ., Արեւիքի (Մեղրու շրջանի) տեղանունները/ գյուղանունները. աղբյուրագիտական և լեզվական դիտարկումներ, ««Արեւիք» Մեղրի պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ՀԱԻ հրատ., էջ 49-51:

6. Միքայելյան Ս., Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը ըստ լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, 2 (65), Ե., 2023, էջ 155-164:

7. Միքայելյան Ս.Ա., Հայերենում պարսկերենի միջնորդությամբ կատարված փոխառությունների հնչյունաբանական առանձնահատկություններ, «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 43-50:

8. Մկրտչյան Մ.Ս., Թարգմանության հաղորդակցական կերպը (Յուրի Լոտմանի հաղորդակցության տեսության լույսի ներքո),

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի», 1 (66), Ե., 2023, էջ 101-115:

9. Մկրտչյան Մ.Ա., Սուբյեկտիվն ու օբյեկտիվն իբրև հակադրության դրսևորում. նոր հայացք դասական մոտեցումներին, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N3 (42), ԵՊՀ հրատ., 2023, էջ 110-122:

10. Սարգսյան Մ.Ա., Էդուարդ Աղայան. հայագիտության նվիրյալներից մեկը, «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 3-8:

11. Սարգսյան Մ.Ա., Համբարձումյան Վ.Գ., Միքայելյան Մ.Ա., Բաղրամյան Ս.Ե., Հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները Լեհաստանի հայ համայնքում, «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 56-64:

12. Սիմոնյան Ն.Ս., Է. Աղայանը բառագետ և ստուգաբան, «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 9-12:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Ավետյան Ս., Եզակի հրամայականի վերջահանգ *բ*-ի բացակայությունը և վերջահանգ *հ*-ի ծագումը պայմանավորող հիմնական գործոնները հայերենի բարբառներում
(հոդված/անգլերեն)

Ըստ հոդվածագրի՝ եզակի հրամայականը, որը հին հայերենում կազմվում էր մի քանի եղանակով, հայերենի հետագա զարգացման ընթացքում ձևային միասնականացման ընդհանուր միտում է ցուցաբերել: Այդ առումով հատկապես նշանակալից է *է* և *ի* խոնարհման պարզ բայերի հրամայականի ձևերի համաբանական փոխներգործությունը: Եթե մի շարք բարբառներում սկզբնական ներգործաձև և կրավորաձև խոնարհումների հակադրությունը պահպանվել է, ապա այլ բարբառներում նախկին *է* և *ի* խոնարհման պարզ բայերը լիովին կամ մասնակիորեն համընկել են՝ միա-

վորվելով մեկ միասնական խոնարհման տիպի մեջ, որի դեպքում համաբանական ընդլայնմամբ ընդհանրացել է հրամ. եզ. 2-րդ դեմքի կա՛մ *-իք* վերջավորությունը, կա՛մ *-է* (<հ. հայ. *-ես*)-ն: Բացի այդ՝ մի կողմից մի շարք բարբառներում եզակի հրամայականի *-իք* վերջավորության վերջահանգ *ք*-ն անհետացել է հնչյունափոփոխությամբ կամ համաբանությամբ, մյուս կողմից՝ եզակի հրամայականի վերջահանգ *-է* ձայնավորը (< հ. հայ. *-ես*՝ երկբարբառից) հետագա *է>ի* հնչյունական զարգացման է ենթարկվել այդ նույն բարբառային տարածքներում: Հետևաբար այդպիսի դեպքերում եզակի հրամայականի վերջահանգ *ի*-ն սկզբունքորեն կարող է առաջացած լինել կա՛մ *-իք* վերջավորության վերջահանգ *ք*-ի հնչյունական կամ համաբանական անկմամբ, կա՛մ էլ *է>ի* հնչյունափոխությամբ: Եվ երբեմն դժվար է միանշանակ ասել, թե վերոնշյալ երկու զարգացումներից որ մեկն է հանգեցրել տվյալ ձևի առաջացմանը: Բացի այդ՝ երբեմն այնքան էլ պարզ չէ՝ արդյոք տվյալ բարբառում *-իք* վերջավորության վերջահանգ *ք*-ի անհետացումը հնչյունական, թե՞ համաբանական պայմանավորվածություն ունի: Այդ առումով անկանոն բայերի հրամ. եզ. 2-րդ դ. ձևում վերջահանգ *ք*-ի պահպանված կամ չպահպանված լինելը հիմնականում կողմնորոշիչ միջոց է կանոնավոր բայերի հրամ. եզ. 2-րդ դ. ձևում վերջահանգ *ք*-ի բացակայության իրական պատճառը (այն է՝ հնչյունական կամ համաբանական պայմանավորվածությունը) վերհանելու հարցում, թեև առանձին դեպքերում որոշ անկանոն բայերի հրամ. եզ. 2-րդ դ. ձևի վերջահանգ *ք*-ն, հավանաբար, վերականգնվել է երկրորդաբար՝ հրամ. հոգ. 2-րդ դ. ձևի համաբանությամբ:

Ավետյան Ս., Արարատյան բարբառում եզակի հրամայականի մեկ կարևոր առանձնահատկության շուրջ (հոդված/անգլերեն)

Արարատյան բարբառում հրամայականի կազմության ձևաբանական կանոնները հիմնականում համապատասխանում են

արդի գրական արևելահայերենի խոսակցական տարբերակում գործող կանոններին: Այդուհանդերձ, որոշ խոսվածքներ ունեն մի կարևոր առանձնահատկություն, մասնավորապես՝ *է* (< հ. հայ. *է* և *ի*) խոնարհման անցողական պարզ բայերի եզակի հրամայականում ոչ թե *ի*, այլ *ա* հանգով ձև (ինչպես, օրինակ՝ *ուզա՛, վառա՛, գըրա՛*), որը, որքանով մեզ հայտնի է, մինչև օրս պատշաճ կերպով չի բացատրվել ո՛չ տարածամանակյա, ո՛չ էլ համաժամանակյա տեսանկյունից: Փաստարկվում է, որ սովյալ ձևը առաջացել է բարձր կիրառահաճախականություն ունեցող երեք անցողական բայերի (այն է՝ *ստել*, եգ. հրամ. *ասա՛, ածել*, եգ. հրամ. *աժա՛, անել*, եգ. հրամ. *արա՛*) հրամայականի ձևերի համաբանությամբ: Ուստի պատահական չէ, որ սովորաբար միայն *է* խոնարհման անցողական պարզ բայերն են եզակի հրամայականում հանդես բերում *ա* վերջավորությունը, մինչդեռ նույն խոնարհման անանցողականները պահպանել են կանոնիկ *ի* վերջավորությունը, որն էլ, իր հերթին, ծագում է հ. հայ. *ի* վերջավորությունից կամ, հնարավոր է, հիմքավերջյան *եսա՛* երկբարբառից՝ անցնելով է միջակա աստիճանով (այսինքն՝ *եսա՛ > է > ի*): Ավելի ուշ եզակի հրամայականի *ա* վերջավորությունը որոշ խոսվածքներում *է* խոնարհման անցողական պարզ բայերից համաբանությամբ տարածվել է նաև պատճառական բայերի վրա (առավել կանոնավոր կերպով Վաղարշապատի (Էջմիածնի) խոսվածքում, որում այն դարձել է բացառություն չճանաչող գործուն ձևաբանական կանոն):

Գրիգորյան Գ., Ը հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության փոփոխությունները բանավոր խոսքում (հոդված/ անգլերեն)

Հոդվածում քննվում են ժամանակակից արևելահայերենի բանավոր խոսքում *ը* հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության փոփոխությունները՝ պայմանավորված մի շարք գործոններով: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ բանավոր խոսքում ի հայտ եկած ոչ ցանկալի, արա-

տավոր հնչողությունը, որը վերջին տարիներին առկա է բանավոր խոսքում: Մասնավորապես խոսվում է սխալ շեշտադրության մասին և փորձ է արվում հասկանալու, պատճառաբանելու և հիմնավորելու տվյալ երևույթի առաջացման պատճառները: Ներկայացվում է շ հոդի տևողության, ուժգնության և հիմնական տոնի հաճախականության տվյալների հարաբերակցությունը՝ պարզաբանելով և ճշտելով շ ձայնավորի ֆիզիկական բնութագրերը հնչունական տարբեր կառույցներում: Ուսումնասիրման նյութ են եղել վերջին 2 տարիների ընթացքում հավաքած ձայնագրությունները ՋԼՄ-ների մի շարք աղբյուրներից՝ յուրօրյան հարցազրույցներ, համացանցային սոցկայքեր, հեռուստատեսություն, ռադիո և այլն: Դրանք վերցված են հանրային գործիչների, լրագրողների, քաղաքագետների, պատգամավորների բանավոր խոսքից:

Ուսումնասիրության արդյունքում հողվածագիրը հանգել է հետևյալ եզրակացություններին.

1. Խոսակցական լեզվում շ հոդի շեշտադրումը կատարվում է առավելապես տևողության միջոցով. շեշտված շ հոդի տևողությունը 3 անգամ մեծ է անշեշտ հոդի տևողությունից:

2. Շեշտված շ հոդի դեպքում հայերենի ուժային շեշտը փոխակերպվում է տևական շեշտի, քանի որ շեշտադրումն իրականացվում է տևողության հաշվին, որն ապացուցում են տևողության թվային արժեքները: Սա կարելի է բացատրել շեշտադրման արհեստականությամբ, երբ խոսողը տևական է արտաբերում հոդը, որը հարիր չէ հայերենի նորմատիվ արտասանական կանոններին:

3. Ը հոդի սխալ շեշտադրման և դրանով իսկ ֆիզիկական չափերերի փոփոխության պատճառներն են՝ անհարկի կամ իներցիոն շեշտադրումը, կապակցության ապահովումը շեշտադրության հաշվին, թվարկումը և այլն:

**Գրիգորյան Գ., Հայերենի ուժգնության և տևողության
փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում (հոդված)**

Հոդվածում անդրադարձ է կատարվում խոսքի հնչամիավորների ուժգնությանն ու տևողությանը, քանի որ դրանք խոսքի արդյունավետության և ազդեցության երկու կարևոր տարրերն են: Խոսքի զանազան ոճերում այս չափանիշները տարբեր են:

Քննվող թեման արդիական է. հետազոտվում են ժամանակակից արևելահայերենի բանավոր խոսքում տարբեր ոճերի խոսույթների տևողության և ուժգնության փոփոխությունները, որոնք ստեղծում են խոսքի հնչողության զանազանություններ: Առաջին անգամ ներկայացվում է տարբեր ոճերում տևողության և ուժգնության տվյալների հարաբերակցությունը՝ պարզաբանելով և ճշտելով հնչամիավորների ֆիզիկական բնութագրերը ոճային տարբեր միջավայրերում: Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, թե խոսքում որքան կարևոր են ուժգնության և տևողության փոփոխությունները, որոնք ապահովում են հաղորդակցության նպատակայնությունը: Մասնավորապես խոսվում է պաշտոնական և ոչ պաշտոնական ոճերի մասին, փորձ է արվում հասկանալու, թե տարբեր ոճերում ո՞ր չափանիշներն են առավել գործունի տևողությունը, թե՞ ուժգնությունը, կամ գուցե երկուսի համակցությունը:

Ըստ հոդվածագրի՝ ուսումնասիրության արդյունքներով պաշտոնական խոսքն ունի վերահսկվող ուժգնություն և ավելի երկար տևողություն: Ոչ պաշտոնական խոսքը ներառում է ուժգնության և տևողության բնական տատանումներ: Հրապարակային խոսքն օգտագործվում է հանդիսատեսին գրավելու և համոզելու համար՝ ուժգնության տատանումների և ճիշտ դադարների ապահովմամբ:

**Դալայյան Տ., Դավթյան Դ., Արևիքի (Մեղրու շրջանի)
տեղանունները/գյուղանունները. աղբյուրագիտական
և լեզվական դիտարկումներ (հոդված)**

Հոդվածում նշվում է, որ Արևիքը Մեծ Հայքի 9-րդ աշխարհի՝ Սյունիքի ամենահարավային գավառն էր, որն առաջին անգամ հիշատակվում է «Աշխարհացույց» երկում (5-7-րդ դդ.): Հետագոտողների մեծ մասն ընդունում է Դ. Ալիշանի կարծիքը, որ Արևիքի տարածքը սկզբնապես Վասպուրականի Գողթն գավառի մաս է կազմել, հետագայում անջատվել է նրանից և որպես ինքնուրույն գավառ ընդգրկվել Սյունիքի մեջ: Արևիք անվան ստուգաբանությունը նույնպես ցույց է տալիս, որ այն չունի ցեղանվանական ծագում և կազմության ձևով առավել մոտենում է միջնադարյան տեղանուններին, քան նախագրաբարյաններին: Ավելի ուշ Արևիքը տրոհվել է երկու գավառակի՝ հարավային Մեղրի/Մեղրոյ ձոր և հյուսիսային Դաշտոն/Գենվազ. Մեղրու շրջանի արդի սահմանները, սակայն, մոտավորապես համընկնում են պատմական Արևիք գավառին:

Ըստ հոդվածագրի՝ Արևիքի (Մեղրու շրջանի) տեղանուն/գյուղանունները կարելի է բաժանել չորս խմբի.

1. առավել մեծ հավանականությամբ՝ վաղ միջնադարում կազմված անուններ, որոնք հստակ բացատրելի են գրաբարյան բառակազմական կաղապարներով՝ Մեղրի, Լիճք, Կարճալան/Կարճան, Կուրիս, Շրուանիձոր/Շվանիձոր, Վարդանաձոր/Վարդանիձոր, Տաղամայրի/Թաղամայրի, Տաշտուն ևն:

2. նախագրաբարյան անուններ, որոնց ստուգաբանությունը բավական մութ է, մի քանիսի դեպքում հնարավոր են մարական արմատներով կազմություններ՝ Գենվազ, Մալունու/Մալվոլան/Մալև, Լեհվազ, Վահրավար, Տեհի/Թեյ;

3. նոր ժամանակների հայակազմ անուններ՝ Ագարակ, Այգեձոր, Թխկուտ, Կալեր, Նոնաձոր, Վանք;

4. անհայտ ծագման անուններ, որոնք հին աղբյուրներում վկայված չեն՝ Ալվանք, Գուղեմնիս/Գիղեմնաս, Էրնաձոր, Փուշկագ:

Հողվածում փորձ է արվում համապարփակ աղբյուրագիտական վերլուծության ենթարկելու նշված չորս խմբերի տեղանուն /գյուղանունները՝ թե՛ պատմագիտական, թե՛ լեզվաբանական տեսանկյուններից, նաև համեմատելով դրանք և Տաթևի վանքին հարկատու գյուղերի անունները:

Խաչատրյան Օ., Գրիգոր Նարեկացի «Տաղեր և գանձեր» (բնագրային համաբարբառ)

Բնագրային համաբարբառները մեծապես նպաստում են մատենագրական հուշարձանների լեզվի, հատկապես բառապաշարի ուսումնասիրությանը. համաբարբառում հավաստի փաստերով և համակարգված արտացոլվում են տվյալ ստեղծագործությանը վկայված լեզվական իրողությունները: Մույն բնագրային համաբարբառն ընդգրկում է մոտ 13000 բառ ու բառակապակցություն:

Խաչատրյան Օ., Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր»-ի հաճախականության բառարան

Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր» ի հաճախականության բառարանում ներառված են «Տաղեր և գանձեր» ժողովածուի մոտ 13000 բառ և բառակապակցություն, որոնք տրվում են նախ նվազող, ապա այբբենական հաջորդականությամբ:

Կիրառական լեզվաբանության հարցեր, Պրակ Բ (Գիրք)

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2016-17թթ. հրապարակվել են

տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են կիրառական լեզվաբանության ուսումնասիրության խնդիրներին:

**Համբարձույան Վ., Հայ միջնադարյան երկլեզվյան
բառացանկերի նմուշների լեզվի քննություն (մենագրություն)**

Մենագրությունը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում քննվում է այն հարցը, թե միջնադարյան գրավոր մշակույթի մաս կազմող ոչ ծավալուն, համառոտ տեղեկատուների անդրադառնալն առհասարակ ինչ կարևորություն ունի հայոց լեզվի ընդհանուր պատմության համար: Երկրորդում կատարվում են նոր, ավելի մանրամասն՝ բնագրագիտական-ձեռագրագիտական, դիտարկումներ 10-րդ դ. հայտնի Օտունի բառացանկի վերաբերյալ: Երրորդում քննվում են հայերեն-լատիներեն երկլեզվյան ոչ ծավալուն («մանր») բառացանկեր, լեզուների հնչյունական մակարդակում:

Բոլոր դեպքերում նկատի է առնվել այն, թե հիշյալ հարցերը ինչքանով են քննության առարկա եղել անցյալում, այլև համեմատաբար նոր ժամանակներում, իսկ դա, բնականաբար, անհրաժեշտ է ամեն մի խնդիր փոքրիշատե ամբողջական լուծելու համար:

Ուսումնասիրությունը կատարված է հայտնի տպագիր և ձեռագիր նյութերի օգտագործմամբ, որոնք տեղ են գտել միջնադարյան տարբեր կարգի ձեռագրերում՝ իբրև երկլեզվյան բառացանկեր, և որոնք բնավ ուսումնասիրված չեն: Դրանցում բավականին ուշագրավ տվյալներ կան գրական հայերենի, բարբառների վերաբերյալ:

**Միքայելյան Ս., Հայերենում պարսկերենի միջնորդությամբ
կատարված արաբական փոխառությունների հնչյունական
առանձնահատկություններ (հոդված)**

Ամեն մի լեզու գոյության և զարգացման տարբեր փուլերում կատարում է փոխառություններ. սա օրինաչափություն է՝ լեզվական ու արտալեզվական բազմաթիվ գործոններով պայմանավորված:

Հոդվածագիրը նշում է, որ հայերենի արաբական փոխառությունների տարբեր բառաշերտեր, փոխառվելու ժամանակագրությամբ, տարածքային կիրառման բնույթով պայմանավորված, անմիջական կամ միջնորդավորված են: Հայերենագիտական ուսումնասիրություններում, սակայն, նման տարբերակում գրեթե չկա. նշվում է միայն, թե որ լեզվից են ծագում՝ հաճախ շրջանցելով, թե որ լեզվի միջոցով են թափանցել գրական լեզու կամ սովյալ տարածքային տարբերակ (բարբառ): Նկատելի է նաև հակառակ երևույթը. բառային միավորը նշվում է ըստ փոխառության միջնորդ լեզվի՝ առանց ծագման մասին հիշատակելու:

Հոդվածագիրն արձանագրում է, որ հայերենի արաբական փոխառությունների միջնորդ հիմնական լեզուները, պատմական հանգամանքներով պայմանավորված, պարսկերենը, թուրքերենը և ռուսերենն են: Հաճախ այս կամ այն փոխառությունը նշվում է որպես ընդհանուր՝ «արաբապարսկաթուրքական»՝ չհստակեցնելով փոխառու լեզուն: Քանի որ արաբերեն միննույն բառն առկա է այդ լեզուներում, երբեմն իրավամբ դժվար է հստակ նշել հայերեն (բարբառ) ներթափանցման ուղին:

Հոդվածում փորձ է արվում մասամբ տարբերակելու հայերենի (բարբառի)՝ պարսկերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառությունները: Զուգադրական մեթոդի կիրառմամբ ներկայացվում են պարսկերենի և հայերեն բարբառների արևելյան խմբակցության Երևանի (Արարատյան) բարբառի արաբական փոխառությունների հնչյունական համակարգերը, վերհանվում դրանց համապատասխանություններն ու տարբերությունները:

Հողվածագրի կարծիքով՝ մասամբ փոխառվել են բառային միավորների պարսկերեն տարբերակները, մասամբ էլ դրանք հնչյունափոխվել են Երևանի (Արարատյան) բարբառի ազդեցությամբ: Մասնավորապես՝ արաբերեն ծագման միջնորդավորված փոխառություններում, ի տարբերություն բարբառում առկա ավելի վաղ շրջանի փոխառությունների, շնչեղ ձայնեղ բաղաձայնները չեն հնչյունափոխվել, և այդ առումով նմանվում են պարսկերենում գործածվող բառաձևերին: Բարբառի հնչյունական ազդեցություն է շնչեղ խուլ հպական *թ*-ի քմայնացումը բառակզբի դիրքում: Չայնեղ և խուլ շփականները, ինչպես նաև ձայնորդները պարսկերենում և Երևանի (Արարատյան) բարբառում ունեն նույն համապատասխանությունները: Այս շարքից տարբերվում է միայն հայերեն բարբառում *ր* և *ռ* բաղաձայնների՝ ոչ հնչութային արժեքով կիրառությունը:

Հողվածագիրը, զուգադրելով Երևանի բարբառի, արաբերենի և պարսկերենի հնչյունական համակարգերը, եզրակացնում է, որ և՛ Երևանի (Արարատյան) բարբառում, և՛ պարսկերենում արաբերենի հնչյունական համակարգը, առանձին տարբերություններով հանդերձ, հիմնականում արտահայտվել է նույն կերպ. հնչյունների մեծ մասը համապատասխանել է տվյալ լեզվի (բարբառի)՝ հնչարտաբերական հատկանիշներով մոտ հնչյուններին, իսկ այն հնչյունները, որոնք չունեն համարժեքներ, կրել են համապատասխան հնչյունական համակարգերի ազդեցությունները:

Միքայելյան Ս., Արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը ըստ լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի (Ա1-Ա2 մակարդակ) (հողված)

Հողվածում ներկայացվում են օտար լեզուների ուսուցանման ավանդական և արդի մի քանի մեթոդներ՝ պայմանավորված դրանց կիրառման նպատակահարմարությամբ: Տրվում են օտար

լեզվի իմացության միջազգային չափանիշները, ուսուցանման արդի հայեցակարգի սկզբունքները:

Հողվածագիրը, դասավանդման իր փորձից ելնելով, այն կարծիքին է, որ բազմաթիվ առավելություններով հանդերձ, այդ հայեցակարգի՝ սկզբնական փուլի համար ոչ այնքան արդյունավետ տարրերից են միալեզու ուսուցանումը և թարգմանական վարժությունների բացակայությունը: Միալեզու ուսուցանման առավելությունը լսելու հմտությունները զարգացնելն է բնական պայմաններում, որն ավելի նպատակահարմար է կիրառել աստիճանաբար: Ինչ վերաբերում է թարգմանական վարժություններին, դրանք պետք է կազմվեն և տրվեն հընթացս՝ ամեն մի թեմային համապատասխան:

Հողվածագիրն օտար լեզուների ուսուցանման արդի հայեցակարգի համատեքստում քննում է արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման սկզբունքները, նշում ակնկալվող վերջնարդյունքները: Արաբերենը, պատկանելով սեմական լեզվաընտանիքին, ունի լեզվամտածողության և կառուցվածքային տիպաբանական առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակներում, գրի համակարգում և պահանջում են ուսուցանման արդյունավետ մեթոդների համալիր կիրառում: Եվ հաճախ դրանց զուգադրումը ծանոթ լեզուների պարագայում տարբերությունները վերհանելու և արձանագրելու միջոց է:

Հողվածագիրը արաբերենի դասավանդման գործընթացում կարևորում է ընկալման հմտությունները ձևավորելն ու զարգացնելը, որոնք օտար լեզվի ուսումնառության վերջնարդյունքների կարևոր և անհրաժեշտ բաղադրիչներից են: Այսինքն՝ ուսուցանման արդյունավետությունը գնահատվում է լեզվական գիտելիքների և համապատասխան հաղորդակցական կարողությունների համակցված ձեռքբերմամբ: Արձանագրվում է, որ արաբերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդումը, հատկացված դասաժամերի պարագայում, իբրև ուսումնառության վերջնարդյունքներառում է Ա2+ լեզվամակարդակի համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների համալիրը:

Մկրտչյան Մ., Սուբյեկտիվն ու օբյեկտիվն իբրև հակադրության դրսևորում. նոր հայացք դասական մոտեցումներին (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ սուբյեկտիվ իմաստը տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են մեկնաբանում: Տարբեր են նաև այն տեսակետները, թե լեզվաբանական տեսանկյունից ով է առաջինը ձևակերպել սուբյեկտիվ իմաստի մասին գաղափարը: Ընդ որում՝ իմաստի սուբյեկտիվ և օբյեկտիվ լինելը երբեմն բացահայտ, երբեմն էլ ոչ այդքան բացահայտ առկա է այն աշխատություններում, որոնք քիչ թե շատ վերաբերում են բառի գործածությանը: Թերևս Էդ. Ադայանն այն սակավաթիվ հայ լեզվաբաններից է, որոնք անդրադարձել են բառի սուբյեկտիվ իմաստին՝ տարանջատելով այն դեպքերը, երբ օբյեկտիվ հասկացություն նշանակող բառի իմաստը ձեռք է բերում սուբյեկտիվ իմաստ կամ իմաստային երանգավորում: Ըստ այդմ՝ սույն հոդվածի նպատակն է նախ՝ քննել սուբյեկտիվ իմաստի ըմբռնումը լեզվաբանության մեջ, նկարագրել Վ. Ֆոն Հուսթոլդտի, Շ. Բալիի և Է. Բենվեդիստի մոտեցումները խնդրի շուրջ, այնուհետև՝ սուբյեկտիվի ու օբյեկտիվի, սուբյեկտիվության և միջսուբյեկտիվության հարաբերությունները ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից (Լանգակեր, Նույց) և վերջապես՝ ներկայացնել բառի սուբյեկտիվ իմաստի դրսևորման մասին Էդ. Ադայանի տեսակետները, որոնք արտացոլվել են նրա տարբեր տարիների աշխատություններում:

Մկրտչյան Մ., Թարգմանության հաղորդակցական կերպը (Յուրի Լոտմանի՝ հաղորդակցության տեսության լույսի ներքո) (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Տարտու-մոսկովյան նշանագիտական դպրոցի համահիմնադիր, նշանագետ, մշակութաբան և բանասեր Յու. Լոտմանի աշխատություններում «հաղորդակցություն» հասկացության դրսևորումները թարգմանաբանության

լույսի ներքո: Մասնավորապես, համադրության միջոցով անդրադարձ է կատարվում Յու. Լոտմանի վերջին երկու գրքերում՝ «Внутри мыслящих миров» և «Культура и взрыв» «հաղորդակցություն» հասկացության ձևակերպումներին: Հոդվածում փորձ է արվում նկարագրելու Յու. Լոտմանի աշխատություններում «հաղորդակցություն» հասկացության ձևավորմանը նպաստող տեսությունները, ինչպես նաև ընդգծվում են այդ հասկացության յուրահատկությունը, նմանություններն ու տարբերությունները՝ Ֆ. դր Մոսյուրի, Ռ. Յակոբսոնի «հաղորդակցություն» հասկացության տեսություններից: Հոդվածում մանրամասն քննվում են Լոտմանի առաջարկած հաղորդակցության «Ես-Լա» և «Ես-Ես» հաղորդակցական կաղապարները, դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև այդ հաղորդակցական կաղապարների կիրառության հնարավոր շրջանակը: Այստեղ կարևորվում են ինչպես հաղորդակցության մեջ երկխոսության ու թարգմանության գործոնը, այլ նաև ինքնահաղորդակցության ունեցած դերն ու դրսևորման հնարավոր ձևերը: Մասնավորաբար, քննելով թարգմանությունը որպես հաղորդակցություն դիտարկող որոշ տեսություններ, ընդգծվում է Լոտմանի մոտեցումը խնդրին, և առաջ է քաշվում այն դրույթը, որ հաղորդակցությունը Լոտմանի համար թարգմանության տարատեսակ է, թարգմանության մի ուրույն դրսևորում, դրա անբակտելի մասնիկը:

**Սարգսյան Մ., Համբարձումյան Վ., Միքայելյան Ս.,
Բաղդասյան Ս., Հայերենի դերը և ուսուցման խնդիրները
բազմալեզու միջավայրում (մենագրություն)**

«Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում (Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների օրինակով)» ուսումնասիրության նպատակն է ներկայացնել բազմալեզու միջավայրում Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների հայերենի լեզվավիճակը, ինչպես նաև հայերենը կիրառական լեզվաբանության հա-

մատեքստում որպես երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու խնդիրները:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. ուսումնասիրել լեզու և հասարակություն փոխհարաբերությունը (լեզվի և հասարակության փոխհարաբերության բոլոր տարատեսակները՝ լեզու և պատմություն, լեզու և մշակույթ, լեզու և քաղաքականություն, լեզու և դպրոց, լեզու և եկեղեցի և այլն), Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների օրինակով վեր հանել հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ազդեցությունը լեզվավիճակի վրա,

2. ուսումնասիրել բազմալեզվության և երկլեզվության պայմաններն ու առանձնահատկությունները, քննել բազմալեզու միջավայրում լեզուների ուսուցմանը վերաբերող խնդիրները՝ կիրառված սկզբունքներն ըստ անհրաժեշտության օգտագործելու նպատակով,

3. նշել լեզվակիրների հասարակական առանձնահատկությունները՝ կատարելով լեզվական հանրույթի (Լեհաստանի խոշոր քաղաքների և Փարիզի հայկական համայնքների օրինակով) հանրալեզվաբանական քննություն,

4. ուսումնասիրել հայերենը՝ որպես երկրորդ կամ օտար լեզու ուսուցանելու խնդիրները, առաջարկել հայերենը որպես երկրորդ կամ օտար լեզու դասավանդելու նոր սկզբունքներ և չափանիշներ,

5. առաջարկել հայերենի իմացության մակարդակների վերջնարդյունքներ՝ ըստ միջազգային ընդունված ստանդարտի (A, B, C):

Սույն ուսումնասիրությունը, ըստ էության, կիրառական լեզվաբանության և հանրալեզվաբանության միջգիտակարգային հետազոտություն է, որի համար որպես լեզվական հանրույթ ընտրվել են օտարախոս միջավայրում ապրող հայկական համայնքները: Հետազոտության ընթացքում կիրառվել է որակական և քանակա-

կան մեթոդաբանության գործիքակազմը՝ *խորքային հարցազրույցներ, փորձագիտական հարցումներ, փաստաթղթերի վերլուծություն, դիտարկումն հարցաթերթի* լրացում:

**Սարգսյան Մ., Ասիլբեկյան Շ., Բաղդասյան Ա., Խաչիբաբյան Ն.,
Հայերենի ածանցների բառարան (բառարան)**

Բառարանի համար հիմք են ծառայել հետևյալ բառարաններն ու բառացանկերը՝ Է.Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան», Ա. Սուքիասյան «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան», Ս. Գալստյան «Դպրոցական բառակազմական բառարան», «Նոր բառեր» Ա-Դ պրակներ, Փ. Մեյթիխանյան «Հայերենի ուղղագրական նոր բառարան», Ա. Հայրապետյան «Օտար բառերի բառարան», Ա. Սուքիասյան, Զ. Սուքիասյան «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան»:

Ածանցները և համապատասխան օրինակները քաղված են վերը նշված բառարանների նյութի ձևային նկարագրության «FormLang հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարան»-ից, որը գործում է <https://formlang.am/hy/> վեբ հասցեի ներքո:

**Սարգսյան Մ., Թվային լեզվաբանությունը որպես լեզվի
ուսումնասիրության նոր ուղղություն.
զարգացման հեռանկարներ (հոդված/անգլերեն)**

Հոդվածի նպատակն է ներկայացնել լեզվաբանական գիտական հարացույցի փոփոխությունները թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, անդրադառնալ այդ փոփոխությունների դրական և բացասական կողմերին, վեր հանել թվային լեզվաբանության առանձնահատկությունները և զարգացման միտումները, ցույց տալ լեզվաբանական գիտակարգերի համակարգի տեղաշարժերը, գիտակարգերի փոխակերպումները և զարգացման հեռանկարները:

Անդրադառնալով էվոլյուցիոն լեզվաբանության բնագավառում կատարված վերջին հետազոտությունների արդյունքներին, ինչպես նաև համեմատելով լեզվի զարգացման տարբեր փուլերում առկա լեզվաբանական գիտակարգերը՝ հողվածագիրը նշում է, որ այժմ՝ թվային տեխնոլոգիաների մեծ հնարավորությունների դարաշրջանում, լեզվաբանական գիտակարգերը բավական հետաքրքիր փոխակերպումների են ենթարկվել, դրանց գերխնդիրը լեզուն համակողմանի ներկայացնելն է, լեզվի գործածության կողմը բացահայտելը, լեզվի, գիտակարգերի և այլ երևույթների կապերը բացահայտել և այլն: Այժմ լեզվաբանության զարգացման մեջ կարելի է տեսնել հիմնովին նոր որակ՝ թվային լեզվաբանության տեսքով, որը հանդես է գալիս արդեն նորացված և բոլորովին նոր գիտակարգերով: Թվային լեզվաբանությունը կարող է էական հեռանկարներ ստեղծել տարբեր լեզվաբանական կենտրոնների միջև կապերն ամրապնդելու և միջգիտակարգային համատեղ հետազոտություններ իրականացնելու համար: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն զբաղվելու առանձին որոշակի լեզուների նկարագրությամբ, այլև լուծելու տեսական և լեզվափիլիսոփայական խնդիրներ, հավասարապես զբաղվելու թե՛ ներլեզվաբանական, թե՛ արտալեզվաբանական խնդիրներով:

Սարգսյան Մ., Էդուարդ Աղայանը արդի հայագիտության նվիրյալ (հողված)

Շողվածում ներկայացվում են հայ լեզվաբանության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդուարդ Աղայանի գիտական գործունեության առանցքային ուղղությունները՝ զուգակցված կենսագրական իրադարձություններով: Է. Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, անդրադարձել է լեզվաբանության գրեթե բոլոր ոլորտների քննությանը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտութ-

յուն, ժամանակակից հայոց լեզու, Արևելքի գրականության պատմություն և այլն: Նա, իսկապես, հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Մու. Մալխասյանցի գործը արժանավոր ու հետևողական շարունակողներից է, հայագիտության հայրենանվեր ավանդների անընդհատությունը սրբությամբ պահպանողներից մեկը: Աղայանի գիտական ժառանգությունը հավերժ լինելու է տարբեր սերունդների ուսումնասիրության և հետազոտության նյութ, լեզվաբանական նյութի աղայանական մատուցմամբ սկսնակ լեզվաբանները մուտք են գործելու լեզվաբանության մեծ աշխարհ:

**Սարգսյան Մ., Համբարձումյան Վ., Միքայելյան Ս.,
Բաղդասարյան Ս., Հայոց լեզվի ուսուցման
առանձնահատկությունները Լեհաստանի հայ համայնքում
(հաղորդում)**

Բազմալեզու միջավայրում գործածվող լեզուն սովորաբար բավականին տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. պետական լեզվից բացի՝ տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ նույնպես գործածում են, մայրենի լեզուն միայն մեկը չէ, կա նաև տարբեր քաղաքների ու վայրերի բնորոշ ընդգծված մասնագիտացում: Բազմալեզու միջավայրում լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում բնորոշ գծեր, այլև որոշակի ազդեցություն է ունենում տվյալ տեղանքից դուրս ապրող լեզվակիրների վրա:

Հողվածագիրները քննում են լեհական համայնքում հայերենի ուսուցման առանձնահատկությունները և խնդիրները: Անդրադարձ է արվում ուսուցման գործընթացին և՛ դպրոցական, և՛ բուհական համակարգերում: Ինչպես հայկական մյուս, այնպես էլ լեհական համայնքում հայապահպանությունը եղել և շարունակում է մնալ սփյուռքի ամենագլխավոր խնդիրը: Չնայած կատարվող աշխատանքներին՝ նշելի է, որ հետպատերազմյան շրջանից սկսած՝ սկսվել է հայերի ուժացման գործընթաց: Այժմ այդ համայնքի

մեծ մասը հայերեն չգիտի, և նրանց կարելի է ամբողջովին ձուլված համարել լեհական հասարակության մեջ:

Միմոնյան Ն., Էդուարդ Աղայանը բառագետ, ստուգաբան
(հոդված)

Հոդվածը վերաբերում է հայ մեծանուն լեզվաբան Էդուարդ Աղայանի «Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ» ժողովածուում և «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության մեջ ամփոփված բառագիտական-բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններին: Հոդվածագիրը նշում է, որ Էդ. Աղայանն առաջարկել է նոր ստուգաբանություններ հայերենի մի շարք արմատների համար (*աղատ, աղատ, պարեզոտ, տաղ* և այլն), որոնք համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ փոխառություններ: Ընդգծվում է, որ Էդ. Աղայանը կատարել է նաև որոշ հայերեն (*կատիկ, կարշն*) և բարբառային բառերի ստուգաբանություններ և ստուգաբանական ճշգրտումներ:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Kumunts M.S., The Historical and Cultural Heritage of the Nagorno-Karabakh Conflict Zone, Yerevan, "VoskanYerevantsi" pub., 2023, 263 p.

ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բարբառագլիտական հետազոտություններ, Պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 293 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Բառնասյան Ջ. Ա., Շիրակի բարբառային խոսքի դարձվածքների շուրջ, «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 11-16:

2. Բառնասյան Ջ. Ա., Էդ. Աղայանի դիտարկումները հայոց հին ամսանունների հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 64-69:

3. Գևորգյան Գ.Գ., Հայերենի եղանակային իմաստների դրսևավորումները՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիվ 1-12, Մխիթարեան հրատ., 2023, էջ 57-66:

4. Gevorgyan G. G., Observations on Synchronous and Diachronic Manifestations of Constructions of the Present Tense, Gori, N 6, "Philological Researches", 2023, p. 54-58.

5. Gevorgyan G. G., General Characteristics of the Language Features of the City of Sebastia, «Ձահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 26-34.

6. Խաչատրյան Հ. Ռ., Մկրտումյան Ա.Մ., Սահակյան Ն.Գ., Համշենի բարբառի բաղադրյալ կազմությունների իմաստային դրսևորումները, «Ձահուկյանական ընթերցումներ», 1(19), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 14-32:

7. Khachatryan H. R., Lexical Features of Hamshen Dialect, «Ձահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 35-49.

8. Խաչատրյան Հ. Ռ., Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում Շիրակի մարզում (հնչունական համակարգ), «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 26-36:

9. Խաչատրյան Հ. Ռ., Բարբառային որոշ իրողություններ «Սասնա ծռեր» վիպերգի պատումներում, Գավառ, «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութեր, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 274-295:

10. Խաչատրյան Հ.Ռ., Համշենի բարբառին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն (գրախոսություն), «Լեզու և լեզվաբանություն», 1 (28), Ե., ԼԻ հրատ., 2023, Ե., էջ 65-67:

11. Катвалян В.Л., Хачатрян Л.М., Основные направления развития современной армянской лингвистики, Москва, "Филологические науки. Научные доклады высшей школы", вып. 4, 2023, с. 3-9.

12. Կատվալյան Վ.Լ., Հայերենի Ը ձայնավորի մասին, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 5-10:

13. Կատվալյան Վ.Լ., Բարբառային հայերենի շարահյուսական որոշ առանձնահատկությունների շուրջ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., N 15, «Քոփի Փրինթ» հրատ., 2023, էջ 310-320:

14. Կատվալյան Վ.Լ., Ե. Աղայանը բարբառների մասին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված

միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 145-152:

15. Կատվալյան Վ.Լ., Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը, «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 67-74:

16. Կատվալյան Վ.Լ., Սուրմալուի գավառի հայերենի խոսվածքների մասին, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 33-44:

17. Katvalyan V. L., About 500 Dialect Versions of H. Tumanyan's Fairy Tale "The Liar" in One Book, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, p 102-103.

18. Katvalyan V. L., Gharibyan A. K., Some Peculiarities of Manifestation of National Language Thinking in the Epic "Sasna Tsrer", «Ջահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 5-12.

19. Մեսրոպյան Հ.Հ., Սյունիքի ժողովրդական երգերում գործածված բուսանունների իմաստային-գործառական առանձնահատկությունները, Ե., «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ», Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, «Արմավ» հրատ., էջ 348-357:

20. Մեսրոպյան Հ.Հ., Արևիքի տարածաշրջանի բույսերի անուններն ըստ Ղևոնդ Ալիշանի «Միսական» տեղագրության և դրանց բարբառային համարժեքները, «Արևիք» Մեղրի պատմամշակութային ժառանգություն և միջմշակութային կապեր» միջազգային գիտաժողովի նյութեր, ՀԱԻ հրատ., էջ 76-77:

21. Մեսրոպյան Հ. Հ., Նոր Ջուղայի հայկական գրադարանների մասին, Ե., «Բանբեր Հայաստանի գրադարանների», N 1, ՀԱԳ հրատ., 2023, էջ 53-56:

22. Մեսրոպյան Հ. Հ., Բարբառային նիւթերը «Արարատ» հանդեսի էջերում, «Էջմիածին», Դ., 2023, էջ 101-113:

23. Մեսրոպյան Հ. Հ., Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի հայերենագիտական գործունեությունը, Ե., «Կիլիկիո հայոց կաթողի-

կոսությունը պատմության քառուղիներում. Սսից մինչև Անթիլիաս», ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 293-307:

24. Մեսրոպյան Հ. Հ., Ներսես Շնորհալու հանելուկներում գործածված բուսանունների իմաստային-այլաբանական առանձնահատկությունները, «Էջմիածին», Ը, 2023, էջ 84-105:

25. Մեսրոպյան Հ.Հ., Խաչատուր Թամրազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» գրքի ներածություն, «Լուսակն» հրատ., 2023, էջ 1-38:

26. Վարդանյան Ա.Վ., Խաչատրեան Ա.Ս., *Հերիքնագ* անձնանունան ստուգաբանությունը, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», հ. 1-12, Մխիթարեան հրատ., 2023, էջ 67-72:

27. Vardanyan A.V., Review of the Book by V.Katvalyan "Dictionary of Bayazet", Ե., «Պատմաբանասիրական հանդես», հ. 1, «Գիտություն» հրատ., 2023, էջ 271-273:

28. Վարդանյան Ա. Վ., Նախիջևան քաղաքի խոսվածքը, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 70-82:

29. Vardanyan A. V., Armenian-Iranian Language Correlations in the Agulis Dialect and Etymology of the Name of the Armenian Ethnic Group "Zok", «Ջահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 50-64.

30. Վարդանյան Ա.Վ., Նախիջևանի բարբառային համապատկերը, «Ջահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 65-76:

31. Վարդանյան Ա.Վ., Ժողովրդական «Սարի աղջիկ» երգը որպես Կարնո թուրքալեզու հայ բանահյուսության նմուշ, «Շիրակը հայոց բառ ու բանի գանձարան» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 94-101:

32. Վարդանյան Ա.Վ., Փահլևանյան Ա., Ժողովրդական «Սարի աղջիկ» երգի ազգային պատկանելության շուրջ, Արվեստագիտական հանդես, 1, 2023, էջ 137-150:

33. Վարդանյան Ա.Վ., Ժողովրդական ստուգաբանությամբ հնչյունափոխված անձնանուններ հայերենի բարբառներում, «Հա-

յոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 173-182:

34. Վարդանյան Ա.Վ., *Հաշին* տեղանվան ստուգաբանությունը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 254-259:

35. Քումունց Մ.Ս., Նախահայերենի «ժամանակ» հասկացության բառախմաստաբանական խմբի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախի բարբառների), «Դպրատուն. հասարակական գիտություններ», N 1 (15), Ե., «Դիզակ պլուս» հրատ., 2023, էջ 100-111:

36. Քումունց Մ.Ս., Ներսիսյան Լ.Ռ., Մկրտումյան Ա.Ս., Արաբական ծագմամբ փոխառյալ բառերով բայերի տեսական և կիրառական հարցեր, Ե., ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր», N2 (45), ՀՊՄՀ հրատ., 2023, էջ 67-70:

37. Kumunts M.S., Margaryan I.A., Nersisyan L.R., Semantic and Formal Image of Concepts Related to "Sensory Perceptions" Preserved from the Indo-European Language in the Dialect Area, Yerevan, "Wisdom", N 1 (25), ASPU pub., 2023, p. 189-202.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Բառնաայան Ջ., Շիրակի բարբառային խոսքի դարձվածքների շուրջ (հոդված)

Հոդվածագրի հավաստմամբ՝ Շիրակի մարզի բազմաթիվ գյուղերում 19-րդ դարի կեսերին տեղաբնիկների կողքին բնակչություն են հաստատել և առայսօր բնակվում են Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթածների սերունդները՝ այս կամ այն չափով պահպանելով իրենց պապերի խոսվածքը: Հոդվածագիրը քննել է լեզվի ոճավորման հարցում շատ կարևոր և որոշակիորեն վերախմաստավորված, արտահայտության պլանում գրեթե անփոխարինելի կայուն կապակցությունները՝ դարձվածքները,

որոնցով հարուստ են հատկապես բարբառները: Դարձվածային են այն բառակապակցությունները, որոնք իրենց առաջացմամբ կապվում են խոսքի հետ, այսինքն՝ նախապես եղել են սովորական շարահյուսական կապակցություններ և հետագայում, գործածվելով փոխաբերաբար, աստիճանաբար վերածվել են ինքնուրույն բառակապակցության ու ստացել բառային իմաստ՝ հենց այդ փոխաբերական նշանակությամբ ստանալով բառին հատուկ անվանողական դեր: Ըստ հոդվածագրի՝ շատ դեպքերում դրանք ներկայացնում են պատկերավոր լեզվամտածողության հիանալի նմուշներ:

Բառնայան Ջ., Էդ. Աղայանի դիտարկումները հայոց հին ամսանունների հարցի շուրջ (հոդված)

Հոդվածում նշվում է, որհայոց տոմարը հնագույն ժամանակներից է գալիս: Հայոց հին ամսանունները՝ Նավասարդ, Հոռի, Մահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկի, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից և Ավելեաց, մշտապես բանագիտական վեճերի առարկա են եղել: Հայոց ամսանունների գիտական ստուգաբանությամբ զբաղվել են Հ.Աճառյանը, Ստ.Մալխասյանցը, Էդ. Աղայանը, Լ.Հովհաննիսյանը, որոնց հայտնած տեսակետները որոշ դեպքերում համընկնում են, իսկ մի քանի ամսանունների ծագման հարցում առկա են տարակարծություններ: Հարցի քննությանը հոդվածագիրն անդրադառնում է այն նկատառումով, որ այդ ստուգաբանությունների հավաստիության հարցում կողմնորոշվելիս բերված լեզվական փաստերին կարելի է ավելացնել կամ հակադրել բարբառային տվյալները: Նրա կարծիքով՝ իզուր չէ, որ նշանավոր գիտնական Էդ. Աղայանը հայոց ամսանունները ստուգաբանելիս աղբյուրագիտական արժեք է վերագրում հայերենի բարբառների մատուցած փաստերին:

Բարբառագիտական հետազոտություններ. Պրակ Բ.
(գիրք)

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2014 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ոլորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, զուգադրահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր:

**Գևորգյան Գ., Սեբաստիա քաղաքի լեզվական
յուրահատկությունների ընդհանուր բնութագիրը**
(հոդված/անգլերեն)

Սեբաստիան Փոքր Ասիայի հնագույն քաղաքներից էր: Առաջին համաշխարհային պատերազմը խաթարում է սեբաստացի հայերի կյանքը, և նրանց լեզուն դադարում է հաղորդակցման միջոց լինելուց որոշակի տարածքում՝ բնօրրանում, բայց գրավոր նմուշների և նկարագրության առկայության շնորհիվ Սեբաստիայի բարբառը չի վերանում: Սեբաստիա քաղաքի լեզվի առանձնահատկությունները համակողմանի չեն ուսումնասիրվել, մինչդեռ այն հատկապես բովանդակային առումով գիտական հետաքրքրություն է ներկայացնում: Նկատի ունենալով, որ այս կամ այն կերպ պահպանված բարբառային միավորների ուսումնասիրությունը այնուամենայնիվ կարող է որոշ չափով լրացնել բացը՝ հոդվածագիրն անդրադարձել է Սեբաստիա քաղաքի լեզվի առավել էական յուրահատկություններին: Հետազոտությունը կատարվել է Սեբաստիայի խոսվածքը ներկայացնող տետրի տվյալների հիման վրա, որը լրացվել է Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով: Խոսվածքը գրանցվել է Արևե-

յան Հայաստանում ապաստանած սեբաստացի ամուսնական զույգի օգնությամբ: Գրանցված տվյալները դեռ գիտական շրջանառության մեջ չեն դրվել, և, ըստ հողվածագրի, ամփոփում են հարուստ փաստական նյութ, որը թույլ է տալիս հարազատորեն ներկայացնել Սեբաստիայի խոսքի բարբառային առանձնահատկությունները, ուսումնասիրել դրանց առնչվող մի շարք տեսական և գործնական խնդիրներ:

**Գևորգյան Գ.Գ., Դիտարկումներ ներկա ժամանակի
կառուցատիպերի համաժամանակյա և տարժամանակյա
դրսևորումների մասին (հողված/ռուսերեն)**

Հողվածագիրը փաստում է, որ հայերենի բարբառներում ներկա ժամանակը դրսևորվում է կառուցվածքային և ձևաբանական զգալի տարբերություններով: Գրական լեզվի *գրում եմ, սիրում եմ* ձևերին բարբառներում համապատասխանում են հնչյունաքերականական բազմաթիվ տարբերակներով կառուցատիպեր: Պատահական չէ, որ բարբառների ձևաբանական դասակարգումը հիմնված է ներկա ժամանակի ձևերի վրա: Հին հայերենի ներկա ժամանակի և անկատարի ձևերի գործածությունը ստորադասական եղանակի իմաստով աստիճանաբար առաջ է բերել ներկա ժամանակի իմաստն արտահայտող հատուկ ձևերի ստեղծման անհրաժեշտություն: Նախապես այդ նպատակով գործածվել են անորոշ դերբայով և օժանդակ բայով ձևերը: Մկզբնական շրջանում անորոշով ներկան լայնորեն տարածվել է՝ ընդգրկելով հայոց լեզվի գրեթե բոլոր դրսևորումները: Հետագայում այն գործածվել է հայերենի բանավոր տարբերակների միայն մի մասում, մյուս մասում առաջացել է ներկայի նոր կազմություն, որը ձևավորվել է *կու* մասնիկով:

**Գևորգյան Գ., Հայերենի եղանակային իմաստների
դրսևորումները ըստ արտահայտության և բովանդակության
սլանների փոխհարաբերության (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ եղանակի քերականական կարգը դրսևորվում է բայի դիմավոր ձևերով. այն անմիջականորեն կապված է ժամանակի կարգին: Հայերենի բարբառներում միմյանց հակադրվում է 5 եղանակաձև՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական և հրամայական: Դրանք, ինչպես նշում է հոդվածագիրը, հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով, կազմության վերլուծական կամ համադրական տիպով, ինչպես նաև արտահայտած իմաստներով: Հեղինակը փաստում է, որ արևելյան խմբակցության բարբառները, ի տարբերություն արևմտյանի, հատկանշվում են եղանակային այդ 5 ձևերի արտահայտության և բովանդակության սլանների համապատասխանությամբ:

Հոդվածագիրը նշում է, որ հայերենի բարբառներում գործածվող 5 եղանակաձևերից 4-ը՝ սահմանական, հարկադրական, ենթադրական, հրամայական, ըղձականին հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով, ինչպես նաև կազմության վերլուծական կամ համադրական տիպով:

**Գևորգյան Գ., Գյումրի քաղաքի խոսվածքը և նրա լեզվական
առնչությունները Կարևո բարբառի հետ (հոդված)**

Հոդվածագիրը բարբառագիտության և հայոց լեզվի պատմության կարևոր խնդիրներից է համարում բարբառային միավորների քննությունը, որը գիտական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նյութի առումով: Նրա կարծիքով՝ բարբառախոսների նվազումը, լեզվական միասնական միջավայրի բացակայությունը, ինչպես և արտաքին ազդեցությունները սահմանափակում են խոսվածքների գործածության շրջանակները: Նը-

կատի ունենալով, որ միայն պահպանված միավորների քննությունը կարող է ինչ-որ չափով լրացնել բացը, հողվածում ներկայացվում է Կարնո բարբառի դրսևորումներից մեկի՝ Գյումրու խոսվածքի նկարագիրը:

Գյումրի քաղաքի լեզվական բնութագիրը տրվում է ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Լենինական քաղաքի խոսվածքը» աշխատանքի տվյալների: Գյումրու խոսվածքը, ըստ միահատկանիշ ձևաբանական դասակարգման, պատկանում է Կը ճյուղին, ըստ վիճակագրական-բազմահատկանիշ դասակարգման՝ Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Կարինի բարբառին: Գ.Ջահուկյանը Կարինի բարբառը ընդգրկել է հայ բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում և ներկայացրել ըստ 4 վայրերի՝ Կարին, Լենինական, Բաբերդ, Խնդաձոր:

Քննելով Գյումրու խոսվածքի քերականական իրողությունները մայր բարբառի համեմատությամբ՝ հողվածագիրը փաստում է, որ Կարնո բարբառը և Գյումրու խոսվածքը դիտարկված 30 հրնչունական հատկանիշների շրջանակում ունեն 5 տարբերիչ հատկանիշներ, անվանական 26 հատկանիշներից տարբերիչ են 3-ը, իսկ բայական 40 հատկանիշներից՝ 2-ը: Եզրակացվում է, որ Գյումրու խոսվածքը բնութագրվում է արևմտյան խմբակցության բարբառային միավորներին հատուկ զուգաբանություններով, Կարնո բարբառի հետ ունեցած ընդհանրություններով ու հիմնականում խոսվածքային տարբերություններով:

Խաչատրյան Հ., Համշենի բարբառի բաղադրյալ կազմությունների իմաստային դրսևորումները (հողված)

Հողվածն անդրադառնում է Համշենի բարբառի բառակազմական յուրահատկություններին, որոնք դրսևորվում են բաղադրիչների հոմանիշային, շարադասական տարբերություններով, ինչպես նաև բառաբարդման և ածանցման միջոցներով: Հողվածա-

գիրը քննում է բարբառի բառային բաղադրություններից հետաքրքրություն ներկայացնող հոմանիշային որոշ բարդություններ, «չղջիկ», «փայտփորիկ», «զատիկ միջատ», «քնատ» հասկացությունների բառանունները, *հոտ* և *հաւ* բառերից ձևավորված բարդությունները, հայրական և մայրական կողմի պապերին ու տատերին անվանող տարբեր բաղադրություններ, ինչպես նաև իրականության յուրահատուկ ընկալմամբ ձևավորված ուշագրավ այլ բարդություններ:

Խաչատրյան Հ., Բարբառային որոշ իրողություններ «Սասնա Շոեր» վիպերգի պատումներում (հոդված)

Հոդվածագիրը քննում է «Սասնա Շոեր» էպոսի պատումներում առկա բարբառային որոշ իրողություններ: «Սասնա Շոեր» դյուցազնավեպի գրականագիտական, բանահյուսական, առասպելաբանական քննությունից բացի՝ հեղինակը կարևորում է նաև դրա լեզվաբանական ուսումնասիրությունը: Ըստ հոդվածագրի՝ վիպերգի պատումների բառապաշարը բարբառագիտական ուսումնասիրությունների համար բարբառային նյութերի անսպառ շտեմարան է: Քննությունը կարևորվում է նրանով, որ վիպերգի պատումները, գրառվելով 100-150 տարի առաջ, պահպանել են տվյալ ժամանակահատվածի Մշո բարբառի բարբառային համապատկերը: Եվ համեմատելով այսօր ՀՀ տարածքում գործածվող Մշո տարբեր խոսվածքների և էպոսի պատումների բառապաշարները, դրանց քերականական իրողությունները, հեղինակը նկատում է, որ բարբառը զգալի փոփոխություններ է կրել:

Ուսումնասիրելով պատումներում առկա բարբառային բառապաշարը՝ հոդվածագիրը առանձնացնում է այս բարբառին բնորոշ հնչյունական և ձևաբանական մի շարք յուրահատկություններ:

Ըստ հոդվածագրի՝ Մշո բարբառին բնորոշ ձևաբանական շատ հատկանիշներ, սակայն, այսօր կենսունակ չեն: Այսպես՝ գրաբարյան *զ* նախդրով ձևավորված գոյականի որոշյալ հայցա-

կան հոլովը և անձնական դերանունների *Գ*-ով հայցականը այժմյան Մշո խոսվածքներում գրեթե գործածական չեն: Գրաբարյան *ի* նախդրի կիրառությունը համարյա ամբողջովին դուրս է մղվել Մշո բարբառից, իսկ նախադաս կապերը կիրառությամբ աստիճանաբար զիջում են հետադրություններին:

Խաչատրյան Հ., Համշենի բարբառի բառապաշարային առանձնահատկությունները (հոդված/անգլերեն)

Հոդվածագրի հավաստմամբ՝ Համշենի բարբառը հայերենի ինքնատիպ բարբառներից է: Համշենահայերի մի մասը, փրկվելով Մեծ եղեռնից, հաստատվել է Սև ծովի կովկասյան առափնյա շրջաններում: Նրանք կարողացել են պահպանել մայրենի բարբառը և այսօր էլ գործածում են այն՝ իբրև կենդանի հաղորդակցման միջոց: Այս բարբառով շարունակում են խոսել նաև ներկայիս Թուրքիայի Խոփայի և Ռիզեի շրջաններում ապրող կրոնափոխ համշենահայերը:

Համշենի բարբառը ներկայանում է հարուստ ու բազմաշերտ բառապաշարով: Հոդվածագրի նպատակն է ներկայացնել այս բառապաշարի որոշ առանձնահատկություններ: Նա քննությունը կատարում է ըստ պատմական շերտերի, ինչպես նաև բառիմաստային զարգացումների:

Հոդվածում անդրադառնում է Համշենի բարբառում առկա որոշ հնաբանությունների՝ դրանք բաժանելով երկու խմբի՝ 1. գրաբարյան բառեր, որոնք գրական հայերենում այսօր գործածական չեն, սակայն պահպանվել են Համշենի բարբառում, 2. գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ, որոնք առ այսօր գործածում են Համշենի բարբառում:

Համշենի բարբառի բառապաշարում իբրև հնաբանություններ իրենց յուրահատկություններով առանձնացնում է ազգակցական հարաբերություններ արտահայտող որոշակի բառանուններ, որոնցից են *հօրու*, *մօրու*, *նէր*, *բուլիզ* և այլն:

Հողվածագիրը նշում է, որ Համշենի բարբառում բառանունները հաճախ բառիմաստային յուրահատուկ զարգացումներ են դրսևորում. բառի փոխաբերական և փոխանվանական գործածությունները առաջացնում են բառիմաստի զանազան փոփոխություններ, որոնք ժամանակի ընթացքում ամրակայվում են բառին՝ դառնալով նրա գլխավոր իմաստը:

Խաչատրյան Հ., Կարնո բարբառի Բասենի խոսվածքի մի դրսևորում Շիրակի մարզում (հնչյունական համակարգ) (հողված)

Բարբառագիտության խնդիրներից հողվածագիրը կարևոր է համարում բարբառների և խոսվածքների արդի վիճակի նկարագրությունը, քանի որ գաղթերն ու բռնագաղթերը, հատկապես 1915 թ. ցեղասպանությունը, նաև կենսական, կրթական միջավայրը, գրական լեզուն մեծապես ազդում են բարբառների և խոսվածքների հնչյունական, բառապաշարային, նաև քերականական առանձնահատկությունների վրա: Հողվածագիրը նշում է, որ հայ բարբառագիտության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել Շիրակի մարզի բարբառային միավորները: Շիրակի մարզ կատարած գիտարշավների ընթացքում նկատվել է, որ, չնայած այս մարզի Գյումրու և այլ խոսվածքների բառապաշարային և հնչյունական համակարգի ընդհանրություններին և օրինաչափություններին, առկա են նաև ձևաբանական տարբերություններ հատկապես սահմանական եղանակի խոնարհման համակարգում: Շիրակի մարզի բնակավայրերում շատ են Բասենից գաղթածները: Որպես Կարնո բարբառի Բասենի մի խոսվածքի դրսևորում՝ հողվածագիրը քննում է Արթիկի Մեծ Սանթաշ բնակավայրի բարբառային միավորը: Ըստ հողվածագրի՝ այս գյուղի բնակիչների գերակշռող մասը գաղթել է Բասենի Խորասան գյուղից: Նա անդրադառնում է սույն խոսվածքի հնչյունական համակարգին:

Կատվայյան Վ., Խաչատրյան Լ., Արդիի հայ լեզվաբանության զարգացման հիմնական ուղղությունները (հոդված/ռուսերեն)

Հոդվածագիրները, դիտարկելով արդիի հայ լեզվաբանության զարգացման հիմնական ուղղությունները, կարևորում են հայոց լեզվի ամբողջական բարբառագիտական աստլասի ստեղծման աշխատանքները, հայերենի գրական երկու տարբերակների հետագա կանոնարկման և միասնական զարգացման խնդիրները, տերմինաբանության ու տերմինաշինության, զուգադրական-տիպաբանական հետազոտությունների, տեղեկությունների ինքնաշխատ մշակման լեզվաբանական հիմքերի ստեղծման և այլ բնույթի հարցեր: Նշվում է, որ Թուրքիայի և Ադրբեջանի հայաստաց քաղաքականության պատճառով առավել կարևորվում են հայ ազգի և հայոց լեզվի ծագման խնդիրների լուսաբանումն ու հանրայնացումը: Այդ առումով մեծ նշանակություն է ձեռք բերել նաև հայերենի բարբառների հետազոտությունը: Հոդվածագիրները հարկ են համարում մատնանշելու, որ հայերենի արևմտյան և արևելյան բարբառախմբերի 44 բարբառներից շատերը օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի ցեղասպանությունից հետո կորստի են մատնվել: Փաստվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցների կատարած մեծ աշխատանքը բարբառագիտական հետազոտությունների ոլորտում (մասնավորաբար՝ հիշատակվում են ավելի քան 500 բնակավայրերի բնակիչների խոսքի գրանցումները, «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի իրականացումը): Նշվում է ներկայիս Ադրբեջանի տարածքում գործածված շատ բարբառային միավորների կորստի, մյուսների՝ վերացման վտանգի առաջ կանգնած լինելու մասին՝ կապված վերջին իրադարձությունների հետ: Ընդգծվում է նաև Արցախի պետական համալսարանի մասնագետների աշխատանքի կարևորությունը արցախյան բարբառների ուսումնասիրության հարցում: Հոդվածագիրները փաստում են, որ ներկայում առաջնահերթ խնդիրներից են գրական հայերե-

նի նորմավորման կանոնների ճշգրտումը, զարգացման ընթացքի դիտարկումն ու տեսական հիմնավորումները, որոնցով զբաղվում են հատկապես ԵՊՀ հայերենագետները: Լեզվաբանները դժվարություններ ունեն արևմտահայերենի միասնական քերականության ստեղծման և կանոնարկման հարցերում. դա պայմանավորվում է գրական արևմտահայերենի՝ տարբեր երկրներում տարատեսակ դրսևորումներ ունենալու հանգամանքով: Քննվում են հայոց լեզվի տիպաբանության, տերմինաբանության, նորագույն լեզվաբանական տեսությունների վերլուծության հարցեր (Լ. Խաչատրյան): Առանձնացվում են ինքնաշխատ թարգմանության, տեղեկույթի մշակման լեզվաբանական հիմքերի ստեղծման ուղղությամբ աշխատանքները (Վ. Մադոյան, Մ. Սարգսյան): Ըստ հոդվածագիրների՝ հատկապես էական են հայերենի և ռուսերենի զուգադրական քննության ուղղությամբ կատարված աշխատանքները: Վերջին շրջանում ստեղծված արժեքավոր գործերից է Վ. Մադոյանի հեղինակած երկհատոր «Լիակատար ռուս-հայերեն բառարանը», որը որոշակիորեն մասնագիտական ուղղվածություն ունի: Լույս են տեսել նաև չեխերեն-հայերեն, լեհերեն-հայերեն, ուկրաիներեն-հայերեն բառարաններ և այլն: ԵՊՀ-ի, ԵԲԼՀ-ի, ՀՊՄՀ-ի, ՎՊՀ-ի լեզվական ամբիոնները ստեղծել են քերականությանը վերաբերող գրքույկներ՝ զուգադրահամեմատական մեթոդի կիրառումով: Նշվում է նաև, որ Հայաստանում ավանդաբար կա արևելյան լեզուների ուսումնասիրության դպրոց, 20-րդ դարի վերջերից մեծ ուշադրություն է դարձվում չինարենի և հինդի լեզվի ուսումնասիրությանը:

Կատվայան Վ., Սուրմալուի գավառի հայերեն խոսվածքների մասին (հոդված)

Սուրմալուի գավառի խոսվածքներին իր անդրադարձը հոդվածագիրը պայմանավորում է երկու հանգամանքով. նախ՝ տարածքի բարբառային խոսքը ամբողջական ուսումնասիրության ենթարկված չէ, և ապա՝ կան տարբեր տեսակետներ այդ խոս-

վածքների վերաբերյալ: Ուսումնասիրությունը կատարվել է Սուրմալուի գավառի հայաբնակ տասը գյուղերի լեզվական փաստերի քննությամբ՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագետների՝ 20-րդ դարի վերջին քառորդին ՀԲԱ ծրագրով կատարած գրանցումները: Ընդգրկվել են գավառի Ալիջան, Բլուր, Էվջիլար, Կողբ, Կուլաբ, Հախվերիս, Ղազուկշլաղ, Մոլլաղամար, Տաշբուռուն և Փանիկ գյուղերի խոսվածքներին վերաբերող՝ լեզվի ինստիտուտում առկա նյութերը: Հոդվածագիրը նշում է, որ հայ բարբառագիտության մեջ Սուրմալուի խոսակցական լեզուն մի դեպքում վերագրվել է Արարատյան բարբառին, մյուս դեպքում՝ Բայազետի բարբառին: Այդ նկատի ունենալով՝ հետազոտության բուն նպատակն է եղել ներկայացնել Սուրմալուի գյուղերի խոսվածքների ընդհանուր բնութագիրը և նրանց հարաբերությունները Արարատյան և Բայազետի բարբառների հետ: Հոդվածագիրը, կատարելով զուգադրահամեմատական քննություն, կիրառելով վիճակագրական մեթոդ, հանգում է այն եզրակացության, որ Սուրմալուի գավառի բնակավայրերը լեզվական առումով համասեռ չեն եղել, դրանց խոսվածքները չեն կարող համարվել մեկ միասնական բարբառային միավոր՝ Սուրմալուի խոսվածք անվանումով: Հիշյալ գավառի դիտարկված գյուղերը լեզվական հատկանիշով բաժանվում են երեք խմբի.

ա) Արարատյան բարբառի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր (Փանիկ, Բլուր, Էվջիլար, Հախվերիս, Ալիջան, Կողբ).

բ) Բայազետի բարբառի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր (Մոլլաղամար, Կուլաբ).

գ) խառը տիպի խոսվածքներով հաղորդակցվող գյուղեր (Տաշբուռուն, Ղազիկշլաղ):

Հոդվածագրի կարծիքով՝ Սուրմալուի տարածաշրջանի բոլոր խոսվածքներն էլ, գտնվելով Արարատյան և Բայազետի բարբառների շփման գոտում, այս կամ այն չափով համատեղում են այդ բարբառների որոշ հատկանիշներ, ունեն նաև հատկանիշներ, որոնք ընդհանուր են այդ երկու բարբառների համար:

Կատվայան Վ., Հայերենի Ը ձայնավորի մասին (հոդված)

Հոդվածագիրը փաստում է, որ հայերենագիտության ոլորտում դիտարկել են Ը հնչյունի արտաբերական, ֆիզիկական, գործառական-դիրքային հատկանիշները, պատմական զարգացման յուրահատկությունները, առնչությունը հնչյունափոխական իրողություններին և այլն: Հնչյունի արտաբերական բնութագիրը տրրվել է ըստ արտասանության ժամանակ լեզվի ուղղահայաց և հորիզոնական դիրքավորման: Ըստ այդմ՝ Ը-ն միջին շարքի միջին բարձրության ձայնավոր է: Հոդվածագրի կարծիքով՝ պետք է համարել, որ Ը-ն ինչ-որ իմաստով «չեզոք» հնչյուն է, և պատահական չէ, որ խոսողները հաճախ նոր բառ կամ միտք արտահայտելուց առաջ, իրենց կամքից անկախ, արտասանում են ը ձայն, որը, սակայն, լեզվի հնչյուն չէ, այլ ուղղակի խոսքին ուղեկցող, խոսքի մեջ որևէ դեր չունեցող ձայն: Ասվածին որոշակիորեն առնչվում է նաև այն իրողությունը, որ հայերենի որևէ բաղաձայն առանձին միշտ արտասանվում է ը ձայնով: Ըստ ֆիզիկական բնութագրի՝ Ը-ն ձայնավորների մեջ ամենից թույլ և կարճ հնչյունն է՝ և շեշտակիր վանկում երբեք չի հանդիպում: Այս առումով հոդվածագիրը հարկ է համարում փաստելու, որ Ը-ն միավանկ բառերում (բացառությամբ ձայնարկությունների և ըստ, ընդ նախդիրների) չի գործածվում:

Հոդվածագիրն անդրադառնում է նաև Ը հնչյունի գործառական-դիրքային առանձնահատկություններին՝ նշելով, որ հետազոտողները չեն փորձել պարզել, թե բառակզբում Ը-ն ինչու է հանդես գալիս հատկապես վերոնշյալ դեպքերում, և հնչյունահնչյութաբանական վերլուծություններով փորձում է տալ այդ հարցի պատասխանը: Դիտարկվում է նաև Ը-ի գործածությունը այլ դիրքերում, մեկնաբանվում այդ ձայնավորի առնչությունը հնչյունափոխական իրողություններին և այլն: Հոդվածագիրն ընդգծում է, որ նկատելի է, թե ինչպես ը ձայնային միավորը իր նախնական՝ զուտ արտաբերությամբ պայմանավորված գործածությունից աստիճանաբար անցում է կատարում իմաստաբանորեն պայմանա-

վորված դերի՝ ձեռք բերելով հնչույթի արժեք: Նա համամիտ է Ա.Ն. Խաչատրյանի հետ, որ *բ*-ն միշտ չէ, որ հանդես է գալիս իբրև հնչույթ: Առաջարկվում է գրական արևելահայերենի Ը ձայնավորը բնութագրելիս նկատի ունենալ նաև հետևյալը.

1. Ը-ն միավանկ բառում հանդես չի գալիս (ձայնարկություններից բացի).
2. Ի տարբերություն հայերենի մյուս ձայնավորների՝ Ը-ն ինքնուրույն վանկ չի դառնում.
3. Բառասկզբում Ը-ն մեկ բաղաձայնից առաջ հանդես չի գալիս:

Կատվայան Վ., Բարբառային հայերենի շարահյուսական որոշ առանձնահատկությունների շուրջ (հոդված)

Հայ իրականության մեջ բարբառների շարահյուսական յուրահատկությունների ուսումնասիրություն ու նկարագրություն, ըստ հոդվածագրի, գրեթե չի կատարվել: Խնդրին չեն անդրադարձել ընդհանուր բարբառագիտական աշխատությունների հեղինակները, առանձին բարբառային միավորների նվիրված մենագրությունների հեղինակների մեծ մասը: Բարբառների դասակարգման ոչ մի տարբերակում անդրադարձ չկա շարահյուսական իրողություններին, այդպիսիք խիստ սակավ են ընդգրկված Հայերենի բարբառագիտական աստլասի նյութերի հավաքման ծրագրում: Հայերենի բարբառներին նվիրված որոշ մենագրություններում ընդամենը կարելի է գտնել ակնարկներ շարահյուսական որոշ իրողությունների վերաբերյալ: Անդրադառնալով Բայագետի բարբառի շարահյուսական համակարգին՝ հոդվածագիրը դիտարկում է խոսքի կապակցման միջոցները, նախադասության անդամների արտահայտությունը, բարդ նախադասության բաղադրիչների փոխհարաբերությունները, նախադասությունների, խոսքի ձևավորման ու շարահյուսական այլ իրողություններ և մեկնաբանում յուրահատկությունները: Առանձին դիտարկվում են բանաձևային կառույցները, որոնք մեծ գործածականություն ունեն բար-

բառային խոսքում: Մեկնաբանվում են նաև տարածված շարահյուսական-ոճական մի շարք միջոցներ, ինչպիսիք են կրկնությունը, հարցական հնչերանգը, ժխտական կառույցները և այլն: Նշվում է, որ բարբառային խոսքի անկաշկանդությունը երբեմն ի հայտ է բերում քերականական ընդունված կաղապարներով չբացատրվող իրողություններ, որոնք պետք է մեկնաբանվեն այլ միջոցներով ու տրամաբանությամբ:

Կատվայան Վ., Է. Աղայանը բարբառների մասին (հոդված)

Է. Աղայանի՝ հայերենի բարբառներին անդրադարձները, ըստ հոդվածագրի, կարելի է բաժանել երկու խմբի. ա) տեսական խնդիրների արծարծումներ, բ) բարբառագիտական հետազոտություններ: Աշխատանքում նախ վերլուծվում են տեսական խնդիրների աղայանական անդրադարձները: Նշվում է, որ Է. Աղայանը, բարբառը ներկայացնելով իբրև լեզվի տարածական տարբերակ, այն բնորոշում է իբրև ընդհանուր լեզվի ճյուղավորվող համակարգ, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածին՝ որոշակի տարածքում: Հոդվածագրի կարծիքով՝ նման մեկնաբանությամբ երևույթը ներկայացվում է այլ, ավելի ընդհանուր, ինչպես նաև արտալեզվական (տարածություն) իրողությունների նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Նա բարբառը մեկնաբանում է իբրև տվյալ լեզվի՝ գիտակցական նորմավորման ու կարգաբերման չենթարկված, բնական գոյաձևը կամ վիճակը ներկայացնող համակարգ, որն իր հատկանիշների յուրահատուկ գուգորդումներով տարբերվում է նույն լեզվի՝ այլ տարածքներում դրսևորվող համանման համակարգային դրսևորումներից: Լինելով նույն լեզվի դրսևորումներ՝ բարբառները իրենց հիմնական հատկանիշներով նույնական են, սակայն ամեն մի դեպքում ընդհանուր հատկանիշները ուղեկցվում են մասնավոր հատկանիշների յուրահատուկ փնջերով, որոնցով էլ բարբառները դառնում են նույն լեզվի տարբեր գոյաձևեր: Հետևաբար, բարբառների գոյության բուն պատճառը լեզվի բնական

վիճակի անմիօրինակությունն է՝ պայմանավորված լեզուն կրողների և օգտագործողների բնական անմիօրինակությամբ և ապանանս՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարինությամբ: Անդրադարձ է կատարվում նաև բարբառների ծագման հարցի աղայանական մեկնաբանությանը: Է. Աղայանը համարում է, որ պետք է տարբերակել հին հայերեն բարբառներ և նոր հայերեն բարբառներ հասկացությունները: Հոդվածագիրը համարում է, որ հին հայերեն բարբառների միաձուլումով (հետևաբար՝ վերացումով) համաժողովրդական լեզվի առաջացման, ապա վերջինիս քայքայմամբ նոր բարբառների առաջացման աղայանական տեսությունը համոզիչ չէ: Հոդվածագիրը համամիտ է Գ. Ջահուկյանի հետ, որ Է. Աղայանը տալիս է մոտավորապես նույն դասակարգումը, ինչ ավելի վաղ կատարել էր Ա. Ղարիբյանը:

Կատվայան Վ., Շիրակի մարզի բարբառային խոսքի ընդհանուր բնութագիրը (հոդված)

Հոդվածում ներկայացվում են «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2022-2023 թթ. մարզի բնակավայրերում դաշտային հետազոտական աշխատանքների շնորհիվ ձեռք բերված արդյունքներով կատարված դիտարկումներ՝ հիմնականում ուշադրության կենտրոնում ունենալով մարզի խոսվածքների համար առավել բնութագրական իրողություններ: Շիրակի մարզը բարբառային խոսքի տեսանկյունից հետաքրքրական խճանկար է ներկայացնում, որում հաղորդակցվում են Կը և Ում ճյուղերի բարբառային միավորներով: Կը ճյուղի խոսվածքները, ըստ հոդվածագրի, կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) Կարնո բարբառի խոսվածքներ, բ) Մշո բարբառի խոսվածքներ, գ) Կարնո և Մշո բարբառների տարրերով խառը տիպի խոսվածքներ: Ում ճյուղը ներկայացնող բոլոր խոսվածքները խառը տիպի են, որովհետև չնայած ներկան կազմում են *ուս//ըմ* վերջավորությամբ անկատար դերբայով, սակայն առավել կամ պա-

կաս չափով ունեն Կարնո բարբառին բնորոշ հատկանիշներ: Նըշվում է, որ խոսվածքների խմբերը բաշխված չեն ըստ տարածաշրջանների. ամեն մեկում կողք կողքի գործածվում են տարբեր ճյուղերի կամ խառը տիպի խոսվածքներ: Հոդվածագիրը վկայում է, որ ողջ մարգում գերակա դիրք ունի Գյումրու խոսվածքը, որը մարզի բնակիչների շրջանում վերբարբառային, քաղաքային լեզվի համարում ունի և այդ իմաստով՝ գրեթե գրական լեզվի կարգավիճակ: Այդ է պատճառը, որ անկախ ճյուղային պատկանելությունից՝ գրեթե բոլոր խոսվածքների վրա նկատելի է Գյումրու խոսվածքի մեծ ազդեցությունը: Կարնո բարբառի Գյումրու խոսվածքին մերձավոր խոսվածքներ ավելի հաճախ հանդիպում են Գյումրիի մերձակայքի բնակավայրերում: Առանձնանում են Բասենի խոսվածքներով հաղորդակցվող բնակավայրերը, որոնցում բավականին հետաքրքրական և յուրօրինակ իրողություններ են առկա: Բնակավայրերի մեկ այլ խմբում իր հիմնական հատկանիշներով գործածվում է Մշո բարբառը: Կարնո և Մշո բարբառների տարրերով խառը տիպի խոսվածքներում հիմնականում գերիշխողը Կարնո բարբառն է: Ում ճյուղի խոսվածքներ գործածվում են հիմնականում կարսեցիների սերունդներով բնակեցված բնակավայրերում: Հոդվածագրի կարծիքով՝ Կարսի խոսվածքը դեռևս իր բնօրրանում է զուգադրել Կարնո և Արարատյան բարբառների հատկանիշներ՝ լինելով երկուսի սահմանագծում, ինչպես նաև այն պատճառով, որ Կարսը հանգամանքների բերումով ընդունել է արևմտահայ գաղթականության զանգվածներ: Հետագայում՝ նոր հայրենիքում, թերևս Կարնո բարբառի ազդեցությունը ավելի է մեծացել, և Արարատյան բարբառից հիմնականում մնացել է ներկայի կազմության եղանակը: Հոդվածում հանգամանորեն ներկայացվում են տարածաշրջանի բարբառային խոսքին բնորոշ հնչյունաքերականական ու բառապաշարային զգալի քանակության ընդհանուր հատկանիշներ:

**Կատվայան Վ., Ղարիբյան Ա., Ազգային լեզվամտածողության
դրսևորման որոշ յուրահասկոյոյուններ «Մասնա ծներ» էպոսում
(հողված/անզլերեն)**

Հողվածագիրները նշում են, որ էպոսի պատումներին բնորոշ են բարբառային տարբերոյոյուններ, կառուցվածքի և պատմելաձևի զանազանոյոյուններ, որոնց հիմքում տեղային ավանդոյոյներն ու լեզվամտածողոյոյան յուրահասկոյոյուններն են: Նրանք արձանագրում են, որ էպոսում հասկացոյոյուններն ամբողջանում են իրենց իմաստային բաղադրիչների համադրոյոյամբ, որոնք կարելի է դիտարկել տարբեր դրվագներում: «Մասնա ծներ» էպոսը ներկայանում է ոչ միայն իբրև առասպելական ու գեղարվեստական մտածողոյոյան արոյունք, այլև իբրև ազգային գաղափարաբանոյոյան բազմաշերտ ու կուռ համակարգ: Կարևոր է, որ էպոսում հերոսների բնավորոյոյունը բացահայտվում է ոչ թե պատմողի նկարագրոյոյամբ, այլ նրանց արարքներով ու մտածմունքներով, խոսքով ու վարքով: Այդպես էպոսում դրսևորվում են ոչ թե հորինված, այլ իրական պատկերացումներ, կենցաղի ու սովորոյոյների, բնոյոյան պատկերներ, մարդկային բնավորոյոյուններ ու հոգեբանոյոյուններ, և այդ ամենը արտահայտվում է բովանդակոյոյանը հարազատ պարզ լեզվով, անկաշկանդ ու բնական լեզվամտածողոյոյամբ, մանավանդ որ ասացողները սովորական գյուղացիներ են: Հողվածում փորձ է արվում բացահայտելու էպոսում դրսևորվող այն հասկացոյոյունների իմաստային բաղադրիչներն ու կառուցվածքները, որոնք ներկայացնում են աշխարհի ընկալման յուրահասկոյոյունները և իրենց արտահայտչական միջոցներով ազգային լեզվամտածողոյոյան ընդհանուր նկարագրի մաս են կազմում: էպոսի հերոսների և ասացողների աշխարհընկալմանը վերաբերող հասկացոյոյունները, ըստ հողվածագիրների, առնչվում են կենցաղին, աշխատանքին, սննդին, ամուսնոյոյանը, ընտանիքին, զգացմունքին, զբաղմունքին, իդեալին, հերոսի հատկանիշներին, կենդանական աշխարհին, բնական միջավայ-

րին, հայրենիքին, ազգին, պատվին, վարքին, կովին, հագուստին, զենքին, կրոնին, հավատալիքին, ծննդին, մահին և այլն: Հասկացությունների իմաստային դաշտերը կարող են արտահայտված լինել տարբեր եղանակներով, ունենալ տարբեր ընդգրկումներ, սակայն ամեն մի կոնկրետ դեպքում դրանք դիտարկելը կարևոր է լեզվամտածողության յուրահատկությունները բացահայտելու առումով: Իբրև հասկացություններն արտահայտելու լեզվական միջոցներ ու եղանակներ դիտարկվում են բառերի ու բառակապակցությունների կիրառությունները, դարձվածքները, առածներն ու ասացվածքները, բանաձևային կառույցները, անեծքներն ու օրհնանքները, մակդիրները, կրկնությունն ու համեմատությունը, հականիշությունն ու չափազանցությունը և այլն: Մյուս կողմից՝ ամբողջության մեջ էպոսը բարբառագիտական հետազոտությունների համար հսկայաձավալ և անզնահատելի նյութ է ներկայացնում:

Մերսոյան Հ., Հայ բարբառագիտության հարցերը «Արարատ» հանդեսի էջերում (հոդված)

Հոդվածում ներկայացված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Արարատ» պարբերականի էջերում զետեղված բարբառային նյութերը՝ համապատասխան լեզվական քննությամբ և դասակարգմամբ: Դրանք բաժանվում են երեք հիմնական բաժինների:

ա) Բարբառային քերականական ձևեր, բառեր և արտահայտություններ պարունակող քարոզներ, կրոնակեղեցական և այլ բնույթի հոդվածներ:

բ) Զուտ բարբառային բնագրեր կամ բարբառային ընդարձակ բնագրեր պարունակող ուսումնասիրություններ:

գ) Բարբառագիտական ուսումնասիրություններ և բարբառաբանության տեսությանը վերաբերող հարցեր արծարծող հոդվածներ:

«Արարատ» հանդեսն ամփոփում է հսկայաձավալ բարբառային նյութ, որը կարող է դառնալ առանձին հետազոտության թեմա՝ նպաստելով արդի բարբառագիտության զարգացմանը:

**Մեսրոպյան Հ., Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի
հայագիտական գործունեությունը (հոդված)**

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը նշանավոր է նաև գիտակրթական գործունեությամբ: Անվանի աստվածաբանը բազմակողմանիորեն զարգացած անհատականություն էր: Լինելով Ղարաբաղի բարբառը կրող՝ տիրապետում էր ոչ միայն մի քանի օտար լեզուների, այլև Մոկսի և Մուշի բարբառներին: Իր գիտական գործունեության առաջին քայլը Գ. Հովսեփյանը կատարում է հայագիտության բնագավառում՝ երեք հիմնական ուղղություններով՝ ա) *բանահավաքչություն*, բ) *բանագիտություն* և գ) *լեզվաբանություն*:

Գ. Հովսեփյանի լեզվաբանական հետաքրքրություններն ընթանում են երկու ուղղությամբ: 1) *Լեզվի մասին ընդհանուր դրույթներ*: Նա նշում է, որ լեզվի զարգացումը թռիչքաձև չէ, և այն տեղի է ունենում աստիճանաբար՝ լեզվական օրենքների հիման վրա՝ լեզվաբանական գիտությամբ: 2) *Բարբառագիտություն*: Գ. Հովսեփյանը գրական լեզվի զարգացման պայման է համարում ժողովրդական բարբառների ուսումնասիրությունը և ժողովրդական բառերի և դարձվածքների բառարանի ստեղծումը: Այս առումով ընդգծում է համեմատական լեզվաբանության դերը, որը հնարավորություն է ընձեռում բարբառները համեմատելու և հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում որոշելու: Բարբառային լեզվի ուսումնասիրությունը կարևորվում է նաև ժողովրդական երգերի տաղաչափության և բանահյուսական տարբեր նմուշներ ուսումնասիրելու առումով:

**Մեսրոպյան Հ., Ներսես Շնորհալու հանելուկներում գործածված
բուսանունների իմաստային-այլաբանական
առանձնահատկությունները (հոդված)**

Հոդվածում ներկայացվում է հեղինակային հանելուկի ժանրի հիմնադիր Ներսես Շնորհալու հանելուկներում գործածված բուսանունների իմաստագործառական համապատկերը: Բուսական աշխարհի ներկայացնող բառաշերտը, կոնկրետ բուսատեսակ նշելուց բացի, գործածվում է փոխաբերացված, անձնավորված, բարառնաբար կամ դիմառնաբար, դրական կամ բացասական երանգավորումով: Կրոնական բովանդակություն ունեցող հանելուկներում բուսանուններ քիչ են գործածված: Տարբեր պտղանուններ, ծաղկանուններ, ծառանուններ և այլ բուսանուններ, ինչպես նաև այս բառափնջին հարիմաստ լեզվական միավորներ են հանդիպում հատկապես աշխարհիկ բնույթի հանելուկներում:

Բուսանուն բաղադրիչով հանելուկները բաժանված են երեք խմբի՝ 1) ըստ լուծմունքի, այսինքն՝ բացատրության ենթակա բուսանվան, 2) ըստ հանելուկի տեքստում գործածված բուսանվան և 3) ըստ նշված երկու հատկանիշը համատեղող բուսաբանների, երբ բուսատեսակ հատկանշող լուծմունքը մեկնաբանվում, ներկայացվում է այլ բուսանուններով:

Հոդվածագիրը նշում է, որ բուսանունը որպես առաջադրված լուծմունք խմբի մեջ են մտնում այն հանելուկները, որոնք որպես լուծմունք առաջադրում են բացատրության ենթակա բուսատեսակ, որի անունն էլ ընտրված է իբրև հանելուկի վերնագիր: Այսպիսի հանելուկների տեքստերում բուսանուններ գործածված չեն. այս հանելուկներում տվյալ պտուղի այլաբանական նկարագրությունն է:

Հանելուկի բանաստեղծական տողերում գործածված բուսանունները կամ բուսանվանը առնչակից բառերը օգնում են պարզելու լուծմունքը և գուշակելու առաջադրված խնդիրը:

Բուսանուն-լուծմունքը բուսանունով մեկնաբանվող խմբում դասվում են այն հանելուկները, որոնք համատեղում են վերը նըշ-

ված երկու հատկանիշները, այսինքն՝ իբրև վերնագիր ընտրված է մի բուսանուն, որը մեկնաբանվում, ներկայացվում է այլ բուսանվան կամ իմաստակից, առնչակից բառերի միջոցով:

Այլաբանորեն գործածված բուսանունների կիրառությունը պատճառաբանվում է երեք հիմքով՝ ա) ըստ արտաքին նմանության, բ) ըստ հանելուկային և այլաբանական առարկաների ֆունկցիոնալ նմանողության և գ) այլաբանություն հատկանիշների հակաբնական զուգորդմամբ:

**Մեարոսյան Հ., Սյունիքի ժողովրդական երգերում գործածված
բուսանունների իմաստային- գործառական
առանձնահատկությունները (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են զանգեզուրյան ժողովրդական երգերում արտացոլված բարբառային բուսանունները, որոնց հիման վրա բացահայտվում է Սյունիքի բուսական աշխարհին վերաբերող բառաշերտը: Ըստ այդմ՝ կարելի է գաղափար կազմել Զանգեզուրի բուսապատկերի, Գորիսի խոսվածքի նախնական վիճակի, բանասացների լեզվամտածողության, ազգային ավանդույթների, տոների և ծեսերի խորհրդաբանության մասին:

Հոդվածագիրը պարզել է՝ 1) որոշ բառեր ու դարձվածային միավորներ բառարաններում վկայված չեն, կամ առկա են բառիմաստի մեկնաբանության տարբերություններ, 2) բուսանուն նշող փոխառյալ բառեր Սյունիքի ժողովրդական երգերում քիչ են հանդիպում, 3) գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում պարսկաբանությունները, 4) ժողովրդական խաղիկներում բուսաբառերն ունեն ոչ միայն լեզվաոճական արժեք, այլև բանաստեղծական երգատողը հանգստորելու նպատակ, 5) հայերենի բնիկ և փոխառյալ բուսանունների մի փոքր մասն է արտացոլված Սյունիքի ժողովրդական խաղիկներում, 6) համեմատությամբ պարզվել է, որ Շիրակի տարածքի ժողովրդական երգերն աչքի են ընկ-

նում բուսանունների բազմազանությամբ և տեսակային բաշխմամբ, որը չի կարելի ասել Սյունիքի բանաերգերի մասին:

**Մեսրոպյան Հ., Համշենահայության տեղաշարժերը և
բարբառային առանձնահատկությունները**
(«Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» գրքի առաջաբան)

Առաջաբանն ունի հողվածաշար, որում ներկայացվում են Համշենի պատմաշխարհագրությունը, Համշենի բարբառի առանձնահատկությունները, «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» գրքում համալրված բարբառային նյութերի համապատկերը, կատարված է Աբխազիայի հայերի խոսվածքների զուգադրական համեմատություն: Ներկայումս Թուրքիայի Հանրապետությունում բնակվող համշենահայերը, չնայած շրջապատում թուրքերենի լեզվական գերակայությանը, ազգակից համայնքում որպես հաղորդակցության հիմնական միջոց գործածում են Համշենի բարբառը: Համշենահայերը Հայաստան չեն ներգաղթել, առանձին բնակավայրեր չունեն, այդ իսկ պատճառով ՀՀ տարածքում Համշենի բարբառը չի գործածվում և անհասկանալի է հայրենաբնակների համար: Հ. Աճառյանը 20-րդ դարի առաջին կեսին Համշենի տարածքում գործածված խոսվածքները բաժանում է երեք հիմնական մասի՝ ա) *Համշենի* կամ *Ճանիկի*, բ) *Տրապիզոնի* և գ) *Օրդուի*: *Համշենի* կամ *Ճանիկի* խոսվածքով հաղորդակցվել են տարբեր ժամանակներում Արևմտահայաստանի տարբեր վայրերից Համշենում ապաստանած հայերը: *Տրապիզոնի* բարբառով խոսել են Համշենը լքած և Տրապիզոնի շրջակա գյուղերում ապաստանած հայերը, որոնք հետագայում անցնում են Կովկաս և Կուբան: Հին Համշենի սերունդների հաղորդակցության միջոցը *Օրդուի* խոսվածքն է:

Համշենի բարբառի խոսվածքային տարբերակների մասին գաղափար կազմելու համար ներկայացվում և քննվում են Ջենիկի, Տրապիզոնի Ծինգեր և Միմեր, Օրդուի Չիբուխլու գյուղերի, Օրդուի, Մամսոն գավառի, Տրապիզոն քաղաքի լեզվական հաղորդակցության միջոցի իմաստային տարբեր խմբերի պատկանող

հասկացական-բառանվանողական մի շարք գուգաբանություններ: Առաջաբանի հեղինակը փաստում է, որ 20-րդ դ. երկրորդ կեսին, նաև 21-րդի սկզբին Հավճենի խոսվածքների տարբերություններն առանձնակի որակ չեն կազմում: Հ. Աճառյանի նշած բաղաձայնական տարբերությունները գրեթե վերացել են:

Մեսրոպյան Հ., Նոր Ջուղայի հայկական գրադարանների մասին (հոդված)

Հոդվածագիրն անձնական դիտարկման հիման վրա տեղեկություններ է հայտնում ԻԻՀ Սպահան քաղաքի պարսկահայ համայնքի կրթամշակութային կյանքի մասին: Գրադարան հաստատության կայացման համար անհրաժեշտ է երեք կարևոր նախադուր՝ ա) *կրթօջախ*, բ) *տպարան* և գ) *տպարանի արդյունք գիրք*: Հոդվածագիրը մանրամասնորեն ներկայացնում է դրանք:

Հոդվածագրի հավաստմամբ՝ *դպրոց*, *տպարան*, *գիրք* եռաչափ հիմքով ստեղծված՝ Նոր Ջուղայի գրադարանները՝ դարձել են ապահով ապաստան հայության հոգեմտավոր ճգնության արգասիքի՝ կրոնական, դավանաբանական, բարոյախրատական, պատմական, տեղագրական, բանահյուսական, գեղարվեստական և այլ բնույթի բազմաբովանդակ գրքերի համար: Նոր Ջուղան այսօր ունի երեք մեծ գրադարան: Առաջինը 18-րդ դարի սկզբում Վանքի տարածքում հիմնադրված գրադարանն է՝ «Ս. Ներսէս Շնորհալի Մատենադարանը», որը ներկայումս ունի շուրջ 25.000 հայերեն և օտարալեզու գրքեր, ինչպես նաև մամուլի հարուստ հավաքածու: Երկրորդ կարևոր գրադարանային կենտրոնը պատկանում է համալսարանի հայագիտության բաժնին, հայերեն գրքեր կան նաև պետական համալսարանի հանրային կենտրոնական գրադարանում: Նշանակալից է նաև «Արարատ» միության գրադարանը, որը դարձել է ազգային, կրթամշակութային հավաքատեղի վերջին տարիներին Նոր Ջուղայում բնակություն հաստատած Փերիայից, Չարմահալից, Բուրվարից տեղափոխված հայերի համար: Նոր

Ջուդայի հարուստ գրադարաններում պահվում են Փերիայի, Չարմահալի, Բուրմակի և պարսկահայ այլ խոսվածքներին վերաբերող արժեքավոր բարբառագիտական մենագրություններ:

Վարդանյան Ա., Նախիջևան քաղաքի խոսվածքը
(հոդված)

Հոդվածագիրը նախ անդրադառնում է պատմական Հայաստանի նշանավոր մշակութային կենտրոններից մեկի՝ Վասպուրական աշխարհի Նախիջևան քաղաքի անվանման նախնական ձև համարվող *Նախճավան* (*Նախճաւան*) տարբերակին, որից էլ ժողովրդական ստուգաբանությամբ ածանցյալ տարբերակ է համարվել *Նախիջևան* ձևը: Ըստ հեղինակի՝ տարածքի տեղաբնիկ բարբառների ընձեռած նյութը չի բացառում այդ վարկածը, քանի որ ոչ շեշտակիր վանկում *ի* հընչյունի անկման հետևանքով *Նախիջևանը* կարող էր դառնալ *Նախջևան*, ապա կից բաղաձայների փոխադեցական հնչյունափոխությամբ՝ *Նախճևան*, այնուհետև՝ ձայնավորների ներդաշնակությամբ՝ *Նախճավան* (*Նախիջևան*>*Նախջևան*>*Նախճևան* >*Նախճավան*):

Պատմական հանգամանքների բերումով բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, ասպատակությունների և ավերումների՝ Նախիջևանի տարածքի բնակավայրերը, այդ թվում նաև Նախիջևան քաղաքը, ձեռք են բերել բարբառային բազմաշերտություն: 20-րդ դարում քաղաքը մշտապես ունեցել է առավել կամ նվազ թվով հայ բնակչություն: 1988 թվականի վերջնական հայաթափման նախօրյակին Նախիջևանն ուներ շուրջ 500 հայ բնակիչ: Հայ բնակչությունը բաղկացած էր ոչ միայն հնաբնակների, այլև Խոյ-Սալմաստից, Թավրիզից, մերձակա Աստապատ գյուղից, շրջակա տեղաբնիկ գավառներից 19-րդ դարում ներգաղթածների սերունդներից:

Հոդվածագիրը, ուսումնասիրելով խոսվածքի հնչյունաբանական, ձևաբանական, բառագիտական հատկանիշները, պարզել է, որ Նախիջևանի խոսվածքը, ընդհանուր առմամբ ունենա-

լով Արարատյան բարբառի հատկանիշներ, բարբառների փոխազդեցությամբ պայմանավորված՝ ձեռք է բերել նաև Խոյի, Թավրիզի բարբառների, Հյուսիսային Գողթնի միջբարբառի հնչյունաբանական, ձևաբանական և բառագիտական որոշ հատկանիշներ: Այս առումով՝ Նախիջևանի խոսվածքը հեղինակը առավելապես համարում է խառը (անցումային) խոսվածք:

Վարդանյան Ա., Խաչատրյան Ա., Հերիքնագ անձնանունան ստուգաբանությունը (հոդված)

Հայկական որոշ անձնանուններ, ենթարկվելով բարբառների հնչյունափոխական օրենքներին, երբեմն անճանաչելիորեն հեռանում են բնօրինակ ձևերից, և դրանց նախնական ձևի վերականգնումը գրեթե անհնարին է թվում:

Հոդվածագիրներն անձնանունների այս շարքում են դասում նաև հայկական ավանդական *Հերիքնագ* անձնանունը՝ նշելով, որ թեև Հ. Աճառյանը այն ստուգաբանել է որպես «հերիք ինչքան նագ ես անում» բառակապակցության ամփոփված ձև, այնուամենայնիվ, առաջարկում են անձնանվան ծագման այլ վարկած:

Ուսումնասիրելով *նագ* վերջավորությամբ հայկական և պարսկական անձնանունները՝ հոդվածագիրները նշում են կարելի է համոզվել, որ *Հերիքնագ* անձնանվան նախնական ձևը եղել է *Հիրիկնագ*-ը՝ «հիրիկի նագ(անք) ունեցող» իմաստով: Ժամանակի ընթացքում հայերենի ժողովրդական տարբերակներում մթագնելով *հիրիկ* ծաղկանվան իմաստը՝ անձնանունը առավել ուշ շրջանում ժողովրդական ստուգաբանությամբ ստացել է *Հերիքնագ* ձևը:

Ըստ հոդվածագիրների՝ այս վարկածի օգտին է խոսում նաև *հ>խ* հնչյունափոխություն ունեցող Վանի, Խոյի, Ջուղայի, Մարաղայի և այլ բարբառներում *հերիք* («բավական») բառի *խերիք*, *խերիք*, *խերիչ* ձևերի կողքին անձնանվան բացառապես *Հերիքնագ*, *Հերիքնագ* ձևերի, իսկ Ջուղայի բարբառում՝ *Յիրիկնագ* ձևի առկայությունը:

**Վարդանյան Ա., Հայ-իրանական լեզվական առնչությունները
Ագուլիսի բարբառում և հայկական «զոկ» ցեղանվան
ստուգաբանությունը (հոդված/անգլերեն)**

Հոդվածը վերաբերում է Ագուլիսի բարբառում առկա հայ-իրանական լեզվական առնչություններին և այդ դիտարկումների լույսի ներքո՝ հայկական *զոկ* ցեղանվան ստուգաբանությանը:

Հոդվածագիրը նշում է, որ *զոկ* ցեղանվան ստուգաբանությամբ զբաղվել են հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողներ: Հոդվածագիրը նկատում է, որ *զոկ* անվանումը իրականում ոչ թե այլոց կողմից Ագուլիսի բարբառը կրողներին տրված մականուն է եղել, այլ ցեղանուն, որով առաջին հերթին հենց իրենք՝ բարբառը կրողներն են ինքնանվանվել: Վերջինիս վկայությունն են, օրինակ, այն փաստերը, որ Թիֆլիսում անցյալ դարասկզբին լույս տեսնող զոկական պարբերականը կրել է «*Չօկի ճրոյգը*» անունը, Ագուլիսի բարբառով պահպանված բանահյուսական նմուշներում և գրական ստեղծագործություններում գողթնեցիները բացառապես *զոկեր* են անվանվել, իսկ իրենց բնօրրանը՝ *Չոկսուն*: Հաշվի առնելով, որ իրանական լեզուների շարքին դասվող մարերենից չի պահպանվել գրավոր որևէ հիշատակություն (հայտնի են միայն սահմանափակ թվով բառեր), իսկ իրանական լեզուները ներկայացնում են լեզվական սերտ առնչություն, հոդվածագիրը փորձել է համեմատել Ագուլիսի բարբառի և մարերենին ցեղակից լեզուների հատկանիշները:

Մի շարք հատկանիշների համեմատությամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ բարբառում *Չահակ (Չոհակ)* հատուկ անունը զոկերենում կարող էր դառնալ *Չրհոկ*, համեմատելով առկա բոլոր ենթադրություններն ու վարկածները, հիմք ընդունելով հատկապես պատմահայր Մովսես Խորենացու համապատասխան վկայությունն ու անվանի հայագետ Մանուկ Աբեղյանի կարծիքը, ուսումնասիրելով բարբառի ընձեռած նյութը, իրանական լեզուների հետ ակնհայտ հնագույն առնչությունները, հոդվածագիրն առավել հավանական վարկած է համարում զոկերի ցեղանվան (ինքնան-

վանման)՝ Աժդահակ-Չոհակի անունից բխելու վարկածը՝ նշելով, որ այն, անշուշտ, ընդամենը խոսում է հինավուրց հայկական այս ցեղում որոշակի մարական շերտի ներթափանցման պատմական հիշողության մասին:

Վարդանյան Ա., Նախիջևանի բարբառային համապատկերը (հոդված)

Հոդվածում ներկայացված է անցյալ դարի Նախիջևանի տարածքի բարբառային համապատկերը: Նշվում է, որ պատմական Հայաստանի Վասպուրական, Այրարատ և Սյունիք աշխարհների նշանավոր խաչմերուկ Նախիջևանի տարածքը, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, ձեռք է բերել բարբառային խիստ բազմազանություն: 1918-1920թթ. Իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Բնակչության գերակշիռ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի բարբառով (33 բնակավայր), ինչպես նաև Մարաղայի բարբառով (3 բնակավայր): Պահպանվել էին նաև տարածքի տեղաբնիկ բարբառները՝ Ագուլիսի բարբառը (7 բնակավայր), Ջուղայի բարբառը (1 բնակավայր), Արարատյան բարբառը (4 բնակավայր), Ճահուկ-Վայքի միջբարբառը (2 բնակավայր), Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքները (7 բնակավայր), Հյուսիսային Գողթնի խոսվածքները (6 բնակավայր): Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանի բարբառները պատկանում են հայերենի բարբառների «ում» և «լիս» ճյուղերին՝ երկաստիճան, եռաստիճան և քառաստիճան բաղաձայնական համակարգերով, իսկ ըստ Գևորգ Չահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ պատկանում են հայերենի բարբառների արևելյան խմբակ-

ցության արևելյան (Ագուլիս-Մեղրու), հարավարևելյան (Խոյ-Մարադայի), հյուսիսարևելյան (Արարատյան) և ծայրիյուսիսարևելյան (Արցախ-Շամախու) բարբառախմբերին: Ըստ հողվածագրի՝ բարբառային այս բազմազանության մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող Ագուլիսի բարբառը (գոկերենը), որը վերջնականապես մարեց 1989 թվականին, երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի Ցղնա գյուղից արտաքսվեցին բարբառը վերջին կրողները:

Վարդանյան Ա., Լաչին տեղանվան ստուգաբանությունը (հողված)

Հողվածագիրը հնչյունաբանական և իմաստաբանական վերլուծությամբ հայտնում է այն կարծիքը, որ *Լաչին* տեղանունը ուղիղ կապ ունի պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի *Աղահեճ* կամ *Աղահեճք* գավառանվան հետ, թեև իր տարածքով Աղահեճք գավառին համապատասխանող *Լաչինի* շրջանի և համանուն շրջկենտրոնի անունը մեր իրականության մեջ նախկինում առանց որևէ հիմնավորման համարվել է օտար տեղանուն:

Տեղանունը, ըստ հեղինակի, հնչյունափոխվել է Արցախ-Սյունիքի բարբառի հնչյունափոխության օրենքներով՝ հնչյունափոխությունների հետևյալ շղթայով՝ Աղահեճ > *Աղահեճ* > *Լահեճ* > *Լահեճ(ին)* > *Լահճ(ին)* > *Լաճ(ին)* > *Լաչին*: Հնչյունափոխության միջին աստիճանում տեղանվան ուղիղ ձևի վրա ազդեցություն է գործել սեռական հոլովը, իսկ վերջին աստիճանը թեև կարող է պայմանավորված լինել նաև ժողովրդական ստուգաբանությամբ՝ թուրքերեն *laçın* («բազե») բառի և Արցախ-Սյունիքի բարբառում առկա համանուն *լաչին* («բարձրահասակ, պլացիկ») բառերի նմանությամբ, այնուամենայնիվ առկա է հայկական ավանդական տեղանվան միտումնավոր աղավաղման և թուրքականացման երևույթ:

Հողվածագիրը նշում է նաև, որ հայկական տեղանունների թուրքականացման ամենատարածված ձևերից մեկը, թերևս, տեղանունների այնպիսի միտումնավոր խեղաթյուրումն է, որը, անկախ նրա արտահայտած իմաստից, ինչ-որ նշանակություն է ունենում թուրքերենում կամ աղբբեջաներենում, ուստի, խեղաթյուրողների կարծիքով, դա «ապահովում է» տվյալ տեղանվան «թյուրքական ծագում» ունենալու տպավորությունը:

Հողվածում նշվում է նաև *Աղահեճ-Լաչին* անցման հավաստիության մասին վկայող միևնույն հնչյունափոխական կաղապարով հնչյունափոխված հայկական տեղանունների մի ամբողջ շարք կազմող համանման նախադեպերի մասին՝ *Եղեգիս-Ալայազ, Ողոհի (Աղահեցիկ)-Ալահի, Ուղտիք (Ոքաղե)-Օլթի* և այլն:

Վարդանյան Ա., Ժողովրդական «Սարի աղջիկ» երգը որպես Կարևո թուրքալեզու հայ բանահյուսության նմուշ (հողված)

Հողվածը վերաբերում է բազմաթիվ բանավեճերի և բուռն վեճերի առիթ դարձած ժողովրդական «Սարի աղջիկ» երգի հայկական լինելու խնդրին:

Հողվածագիրը նշում է, որ հայկական ժողովրդական «Սարի աղջիկ» (թուրքերեն՝ "Sarı gelin", աղբբեջաներեն՝ "Sarı gəlin" («Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ») երգը տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի և աղբբեջանցիների շրջանում, այլև որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանված, փոխադրված կամ բնօրինակով երգում են տարածաշրջանի այլ ժողովուրդներ՝ պարսիկները, քրդերը, հույները և այլք: Աղբբեջանցիները, սակայն, շարունակում են նկրտումներ դրսևորել նաև ժողովրդական հանրահայտ այս ստեղծագործության հանդեպ և երգը աղբբեջանական համարել:

Երգի թուրքերեն տարբերակը վերլուծելուց առաջ հողվածագիրը հիշեցնում է պատմական իրողությունների թելադրանքով հայ իրականության մեջ դարեր շարունակ ստեղծված, գոյատևած

և մինչև մեր օրերը հասած՝ հայկական թուրքալեզու բանահյուսության՝ ասացվածքների, հանելուկների, երգերի, մասնավորապես՝ ողբերգերի և ժողովրդական երգարվեստի բազմաթիվ այլ նմուշների մասին, որոնց թվին կարելի է դասել նաև քննարկվող երգը: «Մարի աղջիկ» («Մարի գյալին») երգի թուրքերեն տարբերակի բնագրի քննությունը ակնհայտորեն վկայում է, որ այն երգ է կարնեցի հայուհու մասին, ստեղծվել է հայկական միջավայրում՝ հայ հեղինակի կողմից:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հայ երաժշտագետների և ողջ երաժշտասեր հասարակության շրջանում երբեք կասկած չի հարուցել այս երգի մեղեդու հայկական լինելու հանգամանքը, դեռևս 1891 թ. այն գրանցել է Կոմիտասը. մեղեդին հարազատ է հայկական ժողովրդական երգամտածողությանը, հայկական ֆոլկլորում ունի բազմաթիվ տարբերակներ, ակնհայտ է դառնում երգի հայկական լինելու հանգամանքը:

Ամեն մի ժողովրդական երգ, եթե սիրվել և տարածվել է նաև հարևան ժողովուրդների մեջ, չպետք է հիմք դառնա ուրիշի մշակույթը յուրացնելու նկրտումների համար:

**Վարդանյան Ա., Ժողովրդական ստուգաբանությամբ
հնչունափոխված անձնանուններ հայերենի բարբառներում
(հոդված)**

Հոդվածագիրը նախ նշում է հայերենում և այլ լեզուներում առկա ժողովրդական ստուգաբանության բազմաթիվ օրինակներ: Որպես առանձնահատուկ հնչունափոխական երևույթ են ներկայացվում հայկական որոշ անձնանունների՝ ժողովրդական ստուգաբանությամբ հնչունափոխված ձևերը, որոնք երբեմն անճանաչելիորեն հեռանում են բնօրինակներից, ուստի դրանց նախնական ձևը վերականգնելը կամ ստուգաբանությունը դժվարանում է: Հոդվածագիրը ներկայացնում է այդպիսի օրինակներ՝ հնչունափոխության դրսևորումները դիտելով որպես բարբառախոս ժողովրդի՝ անհասկանալի իմաստ ունեցող անձնանունների՝

ժողովրդական ստուգաբանությամբ վերաիմաստավորելու և առավել հասկանալի իմաստներով ընկալելու երևույթ:

Վարդանյան Ա., Փահլևանյան Ա., Ժողովրդական «Մարի աղջիկ» երգի ազգային պատկանելության շուրջ (հոդված)

Հոդվածագիրները բանագիտական և երաժշտագիտական քննության առարկա են դարձրել հայկական ժողովրդական «Մարի աղջիկ» (թուրքերեն՝ "Sarı gelin", ադրբեջաներեն՝ "Sarı gəlin" «Շեկ նորահարս», «Շեկլիկ աղջիկ») երգը, որ տարածված է ոչ միայն հայերի, թուրքերի և ադրբեջանցիների շրջանում, այլև որպես հայկական ժողովրդական երգ՝ թարգմանել, փոխադրել կամ բնօրինակով երգել և երգում են տարածաշրջանի այլ ժողովուրդներ՝ պարսիկները, քրդերը, հույները և այլք: Երգի ազգային պատկանելության շուրջ երկարատև և բուռն վեճեր են եղել հատկապես ադրբեջանցիների հետ, որոնք ժողովրդական հանրահայտ այս ստեղծագործությունը իրենցն են համարում, թեև նրա հայկականության մասին բարձրաձայնել են անգամ արվեստի թուրք հայտնի գործիչներ: Այդուհանդերձ, երգի թուրքերեն տարբերակի բնագիրն է նաև ակնհայտորեն վկայում, որ այն երգ է կարնեցի հայուհու մասին, որ հայկական միջավայրում ստեղծել է հայ հեղինակը: Ինչպես բնագրագիտական, այնպես էլ երաժշտագիտական քննությամբ հաստատվում է, որ մեղեդին հարազատ է հայկական ժողովրդական երգամտածողությանը, բազմաթիվ տարբերակներ ունի հայկական ֆոլկլորում, այդ են վկայում բերված հրապարակումները (ամենահինը գրանցել է Կոմիտասը՝ 1891 թվականին), ուստի ակնհայտ է երգի հայկական ազգային պատկանելության հանգամանքը:

**Քումունց Մ., Նախահայերենի «Ժամանակ» հասկացության
բառախմաստաբանական խմբի բառերի քննություն (ըստ
Սյունիք-Արցախի բարբառների) (հոդված)**

Պատմական բարբառագիտության համար արդիական թեմաներից մեկը բարբառային հայերենի բառապաշարի ստուգաբանական ուսումնասիրությունն է: Պատմահամեմատական մեթոդով հնարավոր է լինում բարբառային հայերենի բառապաշարում առանձնացնել հնդեվրոպական ծագման բառերի շերտը: Հոդվածագիրը փորձում է առանձնացնել «Ժամանակ» թեմատիկ խմբի՝ նախահայերենի բառաշերտի բառերը, համեմատել նախկինում կատարված ուսումնասիրությունների նյութը: Հայերենի ամենամեծ միջբարբառախմբում՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածքում, «Ժամանակ» բառիմաստային խմբում ընդգրկվում են 35 բառեր:

Ըստ հոդվածագրի՝ ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Սյունիք-Արցախի բարբառների բառապաշարի հիմքը բնիկ է, բխում է ընդհանուր հայերենի հիմնական բառաշերտից: Հոդվածագիրը ենթադրում է, որ Սյունիք-Արցախի բարբառախմբի գոյությունը սկսվում է ոչ թե հայերենի գրավոր շրջանից, այլ այն ժամանակից, երբ հնդեվրոպական տարրը հաստատվել է Սյունիք-Արցախի պատմական տարածքում: Եզրակացվում է, որ Սյունիք-Արցախի բարբառային միավորները յուրահատուկ են ոչ միայն հնչյունական և քերականական ինքնուրույն համակարգերով, այլև բառապաշարով:

**Քումունց Մ., Մարգարյան Ի., Ներսիսյան Լ., Հնդեվրոպական
լեզվից բարբառային տարածքում պահպանված «Զգայական
ընկալումների» հետ կապված հասկացությունների իմաստային և
ձևական պատկերը (հոդված/անգլերեն)**

Սյունիքը և Արցախը (Ղարաբաղ) հայոց լեզվի բարբառային ամենամեծ տարածքներն են, որոնք հարուստ բառապաշար ունեն:

Հողվածագիրների հավաստմամբ՝ բարբառային բառապաշարում կան մեծ թվով հնդեվրոպական ծագման բառեր, որոնք բացակայում են ոչ միայն այլ բարբառներում, այլև հնդեվրոպական ծագում ունեցող շատ լեզուներում: Համեմատական լեզվաբանության խնդիրներից մեկն այն է, որ ստուգաբանական ուսումնասիրությունները մեծ ուշադրություն չեն դարձնում բարբառների բառապաշարին: «Զգայական ընկալումներ» թեմատիկ խմբի բառերի ուսումնասիրությունը կարող է կարևոր նյութ տալ պատմական տարածքում ապրող ժողովուրդների կրոնափիլիսոփայական խնդիրների վերաբերյալ: Փորձ է արվել ուսումնասիրելու Սյունիքի և Արցախի բարբառային տարածքի հին բառերը, որոնք վերաբերում են «զգայական ընկալումներին»: Հողվածում ստուգաբանվում է *շաղփաղփ* բառը՝ «1. անդրադարձ, փայլ, 2. լույս, պայծառ, փայլուն», որն Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հրնչունական և իմաստային տարբերակ ունի: Պատմահամեմատական մեթոդով փորձ է արվել ստուգելու բառը և միաժամանակ բացահայտելու դրա ընկալումը Աստվածաշնչի թարգմանության ամենահին օրինակներում: Ըստ հողվածագիրների՝ հաճախ լեզվում պահպանված արխաիզմների ստուգաբանության միջոցով արժեքավոր տեղեկություններ են ստացվում, և բացահայտվում են հին աշխարհի կրոնափիլիսոփայական ըմբռնումները:

**Քումունց Մ., Ներսիսյան Լ., Մկրտումյան Ա., Արաբական
ծագմամբ փոխառյալ բառերով բայերի տեսական և
կիրառական հարցեր (հողված)**

Հողվածագիրները նշում են, որ օտար արմատներով կազմված բայերի ուսումնասիրության ժամանակ տարբեր հարցեր են առաջանում: Դրանցից մեկն այն է, թե այդպիսի կազմությունները փոխառյալ են, թե ոչ: Լեզվաբանական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Հողվածագիրները քննում են Սյունիք-Արցախի բարբառային տարածքի արաբական

ծագման փոխառությունները, անհրաժեշտության դեպքում դրանք գուգահեռում վաղ աշխարհաբարում և միջին հայերենում գոյություն ունեցող ձևերին: Հայերենում բայեր դարձած արաբական ծագման փոխառությունները տարբերվում են մյուս փոխառություններից. ինչպես օրինակ՝ բառերի հիմնական մասն ունի և՛ անկախ գործածություն, և՛ դառնում է բայական հարադրության անվանական բաղադրիչ, ի տարբերություն թյուրքական և պարսկական փոխառությունների, որոնցում ինչ-որ ձևով հասկացվում են փոխատու լեզվի քերականական կամ ածանցական ձևերը, արաբական փոխառություններում դրանք չեն ընկալվում: Հոդվածագիրների կարծիքով՝ բանավոր փոխառության քննության ընթացքում քիչ ուշադրություն է դարձվում փոխատու լեզվի քերականական և բառակազմական կաղապարների նշանակությանը: Երևոյթը առավել նկատելի է արաբական այն փոխառություններում, որոնք միջնորդությամբ են անցել կամ ընդհանրապես տարածված են եղել արևելքի լեզուներում: Միայն բառաքննական վերլուծությամբ կարելի է հայտնաբերել փոխատու լեզվի քերականական կամ ածանցական ձևերը: Արաբական ծագման որոշ փոխառություններ անցել են այլ լեզուների միջոցով: Արաբերենից անմիջական կամ միջնորդությամբ անցած փոխառությունների մեծ մասը բայական հարադրություններ է կազմել:

**Քումունց Մ., Մարգարյան Ի., Ներսիսյան Լ., Պատմական
Հարանդ գավառի Ակներ բնակավայրը (հոդված)**

Հայկական տեղանունների ուսումնասիրությունը հայագիտության կարևոր բնագավառներից է դարձել մասնավորապես վերջին շրջանում՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված: Լեզվաբանության մեջ յուրահատուկ բնագավառ է հատկանունաբանությունը (օնոմաստիկա), որի ենթաբնագավառներից մեկը՝ տեղանվանագիտությունը (տոպոնիմիկա), ուղղակի կամ անուղղակիորեն առնչվում է այլ գի-

տակարգերի, նյութ է քաղում ոչ միայն լեզվաբանությունից, այլև պատմությունից, աշխարհագրությունից, ազգագրությունից:

Հողվածագիրների նպատակն է անդրադառնալ ոչ միայն պատմական Հաբանդ գավառի բնակավայրերից մեկին՝ Ակներ-Բռունի հնավայրին, այլև տարածքի հիշարժան տեղանունների քննությամբ: Ակներ բնակավայրի «Խաչին օս» կոչված տարածքում է գտնվում ավանդազրույցներում պահպանված և այսօր էլ գոյություն ունեցող Սուրբ Կակոփի ժայռափոր սրբավայրը: Խնդիր է եղել պարզելու, թե մոտավորապես ո՞ր ժամանակաշրջանում է ձևավորվել սրբատեղին, ի՞նչ անուն կարող էր ունենալ նախաքրիստոնեական շրջանում, և ինչ պայմաններում է այն փոփոխվել ու հասել մեր օրերը:

Հողվածի բարբառային նյութի համեմատական քննությունից պարզվում է, որ Կակոփ հատկանունը առաջացել է հասարակ անունից:

Քումունց Մ., Պատմական Միւնիքի Բաղ գաւառի Երիցվանք-Արծուանիկ վանական համալիրը եւ բնակավայրը. տեղանունան ստուգաբանութիւն (հողված)

Հողվածը վերաբերում է պատմական Մյունիքի Բաղք գավառի՝ ներկայիս Մյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Երիցվանք բնակավայր-հուշարձանին, հատկանվան ծագմանը: Ըստ ավանդազրույցների՝ Երիցվանքից է առաջացել Արծվանիկ բնակավայրի անունը, որի վարչական տարածքում է Երիցվանքի եկեղեցական համալիրը: Պատմական և հնագիտական աշխատություններում նշվում է, որ Արծվանիկում պահպանվել են Ք. ա. II-I հազարամյակների հայկական բնակության հետքեր և հուշարձաններ: Պահպանվել են նաև ուրարտական ժամանակաշրջանի ամրոցի ավերակներ, դամբարանադաշտեր և այլն: Ըստ ավանդազրույցի՝ Երեցավանքն իր անունը ստացել է Երիցակ անունով հայ հոգևորականից: Հողվածագիրը հնարավոր է համարում, որ տե-

ղանունը ժողովրդական ստուգաբանության ենթարկվել է քրիստոնեությունից հետո: Տեղանվան առաջացումը, ըստ ուսումնասիրության, առնչակցվում է *արծուի-ելան-իք* կաղապարին, որը նույն ժողովրդական ստուգաբանությամբ կարող էր դառնալ *Երեծ*, ապա *Երեծ վանք*: Հոդվածում ներկայացվում է ստուգաբանական երկու վարկած: Հոդվածագրի կարծիքով՝ Հայաստանի տարբեր վայրերում հանդիպող ուրարտական *արծ* արմատը, որ առկա է տեղանուններում, մատնանշում է ոչ թե կոնկրետ քաղաքի անուն, այլ այդ վայրին բնորոշ անվանում, այսինքն՝ այդ տարածքի՝ «երկրի» ինչ-որ բանով հայտնի լինելը:

Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2023 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց» (աշխարհաբար թարգմանություն), Երուսաղեմ, Սրբոց Յակոբեանց տպարան, 2023, 1010 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր, պրակ Բ, Ե., ԼԻ հրատ., 2023, 173 էջ:

Հայոց պատմության դրվագներ (V-VI դարեր), Ե., ԼԻ հրատ., 2023, 134 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Grigoryan S. M., Meaning Movementsof Legal Concepts (Narrowing, Expanstoin or Individual Application) in the Works of Grigor Tatevatsi, Kutaisi, "Language and Culture", N 28, 2023, p. 39-42:

2. Գրիգորյան Ս.Մ., Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունները հայերենի բառարաններում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 58-67:

3. Թաղևոսյան Հ.Ս., Դիտարկումներ միջնադարյան բժշկարաններում կիրառված որոշ իմաստային դրսևորումների վերա-

բերյալ, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 78-86:

4. Թորոսյան Հ.Վ., Անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային-քերականական առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված հայագիտության հարցերին և միջմշակութային հաղորդակցությանը, Հանրապետական գիտաժողովի նյութեր, ՀՊՄՀ հրատ., Ե., 2023, էջ 93-99:

5. Խաչատրյան Վ. Մ., Գոյականի հոգնակիակազմության շեղումներն արդի հայերենում. կանոնարկման առաջարկներ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Աղայանի ծննդյան 110-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 131-144:

6. Խաչատրյան Վ.Մ., Բարբառային բառեր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 87-103:

7. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանունները, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 121-122:

8. Հովհաննիսյան Լ.Շ., Մանուկ Աբեղյանը և հայերենի ուղղագրության հարցը, Ե., Հուշարձան Մանուկ Աբեղյանին, ԵՊՀ հրատ., 2023, էջ 182-186:

9. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն, «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 45-49:

10. Հովհաննիսյան Լ.Շ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի շուրջ, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 19-20:

11. Հովհաննիսյան Ն.Գ., Նորակազմ բայեր ԺԲ.-ԺՁ. դարերից աւանդուած ձեռագիր բառարաններում, «Էջմիածին», Է, 2023, էջ 65-78.

12. Հովհաննիսյան Ն.Գ., Հումանշտությունն ըստ միջնադարի հայ քերականների, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. բանասիրություն», N 2 (41), Ե., ԵՊՀ հրատ., 2023, էջ 75-82:

13. Հովհաննիսյան Ն.Գ., Նորակազմ բառեր XII- XIII դարերից ավանդված ձեռագիր բառարաններում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 123-132:

14. Mkhitarian G. M., The Researchers of the H. Acharyan Institute of Language of NAS RA at the XII International Conference of Armenian Linguistics (Boston, May 31 to June 2), «Ջահուկյանական ընթերցումներ», 1 (19), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 99-101.

15. Mkhitarian G. M., A Compendium of Armenian Bibliography (V-VII Centuries), «Ջահուկյանական ընթերցումներ», 1(19), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 104-106.

16. Mkhitarian G. M., The Influence of Bible Translation in the Preservation and Development of the Armenian Language, «Ջահուկյանական ընթերցումներ», 2 (20), Ե., ԼԻ հրատ., 2023, p. 13-25.

17. Մխիթարյան Գ.Մ., Գոյականի սեռի քերականական կարգին առնչվող իրողություններ հայերենում, «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԼԻ հրատ., 2023, էջ 11-18:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Ս. Գրիգորյան, Իրավական հասկացությունների իմաստային տեղաշարժեր (բառիմաստի նեղացում, ընդլայնում կամ ինքնատիպ կիրառություն) Գրիգոր Տաթևացու մի շարք աշխատություններում (հոդված/անգլերեն)

Հոդվածում քննվել են Գրիգոր Տաթևացու երկերում գործածված իրավական այն հասկացությունները, որոնք հետագայում դրսևորել են իմաստային տեղաշարժեր (բառիմաստի նեղացում, ընդլայնում կամ ինքնատիպ կիրառություն): Ըստ հոդվածագրի՝ այդպիսին է գրաբարում գործածվող *օժիտ* բառը, որ նախապես նշանակել է «փեսայի կողմից հարսին բերվող նվեր», իսկ հետագայում դարձել է հայրական տնից հարսի կողմից բերվող բաժին: Հոդվածագիրն անդրադարձել է անվանումների հեղինակային նոր կիրառություններին, որոնք գրաբարյան բառարաններում արձանագրված չեն, իսկ «Հայերեն արմատական բառարան»-ում Հ. Աճառյանը նշում է միայն Գ. Տաթևացու օրինակը: Այս հասկացությունների քննության ընտրությունը պայմանավորվել է դրանց աշխարհի շատ ժողովուրդների ծանոթ լինելով:

Ս. Գրիգորյան, Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մի շարք իրավական հասկացությունները հայերենի բառարաններում (հոդված)

Իրավագիտական ուսումնասիրություններում, որպես կանոն, առանձնացվում է մի քանի աղբյուր՝ սովորութային իրավունք, եկեղեցական կանոններ, փոխառու օրենքներ, ազգային դատաստանագրքեր, մատենագիտական աշխատանքներ: Գ. Տաթևացու գործածած հասկացությունները մատենագիտական աշխատանքներից քաղվող տեղեկություններ են: Այդուհանդերձ, նրա հարցադրումները թե՛ սովորութային իրավունքից են, թե՛ ազգային դատաստանագրքերից և առավել ևս եկեղեցական կա-

նուններից: Թեպետ Գ. Տաթևացին իրավական կարգավորումներին նվիրված առանձին աշխատություն չի ստեղծել, սակայն նրա բազմաթիվ աշխատություններում արծարծված իրավական հարցադրումներում և վերլուծություններում գործածվում են հասկացություններ, որոնց մի մասը Հայոց Կանոնագրքից է և գրանցված է գրաբարի բառարաններում: Մյուս կողմից՝ հեղինակը, ըստ հողվածագրի, ժամանակի թելադրանքով անդրադարձել է նաև իր օրերի խնդիրներին, և նրա հարցադրումները տեղեկություն են հաղորդում ոչ միայն առկա խնդիրների, այլև դրանց վերաբերյալ հեղինակի տեսակետի մասին: Այս դիտակետից հողվածագիրն առանձնացնում է մի շարք նորակազմ հասկացություններ, համեմատում հայերենի բառարանների ընձեռած նյութը և նշում, որ դրանք երբեմն վկայված են նույն իմաստով, կան իմաստային տեղաշարժեր, բառեր էլ կան, որոնք վկայված չեն, այսինքն՝ նորակազմ են:

Բառիմաստի փոփոխության մասին ամբողջական պատկերացում տալու նպատակով հողվածագիրը արձանագրել է նաև տվյալ բառի բարբառային տարբերակները:

Թաղևոսյան Հ., Միջնադարյան բժշկարաններում կիրառված բառիմաստային որոշ դրսևորումների շուրջ (հողված)

Միջնադարյան բժշկարաններում (12-16-րդ դդ.) արձանագրված են ինչպես հին հայերեն, այնպես էլ միջին հայերեն բառերի՝ գրաբարին անձանոթ իմաստներով կիրառություններ: Այդ բառերը, պահպանելով իրենց գրաբարյան հիմնական իմաստները, գործածվել են նաև նոր նշանակությամբ:

Հողվածում ներկայացվում են վեց բժշկարաններում («Ջերմանց մխիթարութիւն», «Յաղագս կազմութեան մարդոյն», «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց, «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ», «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ») ախտանվան կամ բժշկական

այլ տերմինի նշանակությամբ կիրառված որոշ գոյականներ և գոյականաբար գործածված դերբայական ձևեր (անորոշ, անցյալ, հարակատար և ենթակայական): Հոդվածագիրը դիտարկում է բժշկարաններում գործածվող բառիմաստի 21 նոր դրսևորումներ, որոնք, նրա կարծիքով, պայմանավորված են երեք հիմնական գործոնով՝ արաբերենի ազդեցություն, բժիշկ հեղինակների ստեղծած տերմիններ և ժողովրդախոսակցական լեզվի ազդեցություն: Այդ բառերը՝ արտահայտած տերմինային իմաստներով, հիմնականում բնորոշ են միջին հայերենին, թեև դրանցից ութը արձանագրված չեն «Միջին հայերենի բառարան»-ում:

Թորոսյան Հ., Անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային-քերականական առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքներն անձին բնութագրում են տարբեր տեսանկյուններից՝ ֆիզիկական, զգացական, կենցաղային, հասարակական, բարոյահոգեբանական, աշխարհայացքի և այլն: Հաղորդակցական դարձվածքները լեզվում գոյություն ունեցող պատրաստի կապակցություններ են, ունեն նախադասությանը բնորոշ հատկանիշներ՝ ստորոգում, հնչերանգային ավարտվածություն:

Ձուգադրվող լեզուների տարբեր դարձվածաբանական բառարանների լեզվական նյութի հիման վրա հոդվածագիրը ներկայացնում է արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային և քերականական հետևյալ առանձնահատկությունները.

ա) Ազատ կապակցության սկզբունքով կազմված դարձվածքներ, որոնց բայական բաղադրիչը հիմնականում արտահայտվում է երրորդ դեմքով:

բ) Բայ-ստորոգյալը հանդես է գալիս եղանակաժամանակային սահմանափակ ձևերով:

գ) Հաղորդակացական կապակցությունները հանդես են գալիս պատմողական, հարցական, մասամբ՝ բացականչական երանգով:

Խաչատրյան Վ., Գոյականի հոգնակիակազմության շեղումներն արդի հայերենում, կանոնարկման առաջարկներ (հոդված)

Ըստ հոդվածագրի՝ գրական արևելահայերենում թեև գործում են գոյականի հոգնակիակազմության որոշակի կանոններ, բայց մի շարք բառերի դեպքում հոգնակիակազմիչները դեռևս հստակ չեն: Դրանով պայմանավորված՝ համապատասխան բառարաններում և քերականական աշխատություններում նույն գոյականների համար հաճախ նշվում են բոլորովին տարբեր հոգնակիակազմիչներ: Շեղումները պայմանավորված են տարբեր հիմքերի համաբանությամբ, բաշխական (ստացական) հոգնակերտմամբ, միավանկ արմատական վերջնաբաղադրիչի թե՛ գոյականական և թե՛ բայական իմաստով ընկալմամբ, վերջնաբաղադրիչների իմաստի մթագնմամբ և այլ գործոններով:

Հոդվածագիրը ներկայացնում է շեղումների բնույթը, այս կամ այն ձևի տարածվածությունը՝ հիմք ընդունելով արևելահայերենի ազգային կորպուսի տվյալները, նշում է նաև խրախուսելի ձևերը:

Խաչատրյան Վ., Բարբառային բառեր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում (հոդված)

Հոդվածում քննվում են 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդի պատմական երկում վկայված այն բառերը, որոնք, ամենայն հավանականությամբ, նշված ժամանակաշրջանի համար բարբառային են: Դրանք, ըստ բառարանային տվյալների, հիմնականում եզակի վկայությամբ բառեր են, որոնք մասամբ աղերսվում են արդի բարբառային հայերենին: Դիտարկվում են նաև

գրաբարյան օրինաչափություններից շեղվող բառեր, որոնք հընչ-յունական և բառակազմական առումներով նույնպես առնչվում են ներկայիս բարբառներին: Քննությամբ պարզվում է, որ խնդրո առարկա բառերն առավելապես բնորոշ են Ղարաբաղի բարբառին:

Հայոց պատմության դրվագներ (V-VII դդ.)

(Էլեկտրոնային ժողովածու)

Հայոց պատմագրության հետազոտության ոլորտն ու ընդգրկման սահմանները, թվում է, վաղուց են ճշտվել, և անդրադարձը պատմիչների երկերին ասես կրկնություն է: Բայց դա միայն արտաքուստ: Այսօր Հայաստանի Հանրապետության առջև շատ բարդ ու բազմաշերտ մարտահրավերներ են ծառայել. XXI դարում Հայաստանը վերստին հայտնվել է տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների կիզակետում: Արդի աշխարհաքաղաքական բուռն ընթացքները նույնքան մտահոգիչ են մեր ժողովրդի համար, ինչպես մեր հազարամյա պատմության ընթացքում: Դրանց դիմակայելու առաջին և անհրաժեշտ պայմանը այդ մարտահրավերները ճիշտ ընկալելն է և համարժեք արձագանքելը: Հայ պատմիչների երկերում արտացոլված են ինչպես հայոց արքաների դիվանագիտությունը՝ ճկուն, բայց ոչ պարտվողական, իրատես, բայց ոչ զիջող, այնպես էլ Հայաստանի գերիշխանության, տարածքային ամբողջականության ու անվտանգության պահպանումը, որը մեր ժողովրդի համար ազգային սրբություն է: Պատմությունը կրկնվելու հատկություն ունի: Գուցե դա առնչվում է մեր ժողովրդի հավաքական հիշողությանը և ազգային հոգեբանությանը, իսկ դրանք համարժեք ընկալելու և արձագանքելու համար պատմական հիշողությունը պարբերաբար թարմացնել է պետք: Մարդկային մտածողությունը երբեք նույն հարթության վրա չի մնում. մշտապես ընդլայնվում է մեր ճանաչողությունը շրջապատող աշխարհի վերաբերյալ, և ըստ այդմ՝ վերաիմաստավորվում են հայոց պատմության դեպքերը, իրադարձությունները, իսկ դրանք վերլուծելիս առաջանում են նոր տեսակետներ, նոր

վարկածներ, պատճառափետևանքային կապերի նոր մեկնություններ:

Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի ցուցական դերանունները (հոդված)

Քննության նպատակը բարբառի ցուցական դերանունների հնաբանության բացահայտումն է, որը, բնականաբար հոդվածագիրը քննում է գրաբար-բարբառ փոխհարաբերությունների շրջանակում: Վիճակագրական տվյալները վկայում են, որ դրանք V դ. թարգմանական գրավոր աղբյուրներում հաճախական չեն: Ըստ հեղինակի՝ քերականական մի շարք իրողություններ պարզաբանելու համար պետք է ուշադրություն դարձնել գրավոր և բանավոր հաղորդակցության առանձնահատկություններին:

Գրավոր և բանավոր խոսքը տարբերակելու վարկածը հիմնավորելու համար հոդվածագիրն անհրաժեշտ է համարում V դ. գրավոր աղբյուրների մանրագնին քննություն, համատեքստի պարզաբանում:

Հովհաննիսյան Լ., Մանուկ Աբեղյանը և ուղղագրության հարցը (հոդված)

Հոդվածում նշվում է, որ դասական (ավանդական) ուղղագրության խախտումներ նկատելի էին արդեն գրաբարում, ավելի ցայտուն ու բազմաբնույթ՝ միջին հայերենում և աշխարհաբարում: Ավելի ուշ՝ XIX դարի վերջերին, ուղղագրությանը անդրադարձել են Մխիթարյան միաբանները: 1913 թ. հոկտեմբերի 14-ին հայերեն գրերի գյուտի և տպագրության հոբելյանին նվիրված գիտաժողովում Մանուկ Աբեղյանը ներկայացրել է «Մեր ուղղագրութեան մասին» մի ընդարձակ զեկուցում-ծրագիր, մանրամասն, գիտականորեն հիմնավորված փաստարկներով նշել ուղղագրության փոփոխության սկզբունքները, փոփոխության անհրաժեշտություն:

նը: Զեկուցումը նույն թվականին տպագրվել է «Արարատ» ամսագրի 12-րդ համարում: Տարբեր լեզուներում կատարված բարեփոխումների հիմնական նպատակը հենց ուղղագրությունը պարզեցնելն էր, գրության և հնչյան մեջ հստակություն մտցնելը: Հոդվածագիրը նշում է նաև մի գործը պարտադրանք, որը ո՛չ Աբեղյանը և ո՛չ էլ Աբեղյանի ծրագրի կողմնակիցները չէին կարող հաշվի չառնել: Իշխանության համար առաջնային էր քաղաքական դիրքորոշումը, որը որպես հրահանգ արձանագրված է 1921 թ. Լուսժողկոմիսարիատի հրատարակված ծրագրի առաջաբանում: «Լուսավորական նպատակի և կիրառման միջոցների տեսակետից ուղղագրութեան հարցը քաղաքական հարց է, և հայ լեզվի ուղղագրութեան ռեֆորմի խնդիրը Հայաստանի յեղափոխական իշխանութեան հերթական խնդիրներից մինը»: Ըստ հոդվածագրի՝ ուղղագրության բարեփոխման ծրագիրը գիտականորեն հիմնավորված էր, իսկ որոշ մերժելի դրույթներ՝ պարտադրված: Պետք չէ անտեսել, որ Աբեղյանը հայ իրականության մեջ այն եզակի գիտնականն է, որ սերունդներին է ավանդել գրականագիտական և լեզվաբանական անգնահատելի ժառանգություն՝ աշխարհաբարի ձևաբանության ու շարահյուսության հարցերին վերաբերող ուսումնասիրություններ՝ նոր մեթոդաբանությամբ ու հարցադրումներով, գիտական նոր տերմինների շրջանառությամբ:

Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Ղարաբաղի (Արցախի) բարբառը հայերենի ամենատարածված ու կենսունակ բարբառներից է: Բարբառում գործածվում է 25 հազար բառ, բառային տարբերակներով՝ 40 հազար: Բնականաբար, կան բնիկ հնդեվրոպական ծագում ունեցող բառեր, հին փոխառություններ, որոնք ստուգաբանված են: Գ. Ջահուկյանը ըստ կարելվոյն քննել, ստուգաբանել է հայերենի բոլոր բարբառների հնդեվրոպական ծագում ունեցող բառերը: Հոդվածագիրը կարևոր է համարում հատկապես գրա-

բարում չվկայված հնդեվրոպական արմատների կամ արմատական բառերի դասակարգումը: Նրա հաշվումներով Ղարաբաղի (Արցախի) բարբառում գործածվող հնդեվրոպական ծագում ունեցող մոտ 100 բառ գրաբարում վկայված չեն:

Հոդվածում ստուգաբանվում է Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառ: Բազմաթիվ բառեր դեռ ստուգաբանված չեն: Հայերենի բարբառների հնդեվրոպական ծագում ունեցող բառերի, հին փոխառությունների ստուգաբանությունները, ըստ հոդվածագրի, կարևոր են հայոց լեզվի, նաև հայոց պատմության որոշ իրողություններ լուսաբանելու տեսանկյունից:

Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի (Արցախի) բարբառի գործիական հոլովի շուրջ (հոդված)

Հոդվածում նշվում է, որ Ղարաբաղի (Արցախի) և Մեղրու բարբառներում գործիական հոլովը կազմվում է *-ալ* ձևությամբ: Հոդվածագիրը ներկայացնում է այս յուրահատկության վերաբերյալ մի շարք դիտարկումներ, ըստ որոնց՝ բարբառային *-ալ*-ը հնաբանություն է: Արցախ-Սյունիքի տարածքի բարբառներին հատուկ են տարբեր կարգի հնաբանություններ՝ բնորոշ եզերական բարբառներին:

Հովհաննիսյան Ն., Նորակազմ բայեր ԺԲ.-ԺՁ. դարերից ավանդված ձևազիր բառարաններում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ ըստ միջին գրական հայերենի բառապաշարը քննող, մասնավորապես բառակազմությանն անդրադարձող լեզվաբանների՝ այն «վկայում է գրաբարին անձանոթ բազմաթիվ պարզ բայեր, որոնց մի մասը նորակազմություն է»: Նորակազմ բայը քննելիս կարևորվում է՝ ո՞ր դարից ավանդված ՁԲ-ում է վկայվում. հոդվածում առանձնացվում են ամենավաղ ավանդված գրչագրում առկա բայերը:

Քննվում են նորակազմ *ամեղել, առագրել, բաժամտել, բացառոցել, բացհրել, գենգեզել, թնաձայնել, կոկոպտել, պսպուզել, հակատել, հանգուցել, սոսնձել, հիքել, քքել, մախացող, նկիրացող, աւղապարել* պարզ և բաղադրյալ բայերը:

Քննությամբ պարզվում է, որ ԺԲ.-ԺՁ. դարերից ավանդված՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանի գրչագրերում առկա նորակազմ բայերը վկայում են Երեմիա Մեղրեցու (ԺԷ. դ.), Մխիթար Մեբաստացու (ԺԸ. դ.), Մխիթարյան հայրերի (ԺԹ. դ.) կազմած երկլեզվյան և եռալեզվյան բառարանները, տարբեր ժողովածուներ և քերականական աշխատություններ: Ասել է՝ դրանք գործածել են ժամանակակիցները. ըստ բառարանային տվյալների՝ մի քանիսը պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

Հովհաննիսյան Ն., Հոմանշությունն ըստ միջնադարի հայ քերականների (հոդված)

Հոդվածում ներկայացվում են «Արուեստ Դիոնիսեայ Քերականի» աշխատության հայ մեկնիչներից Գրիգոր Մագիստրոսի, Եսայի Նչեցու, Հովհաննես Երզնկացու, այլև Համամ Արևելցու, Հովհաննես Ծործորեցու, Վարդան Արևելցու, Հովհաննես Քոնեցու, Միմեոն Ջուղայեցու, Բաղդասար Դպիրի, Դավիթ Զեյթունցու մեկնությունները, հոմանշային հարաբերություններին վերաբերող դիտարկումները այդ ժամանակաշրջանում ստեղծված հոմանիշների ձեռագիր բառարանների և բառաշարքերի կազմության սկզբունքները բացահայտելու տեսանկյունից: Նշվում է, որ միջնադարի հայ քերականները *հոմանիշ* հասկացության համար կիրառել են *փաղանուն*-ը՝ մեկնելով այն «ըստ իմաստասիրաց» (փիլիսոփաների) և «ըստ քերթողաց» (քերականների):

Ըստ հոդվածագրի՝ միջնադարի հայ քերականները որոշակիորեն (փոքր-ինչ տարբեր որակումներով) համակարծիք են՝ *փաղանուն* համարելով միևնույն հասկացությունը ցույց տվող, տարբեր արտասանություն ունեցող բառերը: Ասել է՝ հոմանիշ են

դիտվել ու համարվել երևույթը, իրողությունը, առարկան համակողմանի, բազմակողմանի բնութագրող բառերն առանց իմաստային սահմանափակման կամ «իմաստային-գործառական այլեվայլ առնչակցությունների» տարբերակման, եթե համեմատվեն հետագայում առանձնացվող բացարձակ, լրիվ, մասնակի հոմանիշները:

Հովհաննիսյան Ն., Նորակազմ բառեր XII-XIII դարերից ավանդված ձեռագիր բառարաններում (հոդված)

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններն ամփոփված են XII-XVIII դարերից ավանդված ձեռագրերում: Այս ձեռագիր բառարանները քննող Հայկ Ամալյանը նշում է, որ բառարանը «կազմված է 10-11-րդ դարերում»:

Ձեռագրոտողները հավաստում են, որ ձեռագիր բառարանների «մանրագնին ուսումնասիրությունն ի հայտ կբերի բավական նոր բառեր, որոնք ժամանակին գործածական են եղել մեր գրականության ու ժողովրդական խոսվածքի մեջ», հավելելով՝ միջինհայերենյան բնագրերում ավելի շատ են «հանդիպում նորաբնույթ կամ նորակազմ հոմանիշ բառեր»: Ասվածն անվերապահորեն վերագրելի է նաև հոմանիշների՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ներին, որոնցում առկա բառերը կարելի է նորակազմություններ դիտել: Ըստ հոդվածագրի՝ այս ՁԲ-ները չունեն բնագրային օրինակներ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատելու հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ բնագրային օրինակներով, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային անցումները և փոփոխությունները՝ նաև նկատի առնելով հայերենի բառակազմության առանձնահատկությունները: Նորակազմ բառը քննելիս կարևորվում է՝ ո՞ր դարից ավանդված գրչագրում է այն վկայվում: Քննվում են ամենավաղ՝ XII-XIII դարերից ավանդված ձեռագիր բառարանում առ-

կա հետևյալ նորակազմ բաղադրյալ բառերը՝ *գեղասպար, երգաձայն, էապատիւ, հարթաքանդակ, անգուտ, գերամիտ, ծառանոց*։

Քննությամբ պարզվում է, որ XII-XIII դարերից ավանդված՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանում առկա նորակազմ բառերը վկայվում են Եր. Մեղրեցու (XVII դ.), Մխիթար Սեբաստացու (XVIII դ.), Մխիթարյան հայերի (XIX դ.) կազմած երկլեզվյան և եռալեզվյան բառարաններում, տարբեր հեղինակների երկերում և աշխատասիրություններում։ Ասել է՝ դրանք գործածվել են մատենագրության մեջ. ըստ բառարանային տվյալների, *էապատիւ*-ից բացի, առանձնացված բառերը պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում։

Մխիթարյան Գ., Գոյականի սեռի քերականական կարգին առնչվող իրողություններ հայերենում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ գոյականի սեռի քերականական կարգը հայերենին բնորոշ չէ, սակայն իբրև հնդեվրոպական լեզու հայերենը պետք է որ այն ժառանգեր նախալեզվից։ Այս քերականական կարգը բնորոշ է հնդեվրոպական շատ լեզուների, և այսօր էլ դրսևորվում է ինչպես երեք (արական, իգական, չեզոք), այնպես էլ երկու (արական, իգական) սեռերով։ Հետազոտողները նշում են, որ հնդեվրոպական նախալեզվում սեռը միանգամայն հասկանալի էր խոսողի համար, և կարիք չկար այն արտահայտելու որևէ նըշանով կամ վերջավորությամբ։ Սեռերի տարանջատումը (կինտղամարդ, տղա-աղջիկ, արու-էգ) բնորոշ է մարդկության զարգացման ավելի ուշ շրջանի։

Գոյականի սեռի կարգը հետազոտողներին հետաքրքրում է հատկապես այն տեսանկյունից, թե ինչպես է այն անդրադառնում ճանաչողության վրա, այսինքն՝ սեռի վերագրումը գոյականին կամայական կամ տարերային բնույթ ունի՝, թե՛ պայմանավորված է ինչ-ինչ հատկանիշներով։ Եվ արդյոք գոյականի այս կամ այն սեռին պատկանելն ազդում է իրերի մասին ունեցած մարդկանց պատկերացումների վրա։ Գոյականի քերականական սեռի և ճա-

նաչաղության հարաբերությունը, ըստ հողվածագրի, պայմանավորված է լեզուներում և մշակույթներում բնական ու քերականական սեռերի վերաբերյալ պատկերացումների բարդ ու բազմակողմանի կապերով: Որքան էլ անտրամաբանական թվա անշունչ առարկային սեռի կարգի վերագրումը, այնուամենայնիվ չի բացառվում, որ նախալեզվում կարող էին լինել ինչ-որ հիմնավորումներ, որոնք աշխարհի գերբնական կամ միստիկ ընկալման համակարգում ունեին որոշակի տրամաբանություն, որը հետո մոռացվել կամ անհետացել է:

Հողվածագիրը նշում է, որ քերականական կարգերը առանձին կամ տարանջատված իրողություններ չեն, այլ պայմանավորված են մեր ճանաչողությամբ և ազդում են տվյալ առարկայի մասին մեր ունեցած պատկերացումների վրա: Գոյականի սեռի քերականական կարգի հետազոտությունը կարևոր է ոչ միայն լեզվական նյութի քննության տեսակետից: Լեզուն մարդու իմացական-հասկացական գործունեության ամենաբնորոշ դրսևորումներից է, ուստի և լեզվական միավորների ուսումնասիրության հատկապես *ճանաչողական* մոտեցումները հնարավորություն են ընձեռում պարզելու, թե մարդն ինչպես է բացահայտում իրեն շրջապատող աշխարհը, ինչ սկզբունքներով է համակարգում տարբեր առարկաների տարաբնույթ կապերին ու փոխհարաբերություններին վերաբերող իրողությունները: Արդի ժամանակներում գոյականի սեռի քերականական կարգին վերաբերող հետազոտությունները բավականին շատ են, դրանք կրում են հիմնականում «գենդերային» անվանումը:

